



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.....	1
ԽՍԲԱԳՐԱԿԱՆ.....	2
Ինքնազստման պահանջները ԿԱՌԱՎՈՒ ՊԱՆԵ.....	2
ՀԱՐՑԱԶՐՈՅՑ.....	4
ՀԱՐՑԱԶՐՈՅՑԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԷՁԵՐԸ՝ ՍՏՈՐԵՒ.....	4
ԿԻՊՐԱՀԱՅ.....	8
ՈԳԵԿՈՉՈՒՄ ԿԱՐԱՊԵՏ ԵՒ ԳՐԻԳՈՐ ՄԵԼԳՈՆԵԱՆ ԲԱՐԵՐԱՐՆԵՐՈՒ ԱՆՄԱՀ ՅԻՇԱՍԱԿԻՆ.....	8
ՍԱՐԿԱԲԱԳ ԴՈԿՏ. ՀԱՅԿ ԻԻԹԻՎՃԵԱՆԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ.....	10
ԾԱՆՈՒՑՈՒՄ - ՀՐԱԻՐԱԳԻՐ.....	11
ՅՕԴՈՒԱԾՆԵՐ.....	12
ՍՈՒՐԻՈՅ ՎՐԱՅՈՎ ՔԱԹԱՐԷՆ ԹՈՒՐՔԻԱ ԵՐԿԱՐՈՂ ԿԱԶՄԱՐ ԽՈՂՈՎԱԿԻ ԾՐԱԳՐԻՆ ՎԵՐԱԾԱՐԾՈՒՄԸ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՏԱՂԻ ՀԱՆՔԵՐԸ.....	12
ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԹՆՃՈՒԿ.....	14
ՄԵԾ ԵՒ ԽՈՐ ԽԱԲԿԱՆՔ՝ ԼԱԻԱՏԵՍՈՒԹԻՒՆԸ.....	14
(ԿԱՅ ԹԷ ԶԿԱՅ. ՈՒՆԻՆՔ ԹԷ ՈՉ).....	14
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈՎՈՒՄՆԵՐՈՒ ՇՐՋԱՆԻՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԵՐԿՈՒ ՆՈՐ ԳԻՐՔ «ՄԱՅՐԵՆԻ» ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵՆԷՆ.....	18
ՊԱՍՄԱԲԱՆ ԴՈԿՏ. ՍԵՂԱ ՊԱՐՍՈՒՄԵԱՆ-ՏԱՏՈՅԵԱՆԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՄՏՔԻ ԵՒ ՀԱՅ-ԻՍԼԱՄԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆՑ ՈՒՍՈՒՄՆԱՄԻՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ.....	20
ԱԼԻԵՆԵՐԸ ԼՈՆՏՈՆԻ ՄԷՋ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ ԵՆ ԲԱԶՄԱԹԻ ԾԷՆՔԵՐՈՒ՝ ՀԱՐԻՐԱԽՈՐ ՄԻԼԻՈՆ ՏՈԼԱՐՆԵՐ ԱՐԺՈՂՈՒԹԵԱՄԲ.....	23
ՏԵՍԱԿԷՏ.....	26
ՈՒՐ ԿԵՐԹԱՆՔ.....	26
ՄԻՆՉ ՍՈՒՐԻԱՆ ԱՍՊԱՏԱԿԻ ՍՊԱՌՆԱԼԻՔԻ ՏԱԿ.....	30
ՀԱԼԷՊԱՀԱՅՈՒԹԻՒՆԸ ՎՃՌԱԿԱՍՕՐԷՆ ԿԸ ՏՈԿԱՅ.....	30
ԱՐԺԵԳԻՆ.....	33
ՏԵՍԱԴԱՇՏ.....	34
ՁԱՅՆ ԲԱԶՄԱՅ՝ ՁԱՅՆ ԱՍՏՈՒԾՈ՞Յ.....	34
ԵՐԲ ՄՇՈՒՇԸ ՓԱՐԱՏԻ.....	36
ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ.....	38
ՓՈՒՆՋ ՍԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷ.....	38
ԳԻՐԻ ԵՒ ԳԻՐՔԻ ՄԻՐԱՀԱՐԸ՝ ՅՈՎՍԷՓ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ.....	42
ԿՂՁԻ՝ ԿՂՁԻՒ ՄԷՋ.....	44
ԼԵՋՈՒԱԿԱՆ ՀՆՆՈՒՔՆԵՐ.....	46



ՕՐԵՐԸ ՓՈԽՈՒԱԾ ԵՆ, ՏՂԱՄՍ	48
ԱԿՆԹԱՐԹՆԵՐ	49
ՔԱՌԵԱԿՆԵՐ.....	52

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԻՆՔՆԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ՄԵՆՔ ԴԱՌՆԱԼՈՒ ՊԱՀՆ Է



Ամբողջ աշխարհը կ'ապրի բախտորոշ օրեր: Մէկ օրէն միւսը, բնական թէ այլ արհաւիրքներ կը պատահին, քառասային իրավիճակներ կը ստեղծուին...: Մէկ օրէն միւսը, ժողովուրդներ բռնի կը հայրենահանուին կամ կը տեղահանուին իրենց բնիկ օրրաններէն եւ կը յանձնուին անյայտութեան...Վաղուան անորոշութիւնը կը տագնապեցնէ բոլորը: Աշխարհի մեծերը, աշխարհի ժողովուրդները, մեծաւ մասամբ, անտարբեր են այս ահաւոր աղէտին, աղէտներուն, կարծես ըլլային լուռ

դիտորդները համատարած կործանումներու, կազմաքանդումներու, մահասփիւռ աւերներու...: Ո՛ր կ'երթայ աշխարհը այսպէս:

Այս ամբողջ համապատկերին մէջ, մեր երկիրը եւ աշխարհասփիւռ հայութիւնը նոյնպէս կ'ապրին անստոյգ օրեր: Որո՞ն կամ որո՞նց հոգը եղաւ երբ մեր բազմադարեան հայրենի բնօրրանի՝ Արցախի 120,000 հայերը բռնի տեղահանուեցան իրենց պապենական հողերէն: Որո՞ն կամ որո՞նց խիղճը տագնապեցաւ, երբ Մերձաւոր Արեւելքի բարբախտն սիրտը՝ Սուրիան ինկաւ յանկարծօրէն: Ի՞նչ կրցան ընել գերհզօր ոյժերը երբ Կազան ամիսներ շարունակ կը հրթիռակոծուէր, չխնայելով մանուկ ու ծեր, կին թէ երեխայ, մահ ու սարսափ տարածելով ամէնուր: Ո՞վ ի՞նչ ըրաւ օգնութեան հասնելու Լիբանանի աղէտեալներուն: Ուքրանիան տակաւին կը շարունակէ արիւնիլ...Եւ այսպէս շարունակ:

Արիւնահեղութիւնները, մահասփիւռ, կորստաբեր պատուհասները կը շարունակուին անխափան ու անարգել քիչ մը ամէն տեղ եւ մեծաւ մասամբ մարդ արարածներու ձեռամբ: Տուժողը համայն մարդկութիւնն է, որ կարծէք բռնուած ըլլայ ԻՆՔՆԱՌՉՆՉԱՑՄԱՆ ախտէ:

Անգամ մը եւս իրաւունքին ոյժը կը նահանջէ բիրտ ոյժի իրաւունքին դիմաց, որուն նեցուկ ու թիկունք են՝ թաքուն թէ բացայայտ, ժողովրդավարութիւն եւ մարդկային իրաւունքներ քարոզող պետութիւնները ցաւօք: Անգամ մը եւս տխուր ակննատեսը կ'ըլլանք դարերու փորձը բռնած Մաքիավելեան սկզբունքին: Այն սկզբունքին՝ որ կը յուշէ թէ սեփական



քաղաքական-տնտեսական շահն է գերիվեր բոլոր բարոյական ու մարդկային իրաւունքներէ եւ արժէքներէ:

Մարդկային ԲԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ձայնը լռած կը թուի ըլլալ:

Իսկ յանցագործ Ալիեւը՝ կլլելէ ետք Արցախը եւ զաւթելէ ետք մեր ինքնիշխան երկրի տարածքէն հարիւրաւոր քիլոմէթրեր, գերեվարեալ պահելով յայտնի հայեր թէ անյայտ կորածներ, դեռ կը խօսի շարունակական զիջումներու մասին, Երեւանը կը յայտարարէ «Իրիւան», Սեւանայ լիճը՝ «Կէոքճէ», Հայաստանի Հանրապետութիւնը՝ «Արեւմտեան Ատրպէյճան» եւ կը սպառնայ իւրացնել Սիւնիքն ու Զանգեզուրը: Ախորժակը ուտելով կը բացուի, իսկ Ալիեւի ախորժակը անյագուրդ է, քաջալերանքովը իր աւագ եղբօր՝ Էրտողանի եւ այլոց: Նոյնիսկ «Խաղաղութեան պայմանագիր»ը, առանց անվտանգութեան յստակ երաշխիքներու, թղթեայ շերտի է լոկ, որ կրնայ դիւրաւ բեկանուիլ ու դէն շարտուիլ Ալիեւի կողմէ նորանոր զիջումներ կորզելու համար Հայաստանի Հանրապետութենէն, ընդհուպ մինչեւ մեր երկրի ամբողջական ոչնչացումը:

Կործանարար եւ իրերայաջորդ աղէտներուն դիմաց, մի բուն հայութիւնը քով-քովի գալու, գլուխ-գլխի տալու անյետաձգելի հրամայականին առջեւ է: Մենք պիտի չունենանք բաժանարար գիծեր՝ Հայաստանցի, Արցախցի, Սփիւռքահայ...կամ հարիւրաւոր կուսակցութիւններ: Մենք պիտի չունենանք ներազգային պառակտումներ: ՄԵՐ ՅԱԻՐ ՄԷԿ Է: Մեր հաւաքական մարմնին հասցուած որեւէ վերք կը վիրաւորէ ու կը մղկտացնէ մեզ բոլորս՝ որպէս ՄԷԿ ԺՈՂՈՎՈՒՐԴ, ՄԷԿ ԱԶԳ, ՄԷԿ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀԱՅՈՒԹԻՒՆ, որ ունի ՄԷԿ ԱԶԳԱՅԻՆ ՈԳԻ, ՄԷԿ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ: Գոյութեանական այս հրատապ խնդիրը վեր է բոլոր կուսակցութիւններէն, յարանուանութիւններէն, հատուածներէն ու խմբակցութիւններէն:

Ան կը վերաբերի ԲՈՒՆՈՒՄ՝ որպէս ՄԷԿ ՀԱՅՈՒԹԻՒՆ:

Համայն հայութեան բոլոր ՄԵԾԵՐԸ անյապաղ քով-քովի գալու են՝ քննարկելու, մշակելու ԱԶԳԻ ու ՀԱՅՐԵՆԻՔԻ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ եւ անկէ բխող ՄԱՐՄԻՆ կամ ԽՈՐՀՈՒՐԴ մը գոյացնել:

ՄԵԾԵՐ ըսելով՝ կը հասկնամ ՀՀ ընտրուած իշխանութիւնները, համայն հայութեան հոգեւոր պետերը, կուսակցութեանց եւ միութեանց ներկայացուցիչները եւ բոլոր այն կարեւոր հայ անձնատրութիւնները, որոնց խօսքը ծանրակշիռ հեղինակութիւն ու վարկ ունի:

Այս ՀԱՄԱԺՈՂՈՎԸ ձեւական կամ ցուցադրական բնոյթ պէտք չէ ունենայ, այլ պէտք է իրապէս ծառայէ իր բուն ԳԵՐՆՊԱՏԱԿԻՆ՝ ՀԱՅՈՑ ԵՐԿՐԻ, ՀԱՅՈՒԹԵԱՆ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ եւ հուսկ կենսագործման:

Մարդարապատեան օրեր կ'ապրինք: Դանակը հասած է ոսկորին՝ ժողովրդական լեզուով ըսած: Որո՞ւն կը սպասենք:

ՄԵՆՔ եւ միայն ՄԵՆՔ կրնանք փրկել մեզ, հաւաքագրելով մեր ամբողջ ներոյժը կամ կարողականութիւնը՝ մտքի, խելքի, կամքի եւ անշուշտ նիւթական եւ այլ միջոցներու:



Ո՛չ խաղաղութեան պայմանագիրը, ո՛չ մարդկային իրաւունքներու մասին բարբաջանքները, ո՛չ ալ ժողովրդավարական արժէքները կրնան փրկել մեզ, եթէ մենք չենք ՄԵՆՔԱՑԱԾ, բառիս ամբողջական իմաստով: ԻՆՔՆԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ՄԵՆՔԸ հրաշքներ կրնայ գործել: Մենք՝ ամբողջ հայութիւնը, կը գտնուի այդ ԻՆՔՆԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ՄԵՆՔՐ կեանքի կոչելու հրամայականին առջեւ:

Սարդարապատեան զանգերը կը դողանջեն: «Սերունդներ դուք ձեզ ճանաչեք Սարդարապատից»: Այս խորունկ ԻՆՔՆԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ, ՀԱԻԱՔԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ, ՀԱԻԱՔԱԿԱՆ ՅԱՆՁՆԱՌՈՒԹԵԱՆ վճռական պահն է:

ԱՍՏՈՒԱԾ ԸԼԼԱՅ ՄԵԶԻ ՊԱՀԱՊԱՆ:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

«ՊՐԵՍՍԻՆԳ» Ի ՀԱՂՈՐԴԱՇԱՐՈՒՄ ՍԱԹԻԿ ՄԵՅՐԱՆԵԱՆԻ ՀԻՒՐՆ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ, ԴՈԿՏ. ՓՐՈՖ. ԹՈՒՐՔԱԳԷՏ ՌՈՒԲԷՆ ՍԱՖՐԱՍՏԵԱՆՆ Է:

ՀԱՐՑԱԶՐՈՅՑԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԷԶԵՐԸ՝ ՍՏՈՐԵԻ.-



• Սիրիայի շուրջ իրադարձութիւնները հաշուարկի արդիւնք էր: Լուրջ հաշուարկ էր արուել, որը Թուրքիան միայնակ չէր արել, այլ ԱՄՆ-ի հետ: Յունուարի 20-ից յետոյ ԱՄՆ-ում նոր վարչակարգ կը լինի, և Թրամփը վստահաբար չէր ողջունելու այն, ինչ հիմա կատարուեց: Ռուսաստանը և Իրանը զբաղուած են իրենց լուրջ խնդիրներով՝ Ուկրաինայի պատերազմով և Իսրայէլի հետ հակամարտութեամբ, ԱՄՆ-ում մէկ ամսից իշխանութեան է գալու այս

գործողութեանը դէմ վարչակարգ, և իսկական ժամանակն էր Թուրքիայի ու ԱՄՆ ներկայիս վարչակարգի՝ Բայդենի ջանքերը մէկտեղելու: Ճիշտ ժամանակն էր, որը Թուրքիան ձեռքից բաց չէր թողնելու: Ուկրաինացիներն էլ են տեղեակ եղել այս ամէնից, որոշակի մասնակցութիւն ունեցել են, սակայն Ուկրաինայի գործօնը որոշիչ չի եղել:

- Ողջ աշխարհի վերլուծաբանները գլուխ են կոտրում՝ հասկանալու համար՝ ինչո՞ւ չկրուեց սիրիական բանակը: Կարծում են՝ եղել է մեծ կաշառք: Նման մօտեցում Իրաքի հետ կապուած կայ: ԱՄՆ-ը այն ժամանակ Իրաքում էլ հասաւ այն բանին, որ բանակի տարբեր ստորաբաժանումներ չկրուեցին: Նմանատիպ մի բան էլ, կարծում են, Սիրիայում է եղել: Փաստեր չունեն, բայց հակուած են դրան: Կը գայ ժամանակ, որ այդ փաստերն ի յայտ կը գան: Գուցէ որոշ ժամանակ անց Ասադն այդ մասին յայտարարութիւն անի:



- Թուրքերը դժուար են գնում բանակցային գործընթացների: Նրանք սովոր են բիրտ ուժով հասնել իրենց ուզածին: Սա է թուրքական պետական մտածելակերպը՝ զաւթողականությունը:
- Միրիայում հիմնական խաղացողը Թուրքիան է: Իսրայելը կոնկրետ խնդիր է լուծում՝ ոչնչացնել այն զենքը, որն ունեւր Միրիան: Խփում են գործարաններին, ռազմաբազաներին, հետազօտական կենտրոններին, նաւատորմը ոչնչացրեցին: Գրում են, որ Միրիայի զանգուածային ոչնչացման զենքը և զենքի այլ հզօր տեսակներ 80-90%-ով արդէն ոչնչացուած են: Իսրայելը երբեք նման զէնք չի ունեցել, և արաբական աշխարհի ոչ մի երկիր չի ունեցել: Բացի դրանից, Իսրայելը խնդիր է դրել իր համար անվտանգութեան գօտի ստեղծել: Հոլանի բարձունքներն արդէն գրաւել են, ինչի իրաւունքը չունէին, հիմա առաջ են գնում Միրիայի տարածքում:
- Միրիայի արեւելքում հիմա այնպիսի զինուած ջոկատներ կան, որոնք կապուած են Ալ Քաիդայի՝ Իսլամական պետութեան հետ: Դա խնդիր է: Եւ տնտեսական խնդիրներ լուծելու համար պետք է սանձել Միրիան: Թուրքիայի համար դա շատ դժուար լուծելի հարց է: Թուրքիան պետք է ահռելի դիւանագիտական ռեսուրսներդնի, կոմպրոմիսների գնայ, իսկ ես պատահական չասացի, որ Թուրքիան դժուար է գնում կոմպրոմիսների: Թուրքիայի գործելակերպը հարկադրանքն է: Թուրքիան պետք է ուժ կիրառի, որ Միրիայում ստեղծուած քառսը սանձի, իսկ սրա համար ռեսուրս է պետք: Երեկուանից Թուրքիայից լրահոս է գալիս, որ թուրքական զինուած ուժերը հատել են Միրիայի սահմանն ու առաջանում են դէպի երկրի խորքը: Դա չի լինի ամբողջական օկուպացիա, բայց ռազմավարական կարելոր կէտերը կանցնեն Թուրքիայի հսկողութեան տակ: Թուրքիան աշխարհի այն պետութիւններից չէ, որ հեղինակութիւն ունի ու կը կարողանայ կիրառել իր այդ ռեսուրսը: Դրա համար նրա ռեսուրսն ուժն է լինելու: Միրիայում մի քանի միլիոն թուրքախօս մարդ կայ: Դա էլ է ռեսուրս: Կայ նաև փախստականների գործօնը, որոնք պետք է վերադառնան: Ստամբուլում հիմա կան թաղամասեր, որոնք միայն արաբերէն են խօսում, սիրիացիներ են: Ես կասկածում եմ, որ նրանք կը թողնեն Ստամբուլն ու կը գնան Միրիա:
- Միրիայի մասնատումը միանգամայն հաւանական է, բայց խոշոր խաղացողները չեն ցանկանայ Միրիայի մասնատումը: Ես նկատի չունեմ Իրանին ու Ռուսաստանին, բայց մնացած բոլորը երազում են այնպիսի Միրիայի մասին, որը կը լինի միասնական, բայց թոյլ, որ կարողանան կառավարել:
- Անգլիացիները պատրաստուած են իրենց յատուկ նշանակութեան ստորաբաժանումները տեղակայել աշխարհի տարբեր շրջաններում: Պատահական չէ, որ նրանցում ընդգրկուելու համար ոչ թէ անգլիացի սպիտակամորթների են ընդունում, այլ տարբեր ռասաների մարդկանց:
- Արեւմուտքում, ինչպէս ասում են, իւելքն Անգլիայինն է, ուժը՝ Ամերիկայինը: Նրանք միասին են գործում: Մերձաւոր Արեւելքը հանդարտեցնելու ու Արեւմուտքի ազդեցութեան տակ հնարաւորինս պահելու հարցն ընդհանուր արեւմտեան խնդիր է:
- Անգլիայի մօտեցումը Թուրքիայի նկատմամբ 19-րդ դարից ի վեր չի փոխուել: Դա Թուրքիան Ռուսաստանի դէմ օգտագործելու ծրագիրն է:



- Ակնյայտ է, որ աշխարհաքաղաքական և ռազմավարական առումով և՛ Իրանը, և՛ Ռուսաստանը Սիրիայում պարտուեցին: Ռուսաստանը մեծ ֆինանսական միջոցներ էր ծախսել այնտեղ բանակ տեղակայելու, Ասադին աջակցելու, զինելու համար, ինչը հիմա չկայ: Նոյնը վերաբերում է Իրանին: Իրանն իր հսկողութեան տակ կարող է պահել շիա բնակչութեանը, որը Սիրիայում բաւականին մեծ թիւ է կազմում: Բայց Իրանը հիմա այնքան ռեսուրս չունի, որ դա դիտարկի որպէս առաջնահերթութիւն: Ռուսաստանը դեռեւս որոշ ռազմաբազաներ պահում է Սիրիայում, բայց դա ժամանակի հարց է: Կը ստիպեն, իհարկէ ոչ միանգամից, որ դրանք դուրս բերուեն այնտեղից:
- Սիրիայում 50.000 մարդ կայ, որն ունի ՌԴ քաղաքացիութիւն: Տեղեկութիւն կայ, որ նրանց արդէն տարհանում են, ինչպէս որ կայ տեղեկութիւն, որ Իրանն է շիաներին դուրս բերում:
- Ռուսաստանը ԽՍՀՄ չէ, բայց կարողացաւ 2015-16թթ.ռեսուրսները հաւաքել ու Մերձաւոր Արեւելքի տարածաշրջանը պահել իր հսկողութեան տակ: Բայց հիմա Ռուսաստանն այդ հնարաւորութիւնը չունի, և հողի վրայ նրանից ակտիվութիւն սպասել պէտք չէ: Հիմա Սիրիայում Ռուսաստանի հետ հաշուի չեն նստի:
- Եթէ խօսքը գնում է կոմունիկացիաների մասին, տարածաշրջանի, ինչպէս նաեւ Հայաստանի համար կարելու է Մեդրիի երկաթգծի գործարկումը: Այն առաջնային նշանակութիւն ունի, պէտք է ներդրումներ արուեն: Իսկ որ Հարաւային Կովկասը ներկայ փուլում գտնուում է համաշխարհային կառոյցների համակարգերին միանալու ճանապարհի սկզբին, ինձ համար ակնյայտ է:
- Ես չեմ հաւատում, որ 3+3-ն իրականութիւն կը դառնայ: Աստանայի ձեւաչափով 2017-ից սկսած Ռուսաստանը, Իրանը և Թուրքիան ոչ միայն բանակցում էին, այլեւ համաձայնագիր էին կնքել, որը Թուրքիան խախտեց: Թուրքիան Սիրիայում չպահեց պայմանաւորուած ստատուս-քուոն, խախտեց այն: Ես կարծում եմ, որ Հայաստանը պէտք է 3+3-ին մասնակցի, որ տեսնենք՝ ինչ է կատարում այնտեղ: Սա՝ ինչ վերաբերում է ռեգիոնալիզացիային: Իսկ գլոբալիզացիայի տեսանկիւնից կարելու է՝ Պեկին-Լոնդոն ճանապարհը, այն է՝ Եւրոպա-Չինաստան կապը: 3 ճանապարհ կար՝ հիւսիսային՝ Ռուսաստանով, հարաւային՝ Իրանով, և Հարաւային Կովկասով՝ Միջին միջանցքով: Հաւաքական Արեւմուտքը հակուած է պահել Չինաստանի հետ կապի 3-րդ ճանապարհը՝ Միջին միջանցքը, որ Ռուսաստանին ու Իրանին դուրս թողնեն տարածաշրջանային գործընթացներից:
- Ձանգեգուրի միջանցքը դիտարկում է՝ որպէս Միջին միջանցքի 2-րդ ճանապարհ: Եթէ այդ միջանցքը պէտք է գործարկուի, ապա այն պէտք է լինի Հայաստանի վերահսկողութեան ներքոյ:
- Հայ ժողովուրդը չի կարող Արարատից հրաժարուել: Այն մեր ինքնութեան կարելորագոյն սիմվոլներից մէկն է: Առանձին յայտարարութիւնները ոչինչ չեն փոխում:
- Միսլ է Հայոց ցեղասպանութեան ճանաչման հարցը հանել Հայաստանի արտաքին քաղաքական օրակարգից. որքան էլ մենք հիմա հասկանում ենք, որ Հայաստանը



հիմա էքզիստենցիալ խնդիրներ է լուծում, ու ճանաչման հարցը չի կարող առաջ մղել, բայց այդ հարցը պետք է պահել օրակարգում:

- Ինձ համար անընդունելի է Արևմտեան Հայաստանի ու «Արևմտեան Ադրբեջանի» մեջ հաւասարութեան նշան դնելը, որովհետև Արևմտեան Հայաստանը մեր բնօրրանն է: Անգամ միջնադարում Հայաստանը, կորցնելով իր պետականութիւնը, միեւնոյն է, մնում էր գործօն Մերձատր Արեւելքում Արևմտեան Հայաստանի շնորհիւ: Արևմտեան Հայաստանը հայաթափուեց Ցեղասպանութեան արդիւնքում, ինչից յետոյ ստեղծուեց հայկական Սփիւռքը:
- Թուրքիայի և Ադրբեջանի միջեւ տեսլականների տարբերութիւն կայ: Թուրքիայի համար որքան շուտ կնքուի Հայաստանի և Ադրբեջանի միջեւ խաղաղութեան պայմանագիրը, իհարկէ, Ադրբեջանի պայմաններով, այնքան լաւ: Ինչո՞ւ... Որովհետև 44-օրեայ պատերազմից յետոյ մեր տարածաշրջանում իրադրութիւնը փոխուեց. Ռուսաստանը թուլացաւ, թուրքերն ուժեղացան: Դրա համար Թուրքիայի համար կարելու է դա թղթով ֆիքսել: Ադրբեջանի համար իրավիճակն այլ է. նրանք թոյլ Հայաստանից առանց պայմանագրի ցանկանում են պոկել հնարաւորինս շատ բան ու ճնշումն ուժեղացնել Հայաստանի վրայ:
- Ռուս-թուրքական յարաբերութիւնները կարող են վատանալ, բայց պատերազմի մասին խօսելն անիմաստ է, որովհետև երկուսն էլ ունեն ընդհանուր շահեր ու կը փորձեն ամէն ինչ անել՝ դրանից խուսափելու համար:
- Վերջին օրերին Թուրքիայում պաշտօնական տուեալներով՝ յայտնաբերուել է 600 միլիոն դոլարի կեղծ 50 և 100 դոլարանոցներ: Ոչ պաշտօնական տուեալներով՝ 1 միլիարդից ատէլի: Ո՞նց են այդ գումարները յայտնուել Թուրքիայում: Բանկումատներն այնտեղ լաւ չեն աշխատում: Թուրքիան այդքան ուժեղ չէ, որքան ուզում է երեւալ: Փխրուն է նրա տնտեսական-ֆինանսական համակարգը, թշնամիներ ունի, ու Թուրքիան այդքան յիմար չէ, որ գնայ ռուս-թուրքական սրացման: Իրականում Թուրքիան այդքան հզօր պետութիւն չէ. իր ՀՆԱ-ով նա աշխարհի 17-րդ պետութիւնն է:
- Հաքան Ֆիդանը երեւոյթ է, բայց չմոռանանք, որ նա քուրդ է, իսկ որքանով քուրդն ընկալելի կը լինի թուրքական իսթերիշմենթի համար: Այլ հարց է արեւմտեան իսթերիշմենթը:
- Չմոռանանք, որ ռուսական Գլխավոր շտաբի քարտեզներում Թուրքիան նշուում է որպէս Ռուսաստանի հիմնական հակառակորդներից մէկը: Թուրքերին վստահել չի կարելի: Սերժ Սարգսեանն էլ էր յիշեցրել այդ մասին, սակայն նրանց հետ աշխատել պետք է:
- Ռուբէն Ռուբինեանի հանդիպումները թուրք պաշտօնեաների հետ ոչինչ չի փոխում: Ոչ մի գործընթաց տեղի չի ունենում: Դրանք տեղի են ունենում ԱՄՆ-ի համար, որ տեսէք՝ ինչ-որ բան անում ենք: Թուրքիան միանգամից չի գնայ հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման, եթէ անգամ ինչ-որ թուղթ ստորագրուի: Ինչ-որ բան կը պահեն Հայաստանի վրայ ճնշում գործադրելու համար:



- Աշխարհում մի երկիր կայ, որ ԱՄՆ-ից անվտանգութեան լիակատար երաշխիքներ է ստացել: Դա Իսրայէլն է: Ուրիշ ոչ մի երկիր այդ ծաւալի երաշխիք չի ստանում ու չի էլ ստանալու: Հայաստանը որեւէ երաշխիք չի ստանալու ԱՄՆ-ից:
- Մեր անվտանգութեան գարանտը Ռուսաստանն է՝ իր բոլոր բարդութիւններով: Սա չպէտք է մոռանալ ու չպէտք է սրել յարաբերութիւնները Ռուսաստանի հետ: Պէտք է խուսափել Ռուսաստանի բացասական արձագանգից. իսկ դա կը լինի, երբ ՀԱՊԿ-ից դուրս գանք: Իսկ ի՞նչ ենք մենք ստանալու դրա փոխարէն Արեւմուտքից: Արեւմուտքն ասում է՝ մի շտապէք:
- 2018թ. Հայաստանում տեղի ունեցածը՝ յեղափոխութիւնը, կարծում եմ, Ռուսաստանի թոյլտուութեամբ էր: Կային այդ շարժման մէջ ներգրաւուած պրոարեւմտեան ուժեր, բայց եթէ Ռուսաստանը դրան դէմ լինէր, այդ ամէնը չէր լինի:
- Ամէն դէպքում մեր ժողովրդի պատմական յիշողութիւնը թոյլ չի տայ, որ մենք յայտնուենք վտանգի մէջ: Մենք մեր ինքնութիւնը պէտք է լաւ հասկանանք ու աւելի ուժեղացնենք: Մենք աշխարհին հետաքրքիր ենք մեր ինքնութեան վրայ հիմնուած արտաքին քաղաքականութեամբ:
- 12/12/2024

ԿԻՊՐԱՀԱՅ

ՈԳԵԿՈՉՈՒՄ ԿԱՐԱՊԵՏ ԵՒ ԳՐԻԳՈՐ ՄԵԼԳՈՆԵԱՆ ԲԱՐԵՐԱՐՆԵՐՈՒ ԱՆՄԱՀ ՅԻՇԱՏԱԿԻՆ



Տարեկան սրբազան աւանդութեամբ, Ս. Յովհաննու Կարապետի Տօնին՝ Կիրակի 12 Յունուար, 2025-ի առաւօտեան, Նիկոսիոյ Ս. Աստուածածին Մայր եկեղեցոյ մէջ, յետ-Պատարագի, Հոգեհանգստեան Պաշտօն կատարուեցաւ՝ Մելգոնեան անմահ բարերարներ՝ աղա Կարապետ եւ աղա Գրիգոր Մելգոնեաններու հոգւոց համար, նախագահութեամբ Գերաշնորհ Տէր Կոմիտաս Արք. Օհանեանի: Իսկ Պատարագէն ետք Սրբազան Հայրը Հոգեհանգստեան Աղօթք կատարեց Մելգոնեան Կրթական Հաստատութեան համալիրին մէջ



գտնուող գոյց բարերարներու դամբարանին առջեւ եւ իր հայրական խօսքը ուղղեց համախմբուած Մելգոնեանի Մանուց Միութեան անդամներուն: Ներկայ էին Պետական Ներկ. Տէր եւ Տիկ. Վարդգէս Մահտեսեան, Նարեկ վարժարաններու Հոգաբարձութեան Ատենապետը եւ երեք ու կրտսեր մելգոնեանցիներ եւ բարեկամներ:

Հ.Բ.Ը.Մ. Նիկոսիոյ Մասնաժողովին կողմէ խօսք առաւ վարչական Տիկ. Նաթալի Կոստանեան, նշելով որ արդէն քսան տարի անցեր են այն թուականէն երբ փակուեցաւ Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը: Մելգոնեանցի Տիկ. Լորա Ատուրեան ապրումով արտասանեց Երան Գույումճեանի «Մելգոնեան Անմահ Բարերարներու Յիշատակին» բանաստեղծութիւնը: Բովանդակալից խօսքով հանդէս եկաւ Թեմիս Կաթ. Փոխ. Տէր Կոմիտաս Արքեպիսկոպոսը, որ յատկապէս անդրադարձաւ այն փաստին որ շուրջ 100 տարիներ առաջ, սերունդներու դաստիարակութիւնը ամենէն կարելորը համարող Մելգոնեան եղբայրները եղան գործքով նաեւ իրաւ հայրենասէրները՝ հայ ժողովուրդի մնացորդացին համար, անտէր, անտիրական որբերուն հայր եղան եւ այս հողին վրայ հաստատեցին հայ մշակոյթի մեծ օճախ Մելգոնեան կրթարանը: Ան նշեց որ Կարապետ Մելգոնեան իր քսակը լայն բացաւ եւ օգնութեան ձեռք երկարեց նաեւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքի ծրագրին, հանդիսանալով Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքի առաջին բարերարը: Մելգոնեան եղբայրները, շարունակեց արքեպիսկոպոսը, կենաց ջուր մատակարարեցին հայ ժողովուրդին, օգնելով անոր վերականգնման աշխատանքներուն: Նոյն ազգակերտ վարքագիծը ցուցաբերեց նաեւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը: Ան ընդգծեց. «Հետեւաբար, այս հողը որ իր գրկին մէջ ունի մարմինը այս մեծ հայորդիներուն, ուխտավայր մըն է ցեղասպանութեան, յարութեան կոթող մը, որ իրականութիւն դարձաւ Մելգոնեան եղբայրներու տեսիլքով եւ անոնց հաստատած յարութեան խորհրդանշան այսօր հաստատութեամբ»: Ան Հաստատութեան գոյառումը համարժէք համարեց 5-րդ դարու Հայ Գիրերու Գիւտին, հայ դպրոցներու բացումին, հայ մշակոյթի ծաղկումին..., որոնք մեր գոյապայքարի գլխաւոր զենքերն են: Նկատի ունենալով պատերազմներն ու քաղաքական տեղաշարժները, Գերաշնորհ Սրբազան Հայրը ըսաւ, թէ ո՞վ կրնայ գիտնալ թէ օր մը այս Հաստատութեան դռները ԱՆՀՐԱԺԵՇՏՕՐԷՆ կրնան վերաբացուիլ եւ Մելգոնեան եղբայրներու այս ուսումնական կեդրոնը դարձեալ կրնայ կեանքի կոչուիլ...«Հարկ է վերականգնել այս օճախը, այս ուխտավայրը: Այս է իմ պատգամը Մելգոնեանականներուն.. որպէս համահայկական, համազգային անհրաժեշտութիւն» եզրափակեց ան նշանակալից կերպով: «Յիշատակը Կարապետ եւ Գրիգոր Մելգոնեաններուն յաւէտ օրհնեալ ըլլայ: Ամէն»:

Ապա տուտուկահար Պրն. Արմէն Մկրտչեան «Տիւ Եաման»ի թախծալի եղանակը հնչեցուց իր տուտուկին վրայ, յուզաթաթաւ ու տրտմանոյշ:

Փառք ու խոնարհում Մելգոնեան եղբայրներու անմահ յիշատակին:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի: Ամէն:

Ե.Գ.

ՍԱՐԿԱԻԱԳ ԴՈԿՏ. ՀԱՅԿ ԻՒԹԻՒՃԵԱՆԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ



Չորեքշաբթի, 15 Յունուար 2025ին ժամը 19:00-ին, Ազգային Առաջնորդարանի Վահրամ Իւթիւճեան սրահին մէջ բովանդակալից դասախօսութեամբ մը հանդէս եկաւ Սարկաւազ Դոկտ. Հայկ Իւթիւճեան, նիւթ ունենալով՝ «Ճրագացն Օրհնութեան «Լոյս Ջուարթ» Բնագիրներ եւ եղանակներ»: Ձեռնարկը կը վայելէր Հովանաւորութիւնը Թեմիս Կաթ. Փոխ. Գերաշնորհ Տ. Կոմիտաս Արք. Օհանեանի եւ կազմակերպուած էր կղզիիս Ազգային Իշխանութեան կողմէ:

Բացման խօսքով հանդէս եկաւ Սրբազան Հայրը, որ բարձրօրէն գնահատեց աւագ սարկաւազ Իւթիւճեանը որպէս դասախօս, խմբավար, հետազօտող, բայց մասնաւորաբար մեր հարուստ

շարականներու ուսումնասիրման աշխատանքին մէջ իր ներդրումով, մեր շարականները նմանցընելով մեծ ովկէանոսի մը, որուն մէջ արդէն հմտօրէն կը նաւարկէր յարգելի սարկաւազը:

Դասախօսութիւնը տրուեցաւ Հայերէնով՝ ճոխացեալ երաժշտական օրինակներու երգուած նմոյշներով, ձեռագիրներու նկարներով, պատմական թողարկումներով եւ սահիկներով:

Նշենք որ Հայկ սարկաւազ Իւթիւճեան փիլիսոփայութեան դոկտոր, ասպարէզով նուագավար, երգչախմբավար է եւ երաժշտագէտ եւ նոյն ատեն՝ Հայաստանեայց Առաքելական Ուղղափառ Ս. Եկեղեցւոյ աւագ սարկաւազ: Հեղինակն է շարք մը մասնագիտական ուսումնասիրութեանց եւ հատորներու: Պարգեւատրուած է Հայաստանի Սփիւռքի նախարարութեան «Կոմիտաս», Հայաստանի Ազգային Գրադարանի «Յակոբ Մեղապարտ» եւ Համազգային Կրթական, Մշակութային Միութեանց «Արժանեաց» շքանշաններով:

«ԼՈՅՍ ԶՈՒԱՐԹ»ը հայ քրիստոնէայ հաւատացեալներու ամենէն սիրելի երգերէն մէկն է, նշեց յարգելի դասախօսը: Անիկա կը հնչէ ամէն Շաբաթ երեկոյեան, կիրակամուտի ժամերգութեան, ինչպէս նաեւ՝ Տեառնընդառաջի նախատօնակին ընթացքին եւ Աւագ Ուրբաթի Թաղման Կարգին: Բառերով եւ երաժշտութեամբ՝ արտասովոր յուզականութեամբ եւ խորհրդաւորութեամբ մը օժտուած է ան, շէշտեց յարգարժան Սարկաւազը, որ այս երգին Հայերէն բնագիրներուն տարբերակները ներկայացուց՝ միջնադարեան իսազգրութիւններով հանդերձ եւ մեզի հասած եղանակներուն հարուստ գանձարանը: Այդ գանձարանին նմոյշներէն մէկն ալ ներկայացուց Տէր Կոմիտաս արքեպիսկոպոսը, զայն երգելով իր գեղեցիկ ձայնով: Քննուեցան նաեւ Յունական աւանդութեան հետ առնչութիւններ եւ անկէ որոշ գանազանութիւններ: Դոկտ. Իւթիւճեան յատկապէս շէշտեց այն հանգամանքը, որ եթէ մեր հոգեւոր Հայրերը «Լոյս Ջուարթ»ի փոխառութիւն ըրած են Յունարէնէ, ինչ որ բնական երեւոյթ է, զայն անպայմանօրէն հայացուցած են, համահունչ մեր լեզուին ու երգեցողութեան:


Ներկաները ուշի-ուշով հետեւեցան բացառիկ այս դասախօսութեան, որուն վերջաւորութեան Տէր Կոմիտաս արքեպիսկոպոսի բերնով արտասանուած ողջոյնի խօսքին կը միանան



վստահաբար, սրտանց շնորհատրելով բազմաշնորհ ու բազմատաղանդ շարականագետն ու երաժշտագետը, հետազոտողն ու բանասէրը, մաղթելով որ ան նուաճէ նորանոր բարձունքներ յատկապէս շարականներու մեր հարուստ գանձարանի հետազոտման ծիրին մէջ:

Ե.Գ.

ԾԱՆՈՒՑՈՒՄ - ՀՐԱԻՒՐԱԳԻՐ



ՇՆՈՐՀԱՆԴԷՍ

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԻ «ՄԻՐԱՆԻ ԼՈՅՍ» ԺՈՂՈՎԱԾՈՒԻՆ

ՀՈՎԱՆԱԻՈՐՈՒԹԵԱՄԲ

ԹԵՄԻՍ ԿԱԹ. ՓՈԽ. ԳԵՐԱՇՆՈՐՀ ՏԷՐ ԿՈՄԻՏԱՍ ԱՐՔ. ՕԶԱՆԵԱՆԻ

ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՄԲ

ՀԱՄԱՅՆՔԻՍ ՊԵՏ. ՆԵՐԿ. ՏԻԱՐ ՎԱՐԴԳԷՍ ՄԱՀՏԵՍԵԱՆԻ

ՏԵՂԻ Կ՝ՈՒՆԵՆԱՅ ՇԱԲԱԹ, 22 ՓԵՏՏՈՒԱՐ 2025-ԻՆ, ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԸ 7:00-ԻՆ,

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ «ՎԱՀՐԱՍ ԻԻԹԻԻՃԵԱՆ» ՍՐԱՀԻՆ ՄԷՋ:

ՍԻՐԱԼԻՐ ՀՐԱԻՔԻՐ ԲՈԼՈՐԻՆ:



ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՍՈՒՐԻՈՅ ՎՐԱՅՈՎ ՔԱԹԱՐԷՆ ԹՈՒՐՔԻԱ ԵՐԿԱՐՈՂ ԿԱԶՄԱՐ ԽՈՂՈՎԱԿԻ ԾՐԱԳՐԻՆ ՎԵՐԱՐԾԱՐԾՈՒՄԸ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՏԱՂԻ ՀԱՆՔԵՐԸ

Յարութիւն Իսկահատեան-Պէրոյթ



Քանի մը տասնեակ տարիներէ ի վեր Արեւմուտքն ու Իսրայէլ կը ջանան տկարացնել Ռուսաստանի Դաշնութիւնը: Անոնք գործակալ լծակներու միջոցով յաջողեցան վերջ դնել Խորհրդային Միութեան գոյութեան եւ ապա անցան Ռուսիոյ վնասելու գործին, զանազան կարելի ձեւերով:

Սուրիոյ նախագահ Պաշշար Ասատի անկումէն առաջ, Երոպայի կազ ու քարիւղ վաճառելու գործարքի նկատմամբ Ռուսիոյ

շահերը հարուածելու միտումով, Արաբական Ծոցի երկիրներէն Քաթար Արեւմուտքի դրոյումով առաջարկեց կազատար խողովակագիծի մը կառուցման ծրագիրը, որ քաթարեան կազը պիտի տաներ մինչեւ Երոպա, որ մինչ այժմ Ռուսաստանէն կը գնէ բնական կազը: Այս կազատար գիծը կ'առաջարկուի սկսիլ Քաթարէն, անցնելով Սէուտական Արաբիայէն, Յորդանանէն, Սուրիայէն ու հասնելով Թուրքիոյ ծովեզերքը, հոնկէ ալ դրկուելու համար դէպի Երոպական երկիրներ (Համացանցային Կայքէջ https://en.wikipedia.org/wiki/Qatar%E2%80%93Turkey_pipeline):

2009-ին այս ծրագրին դէմ կեցած էր Պաշշար Ասատ, պաշտպանելով իրեն դաշնակից Ռուսիոյ տնտեսական շահերը: Ռուսիա եւ իր դաշնակիցները Արեւմուտքի ծրագրին դէմ առաջադրեցին Իրանէն եկող եւ Իրաքէն, Սուրիայէն ու Լիբանանէն անցնող կազատար խողովակի գիծի մը ծրագիրը, որուն մէջ Ռուսիա Իրանի աջակցութեամբ տնտեսական շահ պիտի ապահովէր իրեն համար:

Իբրեւ արդիւնք Ծոցի երկիրներու եւ անոնց դաշնակից Արեւմուտքի սրուած ախորժակներու եւ հակառակորդը ցուցնելու սուր տենչին, ինչպէս նաեւ լուսազոյն ձեւով վնասելու ռուսական ու իրանեան շահերուն՝ ի խնդիր սեփական յաւելեալ մենատիրութեան, երեւան եկան Քաթարէն սկսող եւ Թուրքիա հասնող կազատար խողովակագիծի ծրագիրներու քանի մը տարբերակներ:

Սուրիոյ 61 տարուան Պաասական վարչակարգի փլուզմամբ, Քաթարի բնական կազի խողովակագիծի ծրագիրը կրկին հրապարակ ելաւ: Ինչպէս նշուեցաւ այս ծրագիրը նախապէս մերժուած էր Պաշշար Ասատի կողմէ եւ լուսանցքի վրայ անցուած: 2009-ին Քաթարի օրուան իշխանը Շէյխ Համատ Պըն Խալիֆա Ալ Թանի ըսած էր. «Անձկութեամբ կ'ակնկալենք կազի խողովակի գիծի մը կառուցումը Քաթարէն Թուրքիա»:

Քաթարի առաջարկած կազի գիծին ընդհանուր ծախսը մօտ 10 միլիար տոլար է, իսկ գիծին երկարութիւնը 1500 քմ., որ պիտի սկսէր Քաթարէն եւ վերջանար Թուրքիոյ նաւահանգիստներէն մէկուն մէջ, ուրկէ պիտի բաշխուէր երոպական զանազան երկիրներ: Գիծին մեկնակէտ աղբիւրը՝ քաթարեան Հարաւային Փարս- Հիւսիսային Գմբէթ (South Pars/North Dome field) կոչուած նաւթահորէն է ու կ'երկարի մինչեւ Երոպա:



Ըստ «Օյլ Էնտ Կէզ» լրագրին, 1 Յունուար 2011-ին Արաբական Օոցի մէջ Քաթարի բնական կազի պահեստները 896 թրիլիոն խոռանարդ ոտք հաշուած են, որ կը հասնի աշխարհի պահեստներուն 14 առ հարիւրին: Քաթար աշխարհի երրորդ մեծագոյն պահեստը ունի բնական կազի մէջ:

Թուրքիոյ ուժանիւթի նախարար Ալիարսլան Պայրագտար հասատատեց, որ իրենք շահագրգռուած են Սուրիոյ մէջ ուժանիւթի միջոցներու ներդրումներով, հիմա որ Ասատ հեռացած է եւ Սուրիա կայունութիւն եւ միութիւն կը վայելէ, ըստ թուրք նախարարին:

Բնական Կազի դէպի Եւրոպա հոսքին նկատմամբ, Ասատի ղեկավարութիւնը առաջարկած էր «Չորս Ծովեր Ռազմավարութիւն» անունով ծրագիր մը, ըստ «Ֆրանս Փրես» լրատուական գործակալութեան: Այս առաջարկը կազի գիծերու ցանց մը կ'ենթադրէ, որ իրարու պիտի միացնէ Արաբական Օոցը, Մեծ Ծովը, Կովկասն ու Միջերկրականը, Սուրիայէն անցնող կազի գիծերով: Այս ծրագրին մէջ կազի խողովակագիծերու ընդհանուր երկայնքը կը հաշուէ 6300 քմ.:

Այլ ծրագիր մը, որուն խողովակագիծի կառուցումը սկսած էր Արաբական Կազի Խողովակագիծ ընկերութիւնը (AGP-Arab Gas Pipeline) 2003-ին, կը ձգտէր Եգիպտոսի կազը ուղարկել Թուրքիա եւ հոնկէ ալ եւրոպական երկիրներ: Սակայն սուրիական քաղաքացիական պատերազմը ընդհատած էր անոր կառուցումը:

Ներկայիս Ռուսիա-Եւրոպա յարաբերութիւնները լաւ վիճակի մէջ չեն Ուքրանիոյ պատերազմին պատճառով եւ Եւրոպա անձկութեամբ կը փնտռէ բնական կազ ներածելու տարբեր աղբիւրներ: Անցնող քանի մը տարիներու ընթացքին Եւրոպական Միութիւնը յաջողեցաւ կարգ մը տարբեր կազի աղբիւրներ ունեցողներու հետ գործակցիլ եւ երբ 2021-ին Ռուսիայէն բնական կազի ներածումը Եւրոպա 40 առ հարիւր կը կազմէր, 2023-ին այս համեմատութիւնը իջաւ մինչեւ 8 առ հարիւրի, ըստ Եւրոպական Միութեան Տնտեսական Խորհուրդի տուեալներուն (Համացանցային Կայքէջ.- <https://www.intellinews.com/qatar-turkey-europe-gas...>):

Այս օրերուն Քաթարէն Թուրքիա երկարող բնական կազի խողովակի ծրագրի գործադրութեան հարցը կրկին կ'արժարժուի Արեւմուտքի հովանաւորութեամբ, Օոցի եւ Միջին Արեւելքի երկիրներու պատասխանատուներուն կողմէ: Եթէ այս ծրագիրը գործադրուի, շրջանի տնտեսական շուկային արմատական զարգացում մը պիտի ապահովէ: Քաթար Ռուսիայէն եւ Իրանէն ետք բնական կազի աշխարհի երրորդ պահեստը ունի: Յիշենք սակայն, թէ այս ծրագրի յաջողութեամբ ալ Եւրոպայի համար Քաթարի բնական կազի գինը նոյնը պիտի մնայ ինչ որ ցարդ է ռուսականը:

Ինչպէս գիտենք բնական կազը այս ժամանակին մէջ մեծ կարելութիւն ունի կենցաղային, տնտեսական եւ ճարտարարուեստական ոլորտներուն մէջ, այդ պատճառով ալ պատերազմներ կը մղուին այդ ուժանիւթին առաւելագոյնը տիրանալու համար: Ստորեւ կը ներկայացնենք աշխարհի մեծագոյն բնական կազի պահեստներու քանակը ցուցակով, ըստ երկիրներու եւ առաջնահերթութեան.-

Բնական Կազի Պահեստներու Քանակը Աշխարհի Մէջ
Երկիր Բնական Կազի Պահեստ (Միլիոն խոռանարդ ոտք)

- 1- Ռուսիա 1,688,228,000
- 2- Իրան 1,201,382,000
- 3- Քաթար 871,585,000
- 4- Ա. Մ. Ն. 368,704,000

Կարելոր է նշել, որ բացի բնական կազէն եւ քարիւղէն, ճարտարարուեստի եւ տնտեսական ոլորտներուն մէջ մեծ կարելութիւն ունին նաեւ մետաղային հանքերը՝ ինչպէս պղինձ, ալյումինիում, երկաթ, ոսկի, արծաթ, փլաթին եւ անշուշտ մոլիպտեն, որոնցմէ ի շարս այլոց կը գտնուին Հայաստանի մէջ: Ներկայիս Հայաստանի Հանրապետութիւնը կը դիմակայէ



ապահովական հարցեր՝ Ազրայէճանի սպառնալիքներով եւ Թուրքիոյ անոր թիկունք կանգնելով՝ իր մենաստիքական ու ընդլայնելու ձգտումներով:

Ռուսիոյ քաղաքական ուղղուածութեան բացայայտ փոփոխումով ի նպաստ Թուրքիոյ եւ Ազրայէճանի, Հայաստան չի կրնար վստահիլ անոր, հետեւաբար Հայաստանի իշխանութիւնը աւելի կը մօտենայ Եւրոպական Միութեան եւ Ամերիկայի Միացեալ Նահանգներու, այն յոյսով որ անոնք իրեն պաշտպան կը կանգնին հաւանական վտանգներու դիմաց, այլապէս Հայաստան մինակը ինչպէ՞ս պիտի կարենայ ապահովել իր պաշտպանութիւնը արտաքին վտանգներու պարագային:

Ինքնաբերաբար հարց կը ծագի, թէ արդեօք կարելի՞ է օգտագործել հայկական հանքերու հարստութիւններու առկայութիւնը այս տեսակ պարագայի մը մէջ: Ա. Մ. Ն.ն ու Եւրոպական Միութիւնը կամ Ֆրանսան ու Բրիտանիան ժամանակակից մեր պատմութեան մէջ կամ նախորդ դարու սկիզբները ի՞նչ կեցուածք ունեցան հայ ազգին հանդէպ՝ երբ Մուսթաֆա Քեմալի զօրքերը Հայաստանի արեւմտեան հատուածի ու Կիլիկիոյ դէմ արշաւեցին:

Այսպիսի պարագաներուն յայտնի է վերոնշեալ ուժերու կեցուածքներու նախադէպերը: Իսկ ներկայիս որքանո՞վ կարելի է միայն Արեւմուտքի վրայ յոյս դնել, ինչպէս որ էր պարագան մօտիկ անցեալին՝ երբ միայն Ռուսիոյ վրայ դրուած էր յոյսը: Ներկայ աշխարհի բազմաբեւեռութեան ձգտող իրադրութեան մէջ, հաւասարակշռուած արտաքին քաղաքականութիւնը առ այժմ կը մնայ միակ ելքը: Յուսանք որ Միջին Արեւելքի տարածաշրջանի ուժանիթի համար մղուող ռազմական եւ քաղաքական-դիւանագիտական պատերազմներուն մէջ, ժամանակը ի նպաստ կ'ըլլայ Հայաստանի բազմակողմանի ուղղուածութեան արտաքին քաղաքականութեան եւ անցեալի ժխտական նախադէպերը կը մնան անցեալին մէջ պատահած առանձին ժխտական զարգացումներ:

Աղբիւր՝ ՊԱՅՔԱՐ

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԹՆՃՈՒԿ.

ՄԵԾ ԵՒ ԽՈՐ ԽԱԲԿԱՆՔ՝ ԼԱԻԱՏԵՍՈՒԹԻՒՆԸ

(ԿԱ՛Յ ԹԷ ԶԿԱՅ. ՈՒՆԻ՛ՆՔ ԹԷ ՈՉ)

Պարոյր Յ. Աղպաշեան



Իսրայէլ-Լիբանան երկկողմանի ու բազմակողմանի առճակատումները, իրենց զանազան ու բազմաճիւղ կայացումներով ու զարգացումներով, գործուած ահաւոր հետեւանքներով, արդեօք կրնան զինադադարով մը յանգիլ գոհացուցիչ կամ ամբողջական արդիւնքի մը:

Ըստ էութեան ու ժամանակագրական տուեալներուն, նման դրական հաւանականութեան մը հասնելու համար,

տակաւին շա՛տ կանուխ է խօսիլ, որովհետեւ այս մեծկակ ու ծանրակշիռ փաթեթը իխստ փշոտ է՝ հանգուցաւոր ու բազմագլխանի, ոչ միայն զոյգ կողմերու չափանիշներով, այլ նաեւ՝ միջին արեւելեան ու միջազգային մակարդակներով:

Իսրայէլը, որ կը տառապի գերիզօրութեան յաւակնութեամբ ու պոռոտախօսութեամբ, ինքզինք կը նկատէ անյադրահարելի, նոյնիսկ ծայրայեղօրէն վճռակամ, բոլոր տեսակի անցարգելները բեկանող ու ջարդող, ի գին մարդկային զանգուածային կոտորածներու ու



կործանարարութիւններու, քաջ գիտնալով, որ իր կողմնակիցները միշտ պիտի պաշտպանեն իր շահերը, քանի ինք ինքնապաշտպանութեան իրաւունքներով կը գործէ, հետեւաբար ոչ ոք եւ ոչ մէկ կողմ կրնայ հակառակիլ իրեն, ոչ ոք կրնայ չընդունիլ իր այդ տարրական դերակատարութիւնը, այնքան ատեն որ՝ ինք ոչ նախայարձակ է, ոչ ահաբեկիչ, ոչ ալ արկածախնդիր:

Դիմադրական շարժումը՝ «Հրգպոլլայ» անուանակոչութեամբ սկիզբը իբր մարտական-կամաւորական ուժ, ապա, յետագային, իբր կայացած կազմակերպչական-զինուորական կուսակցութիւն, ի տես իր անպատասպարեալ եւ անպաշտպանեալ կարգավիճակին, այլ ելք ու միջոց չէր գտած, բացի իր ճակատագիրը ինք տնօրինելէ, ինչ եղանակ ալ իեն ձեռնտու ըլլայ, ինչպէս որ ինք յարմար կը տեսնէ, մեծ պատասխանատուութեան ենթարկելով իր գոյութիւնը, ի գին բազում յանձնառութիւններու ու գոհողութիւններու:

Այս աննախընթաց պրկուած ու լարուած վիճակը, որ, փաստօրէն, ոչ պատերազմ էր, ոչ ալ ճակատամարտ, այլ քստմնելի ու սարսռագոյցիկ հաշուեկշիռներու ու վրէժխնդրութեանց երկարաշունչ շարանի մը տխրահունչ պատկերը, ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ եւ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ պիտակներու տակ, պարզապէս խաբկանքներու եւ ինքնախաբկանքներու առապելներ էին:

Իսրայէլը, հետաքրքրական է, որմէ՞ կը պաշտպանուի, երբ 70 տարիէ ի վեր կը կեղեքէ ու կը սկրթէ արաբական աշխարհը եւ յատկապէս իր սահմանակից շրջապատային երկիրները:

Ո՞վ կրնայ չընդունիլ կամ չտեսնել այս դառն ու թթու իրականութիւնը կամ ո՞վ կրնայ չհաւատալ ու չհամոզուիլ այս պարզ ու թափանցիկ ճշմարտութեան, երբ ամենօրեայ յաջորդականութեամբ եւ ուժականութեամբ, Իսրայէլ կը բռնաբարէ արաբական հողեր, ցամաքայաին թէ օդային ահռելի բարբարոսութիւններով եւ ոտնձգութիւններով, տակաւին չհաշուած իր բռնագրաւեալ տարածքները՝ Լիբանանէն, Պաղեստինէն ու Սուրիայէն:

Այս երկիրներէն որեւէ մէկը նախայարձակ ըլլալով, չէ պղծած իսրայէլեան որեւէ շրջան, բացի այն պարագաներէն, երբ անոնք ստիպուած եղած են հակադարձելու կամ հակադդելու բիրտ բռնարարքներու, որոնք տեղի ունեցած են սահմաններու այս կամ այն զիծերէն:

Ի տես այս «վիրաւորեալ» համայնապատկերին, ուր արեւու նման յստակ է, որ միշտ ալ Իսրայէլն է գրգռողը ու մխթողը, մերթ այս, մերթ այն երկրին դէմ, իսկ նման պարզատես ու պարզադրոշմ լլկումները չեն տեսնուիր, չեն տեսներ այն պետութիւնները, որոնք «պինդգլուխօրէն», տակաւին մէկ ուղղութեամբ կը նային, կը տրամաբանեն, կը կողմնորոշուին:

Միւս կողմէ, աշխարհի դէտերը եւ դիտորդները, արդեօք կրնան՞ ըսել, թէ արաբական կողմերը ե՞րբ առանց պատճառի կամ առանց առիթի, «սուր ճօճած» են Իսրայէլի դէմ, գրաւելով հողամաս, գործադրելով բռնուժ եւ կամ յանկարծական յարձակումի ենթարկած են զանոնք:

Չկայ նման վարկած ու փորձ, որ արաբական կողմեր դարանակալ կամ բացայայտ ոճով, Իսրայէլը թիրախ դարձնեն, իսկ եթէ պատահած են նման զինեալ կեցուածքներ, ատոնք եղած են դէպքի մը կամ պատահարի մը առիթներով եւ կամ պարտադրեալ վիճակի մը առջեւ դէմ յանդիման գտնուելով, անխուսափելի ըլլալով համակերպիլը կամ լռելը ատոնց դիմաց:

Իրերու այս հոլովոյթի լոյսին տակ, յստակ անաչառութեան ու սուր դատողութեան աչքով, պէտք է ճշդուի (յատկապէս վարանտոններու ու թերհաւատներու կողմէ), թէ հոս ո՞ր պէտք է փնտռել ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ եւ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ տարազները, այն որ ինք կեղծ եւ արուեստական պաշտպանութի՞ւն կը խաղայ ու կը նուաճէ, կը գրաւէ, կը սպաննէ ու կ'աւերէ, թէ՞ այն, որ, իրօք, պաշտպանեալի դերի մեջ է, այլընտրանք չունենալով կամ կատարուած իրողութեան առջեւ ինքզինք գտնելով:

Լիբանանը եթէ ինքնապաշտպանութեան կը դիմէ, հակառակորդին դէմ ճակատելով, աստիկա կ'ընէ (եւ աստիկա գաղտնիք չէ), քանի որ դիմադրական շարժումը, իր «Հրգպոլլայ»ով, ուրիշ



ելք կամ եղանակ չունէր, երբ իր շրջաններն էին ամենէն աւելի վնասուողները, մարդկային թէ տարածքային կորուստներով, մանաւանդ երբ օրինական բանակը չէր կրնար (ու չկրցաւ) զինք պաշտպանել ու տէր կանգնիլ իր իրաւունքներուն (աւելի քան հասկնալի պատճառներով):

Արդեօք որեւէ Լիբանանեան կողմ, եթէ նման «անտէր» վիճակի մը մէջ յայտնուէր, ինք ի՞նչ պիտի կրնար ընել. ձեռնածա՞լ մնալ, տեղի տալ, յանձնուիլ կամ յարմարիլ, թէ ոչ՝ պաշտպանել իր գոյութիւնը եւ իր արժանապատուութիւնը, թէեւ որքան ցանկալի եւ օրինապահելի պիտի ըլլար, որ ՀԱՄԱՅՆ լիբանանցիներուն պաշտպանը ըլլար՝ լիբանանեան բանակը, բայց...:

Ահաւասիկ, այսպիսի հակընդդէմ ու հակոտնեայ մութ ու խաւար պայմաններու մէջ, երբ Իսրայէլ կոչուած վիշապը, կը շարունակէ իր արիւնաքամ ու հողաքանդ «այլասերական մարզանք»ները, յանկարծ, տարբեր բեւեռներու վրայ սկսան յայտնուիլ ու շրջագայիլ միջնորդական (°) ներկայացուցիչներ, ընդ հովանեաւ Ամերիկայի, որ յականէ-անուանէ ամենէն մեծ պարագլուխն է այս համատագնապային աղէտին եւ իր սուրհանդակը (չհաշուած նախորդները եւ ուրիշները), ՄԱԳՈԳային այցելութիւններով, մէկէ աւելի անգամներ, ժամանեց Լիբանան եւ Իսրայէլ, իբր թէ «լուծում»ի կամ «հասարակաց» եզրեր գտնելու անոնց միջեւ:

Բայց, ինք ինչպէ՞ս կրնար ըլլալ յաջող բանագնաց մը (որքան ալ կարող), երբ իր պետութիւնը ցանած է այս թոյնը, երբ իր երկիրը հրահրած է կարիճը, երբ իր երկիրն է կողմնակալը:

Իսկ աւելի անհանդուրժելին այն է, որ այս բանագնացութեան առիթով, մե՛ծն տգրուկը, հակառակ իր մրցանշային մարդորսութիւններուն ու զրաբանութիւններուն, ինքզինքին իրաւունք տուած է, զինադադարի փաստաթուղթով պահանջելու, որ իրեն պէտք է արտօնուի, օղային, ցամաքային ու ծովային ճամբաներով, ազատօրէն մուտք գործելու Լիբանան, երբ որ ինք... կարիքը կը տեսնէ կամ առիթը կը պահանջէ:

Ամերիկայի չուող նախագահը եւ Իսրայէլի խոցելի չվարչապետը, արդեօք տեղեակ չե՞ն, որ նման անհեթեթ յօդուած կամ պահանջք կարելի չէ դնել անկախ երկրի մը ու ՄԱԿի օրինական անդամ պետութեան մը դէմ:

Լա՛ւ, ՄԱԿի անդամ երկիրները, Ապահովութեան Խորհուրդի անդամները, Արաբական Լիկայի պետութիւնները, այսքա՛ն անգէտ եւ տգէտ են, որ առնուազն չեն անդրադառնար նման ծիծաղելի ճամբարտակութեան մը վրայ, մնալով լուռ, անգոյն եւ անդէմ:

Իսկ աւելի ողբալին, եթէ մինչեւ օրս, Իսրայէլի չվարչապետը չարժանացաւ «շարտուն բռունցք»ի մը, ժամանակը չէ՞ որ այս մարդուկը ենթարկուի բանտախուցային կալանքի մը, թէեւ միջազգային ատեանը, անոր դէմ արձակած է ձեռքակալութեան վճիռ մը, որուն ընդհուպ արձագանգած է Ուաշինկթըն, թէ կը մերժէ նման վճիռ մը:

Այս ալ ուրիշ խայտառակութեան բացայայտութիւն մը, երբ միջազգային ՀԱՄԱՄԱՐԴԱՍՊԱՆ մը, ոչ միայն կ'արդարացուի, այլեւ՝ կը պաշտպանուի:

Մեր ժողովրդային առածը, որքա՛ն դիպուկ եւ իմաստալից է, երբ կը գոռայ.

- Ով դարք, ով բարք:

Իսկ այսօր, աշխարհը դեկավարող (ու պղտորող) տրամադրեալները, տակաւին ինքզինքնին կը նկատեն... ժողովրդավար, արդարապաշտ եւ մարդասէ՛ր:

Ուրեմն, այսպիսի կրկեսային մթնոլորտի մը մէջ, «փոքր մարմիններով մեծեր ու մեծ մարմիններով փոքրեր», կը յաւակնին տակաւին Լիբանան-Իսրայէլ թնճուկը (թէ՛ թոչունը) լուծել իրենց քմահաճութեան կամակորութեամբ, ալ ի՞նչ կը սպասուի... լաւատեսութի՛ւն:

Ամերիկայի բանագնաց ներկայացուցիչը՝ Ամուս Հոքշթայնը, երբ իր շրջապատային այցով Պէյրութ էր, իր բանակցութիւններէն ու խորհրդակցութիւններէն այնքան գոհ ու հպարտ էր,



որ իր յոգնութիւնը փարատելու համար, հանգրուանած էր նշանաւոր «Մթաբ Պաքս» սրճարանին մէջ, արժանանալով ջերմ ընդունելութեան:

Արդեօք պահ մը ապրեցաւ կամ զգաստացաւ Պրն. Ամուսը, որ լիբանանցին, որքան ալ ճնշուած ու խեղդուած ըլլայ, տակաւին հիւրասէր է, մարդասէր եւ ընկերասէր, հետեւաբար, ատկէ տեղեակ պէտք է պահէ իր «գացող-վերադարձող» նախագահները, որոնք, այս կամ այն ձեւով Լիբանանը... յօշոտեցին:

Միւս կողմէ, արդեօք Պրն. Ամուսը, անձնապէս թէ դիւանագէտօրէն, խղճի խայթ մը ունեցա՞ւ, թէ լիբանանցին արժանի չէ նման բարբարոսական ու զագանային վերաբերմունքի, որուն պատասխանատուները կը գտնուին մէկէ աւելի հարթակներու վրայ, սկսեալ մեծապետական երկիրներէն, կողմնակալ պետութիւններէն մինչեւ արաբական հորիզոններ:

Այս բոլորը ի՞նչ կը ցուցանեն, Միջին Արեւելքէն, ընդհուպ՝ Լիբանան ու Պաղեստին, որոնք արքանուած եւ օղակուած են իսրայելեան լարամբրիկներով, որոնց համար ԱՐԳԻԼՈՒԱԾ է ինքնապաշտպանուիլը, բայց, Իսրայելի նման անմարդկային հրէշի մը՝ արտօնուած:

Ասկէ կը բխի ՄԵԾ մտահոգութիւնը, բազմերես հրամայականութիւններու չափանիշներով.

- Կա՞յ զինադադար, ի՞նչ ժամանակացոյցով, ի՞նչ փաստաթուղթով եւ ի՞նչ ապահովագրութեամբ:

- Իսրայել ի՞նչ հորիզոնական կը գրաւէ այս համաձայնութեան մէջ:

- Ամերիկա (կամ դաշնակից), ո՞րքանով հաւատարիմ եւ անկեղծ է իր անկողմնակալ միջնորդութեան մէջ:

- Իսրայելեան լարախաղացութիւնները պիտի զսպուին թէ՛ պիտի մնան անհսկողական:

- Արաբները ի՞նչ դերակատարութեամբ պիտի դառնան գործօն եւ արդիւնաւետ:

Իմ համեստ կարծիքով, նաեւ քաղաքական ընթերցումներովս, տեղական, միջին արեւելեան ու միջազգային չափանիշներով, ԼԱԻԱՏԵՍՈՒԹԻԻՆ տեսնելը կամ անորմով խանդավառուիլը, իրապէս, կրնա՞յ խաբկանք մը դառնալ, որովհետեւ, ի դէմս Ամերիկայի վարչակարգային ւսանդական շարժումներուն ու գործարքներուն, դժուար է հաւատալ կամ վստահիլ անոր անկեղծութեան եւ անմիջականութեան վրայ, այնքան ատեն որ՝ անիկա Իսրայելը կը նկատէ «հալալ»ութեան անկրկնելի նմոյշ մը, իսկ գէթ Լիբանանը (ցնոր տնօրինւ մ), «կիսաբաղձալի» բարեկամ մը:

Յամենայն դէպս, զինադադար կամ հրադադար յորջորջուածը կամ կարծուածը, երկար ճանապարհի մը սկիզբն է, որ չի կրնար յուսադրել ռեւէ մէկը, երբ կը տեսնենք գետնի վրայ կատարուածները, առաւել՝ պայմանաժամեր տալու (60 օր, եւայլն) ցնորքները:


(Պէլրուրթ)

25/12/2024

«Մեր Դիտարկումով եւ Դատումով» շարքէն:



ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈՑՈՒՄՆԵՐՈՒ ՇՐՋԱՆԻՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԵՐԿՐՈՒՆՈՐ ԳԻՐՔ «ՄԱՅՐԵՆԻ» ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵՆԷՆ



- Փորթամութ, Ռոտ Այլընտ.- Անցեալ դարասկիզբին, 1912–1914 տարիներուն, Օսմանեան տիրապետութեան ներքեւ հեծող հայոց կեանքը, ինչքն ու պատիւը ապահովելու նպատակով Ամենայն Հայոց Կաթողիկոսին նախաձեռնութեամբ վերակենդանացած բարենորոգումներու շարժումը ներկայացնող վաւերագրային ժողովածոներ եւ ուսումնասիրութիւններ ու յուշագրական նշումներ կը ներկայացնեն նկատառելի թիւ մը:

Ատով հանդերձ, նորայայտ նիւթեր պատեհութիւն կընձայեն նոր մանրամասնութիւններով ընդարձակելու մեր գիտելիքներն ու նոր լոյսով մօտենալու խնդրոյ առարկայ նիւթին, ինչպէս ի յայտ կու գայ Մայրենի Հրատարակչութեան հրապարակ հանած հետեւեալ նորագոյն հրատարակութիւններէն, երկուքն ալ կազմուած եւ ծանօթագրուած Դոկտ. Վաչէ Ղազարեանի կողմէ՝ Երուսաղէմ պահպանուող Պոլսոյ Տեղեկատու Դիւանի եւ Փարիզի Նուպարեան Մատենադարանի անտիպ վաւերագրերուն օգտագործումովը:


Ա.- ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈՑՈՒՄՆԵՐՈՒՆ ԱՌՆՉՈՒՈՂ ՆԻԹԵՐ (1912-1914)

Այս խորագիրը կրող եւ 336 էջերէ կազմուած հատորը պատրաստուած է գլխաւորապէս ներկայացնելու հայկական բարենորոգումներու ծրագրով զբաղելու համար Թուրքիոյ Հայոց Ազգային Ընդհանուր Ժողովէն ընտրուած Ապահովութեան Խորհրդարանական Յանձնաժողովի եւ նոյն ժողովին Կեդրոնական Վարչութիւնը կազմող մարմնին կողմէ նշանակուած Ապահովութեան Վարչական Յանձնաժողովի նիստերու ատենագրութեան նորայայտ Բ. տետրին բովանդակութիւնը:

Ձեռագիր տետրը կ'արձանագրէ պատմութիւն մը, որ կը սկսի 19 Յունիս 1913-ին, երբ արդէն որոշուած էր որ եւրոպական մեծ պետութիւններու Պոլսոյ դեսպանները զբաղին բարենորոգումներու ծրագրով, եւ կաւարտի Ռուսաստանի եւ Թուրքիոյ միջեւ ստորագրութեամբ բարենորոգումներու համաձայնագրին՝ 16 Փետրուար 1914-ին:

Յարակցաբար, «Յաւելուած» բաժնով կը ներկայացուին առաւելաբար անտիպ 50 վաւերագրեր, որոնց մէջ առանձնայատուկ շահեկանութիւն կը ներկայացնեն շահագրգիռ կողմերու տեսակետները պարունակող բանակցային բնոյթի նիւթերը:

Կազմողն անհրաժեշտն նկատած է նաեւ «Վաղորդայն» խորագրեալ բաժնով հպանցիկ անդրադարձում մը կատարել համաձայնագրի կնքման յաջորդող շրջանին:



Հատորը կը պարփակէ գրականութեան մասնակի ցանկ եւ անուանացանկ, ինչպէս նաեւ կազմողին կողմէ ներածական մը՝ Ազգային Ընդհանուր Ժողովի նիստերուն ընդմէջէն ամփոփելու բարենորոգումներու ծրագրին նախապատմութիւնը, եւ վերջաբան մը, ուր կը ջանայ յստակացնել յիշեալ գոյգ յանձնաժողովներուն եւ Թուրքիոյ Հայոց Պատրիարքութեան ու Պօղոս Նուպարի գլխաւորած Փարիզի Հայ Ազգային Պատուիրակութեան յարաբերութիւններուն վերաբերող տեղեկութիւններ:

Ընթերցողը կը մղուի մտորելու ռուսերօքական համաձայնագրին նշանակութեան եւ հարստահարուող հայոց կեանքի, ինչքի եւ պատիւի ապահովութիւնը միայն խաղաղ բանակցային ուղիով ձեռք բերելու ճիգերուն մասին:

Բ.- ՆԻԹԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ (1912-1913)

174 էջերէ բաղկացած այս հատորը ընթերցողին կը ներկայանայ երկու ինքնաբացատրական ենթախորագրերով՝ «Հայկական



Բարենորոգումներու Շրջանին Առնչուած Նամակներ Արշակ Զօպանեանէն» եւ «Յստակացումներ Կիլիկեան Ինքնապաշտպանական Փորձի Մասին»:

Առաջինը՝ յարաբերաբար փոքրածաւալ նիւթ մը, կը ներկայացնէ Զօպանեանէն նամակներ, ուր վերը յիշուած Ապահովութեան Վարչական Յանձնաժողովին ուշադրութեան կը բերուին բարենորոգումներուն առնչուած փարիզեան անցուդարձեր եւ անձնական կարծիքներ:

Երկրորդը՝ աւելի ընդարձակ, կը զբաղի 1912-ի վերջերուն Միհրան Տամատեանի եւ գործակիցներու կողմէ Եգիպտոս կեանքի կոչուած Ազգային Պաշտպանութեան Քոմիթէին հետ կապուած յստակացումներով, որոնք անհրաժեշտ դարձուցած են հատորին մէջ ընդգրկումը այդ մարմնին գործունէութեան վերաբերող տպագրեալ

նիւթերու (Տամատեանի կեանքին եւ գործին նուիրուած Պետրոս Տեփոյեանի աշխատութեան



համապատասխան գլուխը, ապստամբութիւնը գլխաւորելու հրաւիրուած Մուշեղ Սերոբեանի տպագիր յուշերը) եւ նոյն Սերոբեանի անտիպ ձեռագիր Ինքնակենսագրութեան այն էջերուն, ուր ան կարտայայտուի ապստամբական ծրագրին մասին, միաժամանակ ներկայացնելով այդ ինդրով Տամատեանէն, Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Սահակ Բ. Խաչայեանէն, Պօղոս Նուպարէն եւ այլոցմէ իրեն ուղղուած նամակները:

Ինքնապաշտպանական փորձին ձախողութեան պատճառներուն անդրադարձում կատարուելէ ետք, այս հատորն ալ, նախորդին նման, կը փակուի ընթերցողը մտորման մղող հարցադրումով մը՝ թէ ինչո՞ւ Բարենորոգման ծրագրին հետամուտ պատասխանատու մարմիններ իրենց դիւանագիտական աշխատանքներուն չէին զուգակցած ուժային քայլեր:

Հետաքրքրուողներ կրնան հատորներու ձրի թուային օրինակները ձեռք բերել կայքէջերէն Համահայկական Թուանշային Գրադարանին (<https://arar.sci.am/dlibra>) եւ Մայրենի Հրատարակչութեան (<https://mayrenipublishing.com>): Մայրենիի կայքէջը նաեւ կընձեռէ աշխատութիւններուն առցանց թերթատումով ծանօթանալու հնարաւորութիւնը:

4/1/2025 ԳԵՂԱՐԴ

ՊԱՍՄԱԲԱՆ ԴՈԿՏ. ՍԵՂԱ ՊԱՐՍՈՒՄԵԱՆ-ՏԱՏՈՅԵԱՆԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅ ՓԻԼՍՈՓԱՅԱԿԱՆ ՄՏՔԻ ԵՒ ՀԱՅ-ԻՍԼԱՄԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Յարութիւն Իսկահատեան – Պէյրութ



Մերձաւոր Արեւելքի հետ Միջնադարեան Հայաստանի քաղաքական ու մշակութային պատմութեան փոխազդեցութեան ոլորտին մէջ մասնագիտացած պատմաբան, միջնադարեան նիւթերու պատմագէտ, նկարչուհի եւ հնագէտ Սեղա Պարսումեան -Տատոյեան ծնած է Հալէպ, Սուրիա, 1950-ին: Նախնական եւ երկրորդական ուսումը հայկական վարժարաններու մէջ ստացած է, ապա

յաճախած ու աւարտած է Պէյրութի Ամերիկեան Համալսարանը (American University of Beirut- A.U.B.), ուր պատմութեան դասախօս եղած է 1986-2005-ին: Պաշտօնավարած է նաեւ Պէյրութի Հայկագեան Համալսարանի մէջ 1981-1986, Ա.Մ.Ն.ի Քոլումպիա Համալսարանը 2002-2006, Լիբանանի Ամերիկեան Համալսարան եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Սուրբ Ներսէս Դպրեվանք 2007-2010, ինչպէս նաեւ Շիքակոյի Համալսարանին մէջ 2010-ին: (Համացանցային Կայքէջ.- <https://hyw.wikipedia.org/wiki/%D5%8D%D5%A5%D5%A4%D5%A1>):

Սեղա Պարսումեան- Տատոյեան հեղինակած է աւելի քան յիսուն գիտական յօդուածներ եւ տասներմէկ գիրքեր: Ան առաջին հայ կին գիտնականն է, որ տիրացած է Փիլիսոփայութեան



Գիտական Դոկտորայի (Doctor of Sciences in Philosophy) վկայականին, իր աշխատասիրություններով կեդրոնացած է հայկական փիլիսոփայության եւ իսլամական ու հայկական յարաբերությանը զանազան բնագույններուն վրայ:

Փրոֆ. Սեդա Պարսումեան- Տատոյեանի հեղինակած աշխատություններու վերնագիրները ինքնին խօսուն են, որոնք հետեւեալներն են. -

Ա.- «Հայկական իրավիճակը Յետահայեցութեամբ եւ Նախահայեցութեամբ- Վերլուծում մը», Օթաուա, Գանատա, 2015, 214 էջ, անգլերէն (The Armenian Condition in Hindsight and Foresight- A Discourse, Ottawa, Canada, 2015, 214 pages):

Բ.- Խմբագիր եւ Համահեղինակ, «Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն- Պատմութիւն, Առաքելութիւն, Հարստութիւններ», Անթիլիաս, Կիլիկիոյ կաթողիկոսութեան հրատարակություններ, 2015, 400 էջ, հայերէն, անգլերէն եւ արաբերէն (The Catholicosate of Cilicia - History, Mission, Treasures. Editor, Co-Author. Antelias, Lebanon: Catholicosate Publications, 2015», 400 pages):

Գ.- «Հայերը Միջնադարու Իսլամական Աշխարհին Մէջ 7-14րդ Դարերու Ընթացքին- Ներգործութեան Յարացոյց- Արաբական ժամանակաշրջանը Արմինիայի մէջ, Առաջին հատոր», Նիու Պրաունսուիք, Ա.Մ.Ն. եւ Լոնտոն, Միացեալ Թագաւորութիւն (Մ.Թ.), Թրէնդէքշըն հրատարակիչներ, 2011, 290 էջ, անգլերէն (The Armenians in the Medieval Islamic World – Paradigms of Interaction - Seventh to Fourteenth Centuries. Volume One: The Arab Period in Armīnyah - Seventh to Eleventh Centuries. New Brunswick, U.S.A. & London, UK: Transaction Publishers, 2011, 290 pages):

Դ.- «Հայերը Միջնադարու Իսլամական Աշխարհին Մէջ 7-14րդ Դարերու Ընթացքին- Ներգործութեան Յարացոյց- Հայկական Գործնական Քաղաքականութիւն Իսլամական Աշխարհին մէջ եւ Տարամէտ Յարացոյցներ- Կիլիկիոյ պարագան, Տասնըմեկերորդէն տասնըչորրորդ դարեր, Երկրորդ Հատոր», Նիու Պրաունսուիք, Ա.Մ.Ն. եւ Լոնտոն, ՄԹ, Թրէնդէքշըն հրատարակիչներ, 2011, 318 էջ, անգլերէն (The Armenians in the Medieval Islamic World – Seventh to Fourteenth Centuries. Volume Two: Armenian Realpolitik in the Islamic World and Diverging Paradigms- The Case of Cilicia - Eleventh to Fourteenth Centuries. New Brunswick, U.S.A. & London, UK: Transaction Publishers, 2012, 318 pages):

Ե.- «Հայերը Միջնադարու Իսլամական Աշխարհին Մէջ 7-14րդ Դարերու Ընթացքին- Ներգործութեան Յարացոյց- Միջնադարեան Աշխարհաքաղաքացիութիւն եւ Իսլամութեան դիմագիծերը – Տասնըերրորդէն տասնըչորրորդ դարեր, Երրորդ Հատոր», Նիու Պրաունսուիք, Ա.Մ.Ն. եւ Լոնտոն, ՄԹ, Թրէնդէքշըն Հրատարակչութիւն, 2013, 208 էջ, անգլերէն (The Armenians in the Medieval Islamic World – Paradigms of Interaction- Medieval Cosmopolitanism and Images of Islam- Thirteenth to Fourteenth Centuries. New Brunswick: U.S.A. & London, UK: Transaction Publishers, 2013, 208 pages):

Զ.- «Հայկական Կաթողիկոսութիւնը Կիլիկիայէն Անթիլիաս- նախաբան, Անթիլիաս, Լիբանան, Կաթողիկոսարանի հրատարակություն, 2003, 115 էջ, հայերէն եւ անգլերէն (The Armenian Catholicosate from Cilicia to Antelias – An Introduction. Antelias, Lebanon: Catholicosate Publications, 2003, 115 pages):

Է.- Խմբագիր եւ Համահեղինակ, «Միջին Արեւելքի Մէջ Հայաստանեայց Եկեղեցւոյ Ներդրումը Քրիստոնէական Վկայութեան», Կաթողիկոսարանի Հրատարակություն, Անթիլիաս, Լիբանան, 2001, 212 էջ, հայերէն եւ անգլերէն (The Contribution of the Armenian Church to the Christian Witness in the Middle East. Editor, Co-Author. Antelias, Lebanon: Catholicosate Publications, 2001, 212 pages):

Ը.- «Ֆաթիմական Հայերը – Մշակութային եւ Քաղաքական Ներգործութիւն Միջին Արեւելքի Մէջ», Իսլամական պատմութեան եւ քաղաքակրթութեան շարք, Լէյտըն (Հոլանտա), Ի.Ժ. Պրիլլ, 1997, 215 էջ, անգլերէն (The Fatimid Armenians - Cultural and Political Interaction in the Near East. Islamic History and Civilization Series. Leiden: E. J. Brill, 1997, 215 pages):



Թ.- Յովհաննէս Երզնակացիի 'Ի Տաճկաց Իմաստասիրաց'ը եւ Իմաստասիրական Արձակը Իսլամական Աղբիւրներուն Լոյսին Տակ, Իխուան Ալ Շաֆա, Պէյրութ, 1991, 230 էջ, հայերէն եւ անգլերէն (John of Erznka: 'Views from the Writings of Islamic Philosophers' and Philosophical Treatises in the Light of their Islamic Sources – Ikhwān al Ṣafā', Beirut, 1991, 230 pages):

Ժ.- Էջեր Արեւմտահայ Մտածումէն – Ե. Տէմիրճիպաշեան, Տ. Չրաքեան-Ինտրա, Շ. Պէրպլերեան, Գ. Գավաֆեան, Դանիէլ Վարուժան, Ն.Բ.Ը.Մ.-ի հրատարակութիւն, Պէյրութ, 1987, 246 էջ, հայերէն, Հայկաշէն Ուզունեան հայերէն լաւագոյն գիրք մրցանակի շահող 1987-ին (Pages of West Armenian Philosophical Thought – E. Temirjibashian, T. Chrakian-Indra, Sh. Perperian, G. Gavafian, Daniel Varujan, Beirut: A.G.B.U., 1987, Winner of H. Uzunian Award for Best Armenian Book of 1987, 246 pages):

ԺԱ.- Լիբանանահայ Նկարչութիւնը Ինքնութեան Տագնապին Լոյսին Տակ, Կիլիկիոյ Կաթողիկոսարանի Հրատարակութիւն, Անթիլիաս, Լիբանան, 1984, 100 էջ, հայերէն եւ անգլերէն (Armenian Painting in Lebanon in the Light of the Crisis of Identity, Antelias, Lebanon: Catholicosate Publications, 1984, 100 pages):

Դոկտ. Սեդա Պարսումեան- Տատոյեանի գլուխ գործոցը՝ Միջնադարու հայ-իսլամական յարաբերութիւններու եւ հայոց քաղաքական միտքի փոխներգործութիւնը իսլամական աշխարհի հետ նիւթին շուրջ, վերոնշեալ անգլերէն եռահատոր հրատարակութիւններն են, որոնց մասին ակնառու պատմաբաններ իրենց կարծիքը յայտնած են, որոնցմէ ստորեւ կը ներկայացնենք օրկինակներ. -

Պատմաբան դոկտ. Տիգրան Գույումճեան կ'ըսէ. «Մշակութային փոխարաբերութիւնները կայուն գործընթացներ են որոնք որոշ կանոններու չեն ենթարկուիր, այլ կը գործեն ընկերութիւններու կամքէն անկախ: Դժուար է ըմբռնել հեռաւոր թէ մօտիկ դրացիներու ասանդութիւնները անոնց բազմազան ըլլալուն եւ մարդկային փոխարաբերութիւններու կապուած բարդութիւններու պատճառաւ: Արդարեւ, մշակութային փոխներգործութիւնը միջազգային քաղաքակրթութիւնը կազմող անհրաժեշտ տարրերէն մէկն է: Ուսումնասիրութիւնները հարկ կը տեսնեն մեկուսացնել փոխարաբերութեանց յատուկ պահեր եւ պարագաներ: Ուսումնասիրելով միջնադարու հայկական պատմութիւնն ու արուեստը, մասնաւորաբար անոնց փոխներգործութիւնը հայոց եւ իսլամ ժողովուրդներու միջեւ, կարելոր է մատնանշել նոր տարրերու մուտքը որոշ ազգի ասանդութեանց մէջ»:

Պատմաբան դոկտ. Կարապետ Մոմճեան կ'ըսէ. «Նախաձեռնութիւն առի ուսումնասիրելու հայոց փոխազդեցութիւնը միջնադարեան իսլամական աշխարհին հետ, որ ծնունդ առած է Մերձաւոր Արեւելքի մէջ: Այս ներգործութեան մոլիչ ուժն է, ինչպէս ըսած է Նիցշէ «sum ergo cogito», թարգմանաբար՝ «Գոյութիւն ունիմ ուրեմն կը մտածեմ»: Գոյապաշտական մօտեցում ամէն պարագայի տակ, որ այս երեւոյթին խթանիչ ուժն է: Այս ծիրին մէջ միջնադարեան իսլամական աշխարհի հետ հայկական յարաբերութիւններու մասին ուսումնասիրութիւնը կը նշանակէ արժեւորել ատենի պայմանները ու անոնց իմաստ տալ, որ կը նշանակէ թէ ջանք թափուած է ստեղծելու եւ սահմանելու երկու ազգերու ասանդութիւնները մանրամասնօրէն: Ներկայիս լաւ կ'ըմբռնեմ այս վիճակը, որովհետեւ իմ պատկանած սերունդիս՝ 1960-ականներու համար յատուկ է մեծնալ եռալեզու ընկերութեան մը մէջ, մզկիթներու, եկեղեցիներու, տեղական եւ միսիոնարական դպրոցներու, արեւելեան ու արեւմտեան գաղափարախօսութիւններու եւ սովորութիւններու համագոյութեան մէջ»:

Դոկտ. Աննա Օհանճանեան կ'ըսէ. «Հայկական քննարկման-վիճաբանական գրականութիւնը 17-րդ եւ 18-րդ դարերուն խորացած ու ծաւալած է խոր գիտակցութեամբ եւ տարածուած է ժողովուրդին մէջ Օսմանեան ու Տաֆալիտ իշխանութիւններու ներքոյ: Այս մտայնութիւնը դուռ բացած է հայոց եւ իսլամներու միջեւ խաղաղ վիճաբանութեան: Այսպիսով ծնունդ առած է երկու տարբեր ասանդութիւններու փոխարաբերութիւնները եւ փոխներգործութիւնները: Վերջապէս եռահատոր այս աշխատութեան մէջ դոկտ. Սեդա



Տատոյեան կը բացատրէ հայոց կացութիւնը 970-ականներէն մինչեւ 14-րդ դարու վերջերը: Այս ժամանակաշրջանին հայոց կիսանկախ դրութիւնը աստիճանաբար փոխուեցաւ եւ յանգեցաւ ձեռով մը ինքնիշխանութեան հարաւ-արեւելեան Փոքր Ասիոյ, Հիւսիսային Սուրիոյ եւ Կիլիկիոյ մէջ: Դոկտ. Տատոյեանի վիճարկումը այն է թէ՛ եթէ Հայերն ու Հայաստանը գոյութիւն ունեցած են Միջին Արեւելքի եւ իսլամական աշխարհի մէջ, ուրեմն հայոց պատմութիւնն ու մշակոյթը մաս կը կազմեն շրջանի պատմութեան եւ մշակոյթին»:

Դոկտ. Սեդա Պարսումեան- Տատոյեան 1999-ին Հայաստանի Ազգային Ակադեմիայի կողմէ ստացած է «Դաւիթ Անյադը» մետալը, որ ամենէն բարձր գնահատական մետալն է Հայ Փիլիսոփայութեան միտքի ուսումնասիրութեան նուիրուած աշխատութիւններու հեղինակներուն տրուող, իր հայկական փիլիսոփայութեան հետազոտութիւններու մէջ կատարած ներդրումներուն համար: Իսկ 2015-ին «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանը ստացած է Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին կողմէ:

Դոկտ. Սեդա Պարսումեան- Տատոյեան իր գիտական աշխատութիւններով մեծ ներդրում ունեցած է՝ քիչ ուսումնասիրուած Հայ փիլիսոփայական միտքի եւ Հայ-իսլամական յարաբերութիւններու բնագաւառին մէջ նորութիւններ մէջտեղ հանելով, որոնց մէկ կարեւոր մասը անգլերէնով եւ օտար հրատարակչատուներու կողմէ լոյս տեսած ըլլալը՝ մեծապէս կը նպաստէ հայ մշակոյթն ու պատմութիւնը օտար շրջանակներու ծանօթացնելու նուիրական եւ շնորհակալ գործին մէջ:

Աղբիւր՝ ՊԱՅՔԱՐ

ԱԼԻԵԻՆԵՐԸ ԼՈՆՏՈՆԻ ՄԷՋ ՄԵՓԱԿԱՆԱՏԷՐ ԵՆ ԲԱԶՄԱԹԻԻ ՇԷՆՔԵՐՈՒ՝ ՀԱՐԻՐԱԻՈՐ ՄԻԼԻՈՆ ՏՈՒԱՐՆԵՐ ԱՐԺՈՂՈՒԹԵԱՄԲ

Յարութ Սասունեան
www.TheCaliforniaCourier.com

«Կազմակերպուած յանցաւորութեան եւ փտածութեան լուսաբանման նախագիծ»-ը (OCCRP)



2012 թուականին ընտրած էր նախագահ Իլիամ Ալիեւը՝ իր առաջին «Տարուան մարդ»-ը մրցանակին, որ կը տրուի այն անհատին կամ հաստատութեան, որ աշխարհին մէջ առաւելագոյնը կատարած է կազմակերպուած յանցաւորութեան ու փտածութեան յառաջխաղացքին համար»:

«Կազմակերպուած յանցաւորութեան եւ փտածութեան լուսաբանման նախագիծ»-ը հետաքննող լրագրողներու համաաշխարհային ցանց է, որ աւելի քան տասնամեակ մը բացայայտած է նախագահ Ալիեւի ընտանիքին եւ անոր անմիջական շրջանակին կողմէ պետական միջոցներու իւրացումը՝ արտերկրի մէջ անշարժ գոյք ձեռք բերելու նպատակով:

Թէեւ կան բազմաթիւ կազմակերպութիւններ, որոնք կը հաղորդեն Ազրպէյճանի կողմէ լրագրողներու, ընդդիմութեան անդամներու եւ իրաւապաշտպաններու բանտարկութեան մ



ասին, բայց եւ այնպէս «Կազմակերպուած յանցաւորութեան եւ փտածութեան լուսաբանման նախագիծ»-ը այն հազուագիւտ խումբերէն է, որ փաստագրած է ալիեւներու ընտանիքին կողմէ Լոնտոնի սրտին մէջ արժէքաւոր անշարժ գոյքի գաղտնի ձեռքբերումները: Այս սեփականութիւններէն շատերը թաքնուած են արտասահմանեան օֆշորային կազմակերպութիւններու ետին՝ դժուարացնելով բացայայտել անոնց իսկական սեփականատէրերը:

Բայց եւ այնպէս, 2022 թուականին բրիտանական կառավարութիւնը որդեգրեց նոր օրէնքներ, որոնք կ'օգնեն բացայայտել այդ ունեցուածքներէն քանի մը հատին սեփականատէրերը: «Կազմակերպուած յանցաւորութեան եւ փտածութեան լուսաբանման նախագիծ»-էն ճէյմզ Օ'պրայըն իր՝ «Լոնտոնեան շքեղ կալուածներ, որոնք առնչուած են Ազրպէյճանի նախագահին ընտանիքին, թաքնուած են օֆշորային կազմակերպութեան ետին» խորագիրով յօդուածին մէջ այս ամիս կը տեղեկագրէ, որ ալիեւներու ընտանիքը «հարիւր միլիոնաւոր տոլարներ արժողութեամբ բրիտանական անշարժ գոյք ձեռք բերած է»: Յօդուածին մէջ կը հաստատուի. «Նոր հասանելի տուեալները ցոյց կու տան, որ Ալիեւի դուստրերը Լոնտոնի մէջ սեփականատէր են վեց շքեղ բնակարաններու: Սակայն ներկայ սեփականատիրութիւնը 10 (այլ) ինչքերու, զորս ընտանիքը ձեռք բերած է 160 միլիոն տոլարի, կը մնայ անյայտ, քանի որ անոնց փոխանցումները կատարուած են օֆշորային կազմակերպութեան կողմէ: Այդ կազմակերպութեան կառոյցները ներկայիս զերծ կը մնան հանրային վերահսկողութենէն»:

«Կազմակերպուած յանցաւորութեան եւ փտածութեան լուսաբանման նախագիծ»-ը կը տեղեկագրէ, որ ալիեւները Լոնտոնի մէջ ունին՝ «Բրիտանական թանգարանին մօտ գտնուող պանդոկի շէնք մը. երկնաքեր (փենթհաուս) յարկաբաժիններ՝ Հայտ փարքէն միայն քանի մը քայլ հեռու: Առանձնատուն մը, որ կը նայի Հեմփսթետ Հիթի կանաչ տարածութեան: Եւ՝ շա՛տ աւելին: 2021 թուականին վերոնշեալ նախագիծը բացայայտեց, որ 700 միլիոն տոլար արժողութեամբ լոնտոնեան անշարժ գոյքի հաւաքածոն ձեռք բերուած է Ազրպէյճանի երկարամեայ բռնակալ նախագահ Իլհամ Ալիեւի ընտանիքին եւ մտերիմներուն կողմէ: Երկու տասնամեակ շարունակ անվիճարկելի քաղաքական իշխանութիւնը վերածելով հսկայական հարստութեան՝ այս ընտրանի խումբը որոշած է հարստութիւնը մսխել ժողովրդավարական աշխարհի ելեւմտական կեդրոններէն մէկուն մէջ: Անոնց գնած ինչքերը կը պատկանին տասնեակ գաղտնի օֆշորային ընկերութիւններու՝ ծածկելով իրենց սեփականութիւնը հանրային վերահսկողութենէն: «Փանտորա փէյվըրզ»-ի՝ Հետաքննող լրագրողներու միջազգային առեւտրական ընկերակցութեան կողմէ ձեռք բերուած գաղտնի օֆշորային փաստաթուղթերու արտահոսքին շնորհիւ է, որ լրագրողները կրցան զանոնք կապել ալիեւներուն հետ»:

«Կազմակերպուած յանցաւորութեան եւ փտածութեան լուսաբանման նախագիծ»-ը կը տեղեկացնէ, որ՝ «Համագործակցած է Բրիտանիոյ «Թրանսփերընսի ինթըրնեշնըլ» փտածութեան դէմ պայքարող քարոզչական խումբի հետազոտողներուն հետ՝ վերանայելու Լոնտոնի 23 գոյքերը, զորս մեր նախկին հետաքննութիւնը կը կապէր ալիեւներուն»: Անոնք բացայայտած են, որ՝ «Նախագահ Ալիեւի դուստրերը՝



Լէյլա եւ Արզու Ալիեւաները անձամբ ունին վեց շքեղ բնակարան Հայտ փարքի դիմացի փողոցին կից: Սակայն (Օտարերկրեայ կազմակերպութիւններու գրանցամատեանին մէջ) չի նշուիր, թէ ի վերջոյ որո՞ւ կը պատկանին 10 անշարժ գոյքերը, զորս ալիեւներն ու անոնց մտերիմները ձեռք բերած են 160 միլիոն տոլարով՝ առանձնատուն Հեմփթետ Հիթի մէջ, երկու թաունհաուս (քաղաքի տուն), բազմաթիւ բնակարաններ եւ երկնաքեր յարկաբաժիններ, ինչպէս նաեւ վեց յարկանի շէնք Կեդրոնական Լոնտոնի մէջ: Ասիկա միայն կը բացայայտէ, որ անոնք կը պատկանին Մեն կղզիի մէջ արձանագրուած կազմակերպութեան»:

Ալիեւի գրասենեակը «չպատասխանեց («Կազմակերպուած յանցաւորութեան եւ փտածութեան լուսաբանման նախագիծ»-ի) հարցումներուն, սակայն նախագահ Ալիեւ նախապէս իր հարստութիւնը վերագրած էր գործարարութեան մէջ յաջողութեան»:

«Կազմակերպուած յանցաւորութեան եւ փտածութեան լուսաբանման նախագիծ»-ը կը յայտնէ, որ 2021-ին իր նախագահական կայքին վրայ Ալիեւը «ընդունեց, որ ինք «աղքատ մարդ չէր», երբ նախագահ դարձաւ, բայց ըսաւ, թէ ատոր պատճառը իր գործարարական ձեռքբերումներն են: (Ազրպէյճանի անկախացումէն ետք առաջին առաջնորդին որդին՝ Ալիեւը, վարած է Ազրպէյճանի պետական նախարարի ընկերութեան փոխնախագահի պաշտօնը, նախքան 2003 թուականին իր հայրը փոխարինելը՝ նախագահի պաշտօնին վրայ): «Ի տարբերութիւն Արեւմուտքի որոշ այլ մարդոց, որոնք իրենց ամբողջ հարստութիւնը կը նուիրեն իրենց կատուններուն եւ շուններուն, Իտալիոյ եւ Ազրպէյճանի մէջ մենք կարելոր կը նկատենք ընտանեկան արժէքները», ըսաւ ան այն ատեն: «Ուստի ես իմ ամբողջ գործարարութիւնս փոխանցեցի զաւակներուս»:

2015 թուականին «Կազմակերպուած յանցաւորութեան եւ փտածութեան լուսաբանման նախագիծ»-ը կը յայտնէ, որ «Լէյլա Ալիեւան՝ Ազրպէյճանի նախագահին այն ատենուան 29-ամեայ աւագ դուստրը, տնօրէններէն մէկն էր բրիտանական ընկերութեան, որ կը կառավարէր աւելի քան 33 միլիոն տոլար արժողութեամբ (հինգ յարկանի) շքեղ շէնքը»:

Թէեւ կազմակերպութիւնը կը թաքցնէ լոնտոնեան 10 բարձրակարգ գոյքի սեփականութիւնը, բայց եւ այնպէս անոնց ինը «Օտարերկրեայ կազմակերպութիւններու գրանցամատեան»-ին մէջ նշուած են անունով նոյն անձին, որ ունի «զգալի ազդեցութիւն կամ վերահսկողութիւն» օֆշորային ընկերութիւններու վրայ, որոնց սեփականատէրն է Միք Փաշաեւը... նախագահ Իլիամ Ալիեւի կնոջ զարմիկը: 54-ամեայ դրամավարը սերտօրէն կապուած է ալիեւներու ընտանիքին գործարարական շահերուն հետ: Ան խորհուրդի նախագահն է «Փաշա պանք»-ի՝ խոշոր վարկատու մը, որ կը պատկանի նախագահին դուստրերուն՝ Լէյլային եւ Արզուին, եւ տնօրէններու խորհուրդի փոխնախագահը անոնց ամբողջ «Փաշա հոլտինկ» գործարարական ցանցի, որ կը ներառէ դրամատնային, ապահովագրական եւ շինարարական ոլորտներու շահերը»:

«Կազմակերպուած յանցաւորութեան եւ փտածութեան լուսաբանման նախագիծ»-ը յայտնած է, որ «2014 թուականի հոկտեմբերին ան (Փաշաեւը) Լէյլա Ալիեւայէն ստանձնած է



տնօրէնութիւնը այն ընկերութեան, որ կը կառավարէ «Մփիքըրզ քորնըր»-ի (Լոնտոն) անոր առանձնատունը»:

Նախագահ Ալիեւի մնայուն սպառնալիքները՝ յարձակելու Հայաստանի վրայ, եթէ վարչապետ Նիկոլ Փաշինեան չհամաձայնի զիջումներ կատարել, նպատակ ունին շեղել ուշադրութիւնը Ալիեւի կողմէ մարդու իրաւունքներու խախտումներէն եւ Ազրպէյճանի պետական միջոցներու իւրացումէն, որ անոր քաղաքացիները կը գրկէ երկրի միլիառաւոր տոլարներու նաւթի ու կազի եկամուտներէն:

23/12/2024

ՏԵՍԱԿԷՏ


ՈՒՐ Կ'ԵՐԹԱՆՔ

Յարութ Տէր Դաւիթեան, Լոս Անճելըս, 22 Դեկտեմբեր 2024

ԳԵՂԱՐԴ

«Մենք չափազանց շատ կը մտածենք եւ շատ քիչ կը զգանք: Մեքենաներէ աւելի, մեզի մարդկութիւն է պէտք: Ճարպիկութիւնէ աւելի, մեզի բարութիւն եւ ազնուութիւն է պէտք: Առանց այս յատկանիշերուն, կեանքը կատաղի կը դառնայ եւ ամէն ինչ կը կորսուի»: Զարլի Զափլին-1940

«Մարսափելիորէն ակնյայտ դարձած է, որ արուեստագիտութիւնը (թեքնոլոճի) գերազանցած է մեր մարդկութեանը»: Ալպըրթ Այնշթայն-1940-ականներ



Ո՞ւր կրնայ յանգիլ աշխարհ մը, ուր ստախօսութիւնն ու խաբեբայութիւնը յաջողութեան հասնելու համար աւելի արդիւնաւետ միջոցներ կը նկատուին, քան ճշմարտութիւնն ու անկեղծութիւնը: Ուր անձնական շահը, նոյնիսկ ի հեճուկս հաւաքականութեան վնասին, աւելի կը հետապնդուի ու ճարպիկութիւն կը սեպուի: Ուր նպատակին հասնելու համար ամէն խարդախութիւն ընդունելի կը նկատուի: Ուր անմիջական եւ մանր շահի ապահովումը աւելի նախընտրելի կը սեպուի, քան երկարաժամկետ ու, հետեւաբար, աւելի նպաստաւոր շահը: Ուր հաւաքականութեան բարօրութեան ի նպաստ գործելու մտածողութիւնը կը փոխարինուի այդ հաւաքականութիւնը շահագործելու մտածողութեամբ: Ուր «մեծ»երը, աւելի մեծնալու մարմաջէն տարուած, ոտնակոխ կ'ընեն «փոքր»երը:



Այս աշխարհի վրայ մարդկային կեանքի բարելաւումը միշտ ալ հիմնական նպատակներէն մին, եթէ ոչ ամենահիմնականը եղած է բոլոր փիլիսոփաներուն, իմաստասէրներուն, մարգարէներուն եւ յեղափոխականներուն, սկսած հին Արեւելքէն հասնելով մինչեւ ներկան: Զանազան կրօններու եւ փիլիսոփայութիւններու ծնունդն ալ արդիւնք եղած է այս նպատակի հետապնդման: Բայց երբ ասոնք, փոխան իրարհասկացողութեան, անցած են մրցակցութեան, ապա ոչ միայն շեղած են իրենց նպատակներէն, այլ նոյնիսկ դարձած են վնասաբեր: Վկայ կրօններու եւ տարբեր գաղափարախօսութիւններու միջեւ մղուած ակերիչ պատերազմները: Երբ տիրապետութիւնը դարձած է նպատակ, կորսուած է բուն նպատակը:

Քրիստոսէ առաջ 4-րդ դարուն յոյն փիլիսոփայ Արիստոտել, լաւագոյն որակ ունեցող մարդոց իշխանութիւնը սահմանեց Արիսթոքրասի (Aristocracy) բառով: Նկատելով որ ներկայիս ընդհանրապէս ոչ թէ լաւերը, այլ պատեհապաշտներն ու վատերն են որ կը տիրանան իշխանութեան, փնտեցիւք, որ ի՞նչ բառ լաւագոյնս կը սահմանէ անոնց իշխանութիւնը եւ գտանք Քաքիսթոքրասի (Kakistocracy) բառը, որ կը նշանակէ վատերու իշխանութիւն: Այս բառը հայերուս համար կրնայ շինծու նկատուիլ, բայց իրական բառ է: Արմատը յունարէն kakos բառն է, որ կը նշանակէ վատ: Ուրեմն ընթերցողի երեւակայութեան կը թողում, որ ո՞ր կրնայ մեզ առաջնորդել քաքիսթոքրասիի իշխանութիւնը:

Համաշխարհային երկրորդ պատերազմի բովէն անցած զօրավար, ապա ԱՄՆ-ի նախագահ Այզընհաուըրը, նախագահական իր վերջին պատգամին մէջ կը զգուշացնէր ամերիկացիները ռազմա-արդիւնաբերական համալիրի աճող հզօրացումէն, որ կը սպառնար ազատութեանց եւ ժողովրդավարական գործընթացի սահմանափակմամբ: 17 Յունուար 1961-ի իր ելոյթին մէջ ան կ'ըսէր. «Մեր աշխատանքը, պաշարները եւ ապրուստը բոլորն ալ իրարու հետ կապուած են: Այդպէս է նաեւ մեր հասարակութեան կառուցուածքը: Կառավարութեան խորհուրդներուն մէջ մենք պէտք է զգոյշ ըլլանք ռազմա-արդիւնաբերական համալիրի կողմէ չարդարացուած ազդեցութեան տիրանալէ, ըլլայ այդ ցանկալի, թէ անցանկալի: Զարաշահուող իշխանութեան աղէտալի աճի հաւանականութիւնը կայ ու կը շարունակէ գոյութիւն ունենալ: Մենք երբեք պէտք չէ թոյլ տանք, որ այս համակցութեան ծանրութիւնը վտանգի ենթարկէ մեր ազատութիւնները կամ ժողովրդավարական գործընթացները: Մենք ոչինչ պէտք է ընկալենք որպէս ինքնին: Միայն զգօն եւ բանիմաց քաղաքացին կրնայ պարտադրել պաշտպանութեան արդիւնաբերական եւ ռազմական հսկայ մեքենաները պատշաճ ներդաշնակել մեր խաղաղ մեթոդներուն եւ նպատակներուն, որպէսզի անվտանգութիւնն ու ազատութիւնը միասին բարգաւաճին»:

Դժբախտաբար, «զգօն ու բանիմաց քաղաքացի»ի նահանջին դիմաց, այդ հզօրացող ազդեցութեան արդիւնք եղան ակալի քան 250 փոքր պատերազմները, որ մղուած են այդ թուականէն ի վեր ու դեռ կը մղուին: Այդ հզօրացող ազդեցութեան արդիւնք է նաեւ Միացեալ Ազգերու Կազմակերպութեան եւ Արդարադատութեան Միջազգային Դատարանի ազդեցութեանց մաշումը: Մ.Ա.Կ.ի եւ անոր կից Դատարանի հիմնադրութեան նպատակը եղած է պահպանել միջազգային խաղաղութիւնն ու անվտանգութիւնը՝ կանխելով հակամարտութիւնները եւ աշխատելով վէճերու խաղաղ լուծման վրայ: Դժբախտաբար տարուէ տարի ականատես կ'ըլլանք այդ նպատակի մաշումին եւ անարդիւնաւետութեան, ի տես որոշ պետութիւններու սանձարձակ գործունէութեանց, նոյնիսկ՝ անոնց կողմէ Մ.Ա.Կ.ի եւ անոր կից Դատարանի որոշումներուն անտեսումին: Մեր նշած պատերազմներուն հազարաւոր միլիառներ ծախսուած են, միլիոնաւոր կեանքեր խլուած ու ահաւոր ակերումներ



պատճառուած: Պետութիւններ քայքայուած են եւ անոնց խաղաղ բնակչութիւնը ցիրուցան դարձած: Եթէ զինամթերքներու վրայ ծախսուած գումարները ծախսուէին բոլորի կեանքերու բարելաման վրայ, յստակ չէ՞, որ աշխարհ շատ աւելի լաւ վիճակի մէջ պիտի ըլլար ներկայիս: Բայց այդպէս վարուելու համար, ընդհանուրի շահով պէտք է առաջնորդուիլ: Սակայն երբ տիրապետելու մարմաջը գերիշխող է որեւէ ուժի կողմէ, տուժողը կ'ըլլայ ընդհանուր հասարակարգը: Եւ աշխարհը կը մատնուի այս տխուր վիճակին:

Թէ ո՞ր կրնանք յանգիլ այս ընթացքով, նշենք Այնշթայնի մէկ նախատեսութիւնը: «Չեմ գիտեր թէ ինչպիսի՞ զենքերով պիտի մղուի համաշխարհային 3-րդ պատերազմը, բայց գիտեմ, որ 4-րդը պիտի մղուի գաւազաններով ու քարերով»:

Պարզ է, չէ՞:

Մեր ընելիքը

Համաշխարհային այս կացութեան մէջ, ի՞նչ կրնայ ըլլալ մեր ընելիքը, որ ազգովին ոտնատակ չերթանք նոր կազմաւորուող աշխարհակարգի վերիվայրումներուն:

Նորութիւն մը ըսած չենք ըլլար եթէ առաջարկենք վերստին կարդալ մեր պատմահայր Խորենացիի «Ողբ»ը եւ դասեր քաղել հոնկէ: Վերստին կարդալ «Սասնայ Շոեր»ը եւ դասեր քաղել հոնկէ: Վերստին կարդալ Թումանեանի, Ռաֆֆիի, Պատկանեանի, Չարենցի եւ մեր այլ մեծերու կատարած ախտաճանաչումները ու աշխատիլ այդ ախտերու դարմանումին վրայ: Մեր ազգային կրթական համակարգը պէտք է ծանրանայ այդ դասերու տարածման վրայ, որով կարելի պիտի ըլլայ վերատեսութեան ենթարկել մեր ազգային մտածելակերպը: Անձնականէ դէպի ազգային: Ինքնախաբէութիւնէ դէպի ինքնաճանաչում: Պոռոտախօսութենէ դէպի քննական մօտեցում: Յուզականութենէ դէպի սառն դատողութիւն: Մեր ձախողութեանց համար օտարը այպանելէ դէպի սեպհական պատասխանատուութեան գիտակցութիւն: Օտարին վստահելէ դէպի ինքնապաշտպանութեան հզօրացում: Իրարու վրայ բռնանալէ դէպի իրարհասկացողութիւն: Երբ այս ուղղութեամբ աշխատինք, պիտի յաջողինք ստեղծել մշակոյթ մը, որ հետամուտ պիտի ըլլայ մեր հասարակութեան շահերու հետապնդման, քաջ գիտակցելով, որ միայն այդ միջոցաւ կարելի պիտի ըլլայ թէ՛ մեր անձնականը եւ թէ՛ մեր ազգայինը ամուր հիմերու վրայ դնել:

Արդեօ՞ք երազային է մեր մտածելակերպը, անիրական եւ անիրագործելի: Ո՛չ, երբե՛ք: Պատմութեան ընթացքին, այն պետութիւնները որոնք ապաւինեցան գաղափարի ու մտքի ուժին, կրցան հզօրանալ եւ տարածել իրենց ազդեցութիւնը: Բայց երբ ապաւինեցան միայն զենքի ուժին, անոնց տիրապետութիւնը արդէն վայրէջքի մէջ էր: Վայրէջքի մէջ եղող «մեծ»ը ամէն գնով պիտի փորձէ անկայունութիւն ստեղծել աշխարհի մէջ, որպէսզի կարենայ երկարաձգել իր տիրապետութիւնը: Ան պիտի հրահրէ պատերազմներ, պիտի փորձէ տնտեսական մենաշնորհներու տիրանալ, էական հիմնանիւթեր եւ պաշարներ իր տիրապետութեան տակ առնել, եւ այս ընթացքին, ան երբե՛ք հոգ պիտի չընէ, թէ որո՞ւ ազգային շահերը պիտի ոչնչացնէ: Վկայ վերջին քանի մը տասնամեակներուն Իրաքի, Լիպիոյ եւ Սուրիոյ պետութեանց քայքայումը՝ բռնապետերէ ձերբազատուելու եւ



Ժողովրդավարութիւն տարածելու շղարշին տակ: Այդ երկիրներու ժողովուրդներն ու պետական կառոյցները աւելի նպաստաւոր պայմաններու մէջ էին բռնապետերու օրով, քան անոնց տապալումէն ետք: Փաստ, որ մեզ պետք է հասկցնէ թէ ի՞նչ կը հետապնդեն «մեծ»երը:

Դժբախտութիւնը հոն է, որ ժողովրդավարութեան գաղափարը, որ մեզի նման փոքր ազգերու համար իրենց ազգային շահերը պաշտպանելու ամենէն գործնական եւ օգտաշատ միջոցն է, կ'ոտնակոխուի նոյնինքն ժողովրդավարութեան ռահվիրայ Ա.Մ.Ն.ի կողմէ, երբ տուեալ երկրի ժողովրդավարացումը չի համընկնիր անոր շահերուն: Վկայ՝ Մոսատտեղի ժողովրդավար կառավարութեան տապալումը Իրանի մէջ, 1953-ին: Վկայ՝ Այենտէի ժողովրդավար կառավարութեան տապալումը Չիլիի մէջ, 1973-ին: Պատճառը՝ ժողովրդավարութեան գաղափարի շահագործումն է նոյնինքն անոր ջատագով «մեծ»երու կողմէ: Այսօրուան Ա.Մ.Ն.ը 1950-1960-ականներու ժողովրդավար երկիրը չէ. գայն կը կառավարեն ռազմա-արդիւնաբերական համալիրն ու միլիարդատէրը: Այսօրուան Ա.Մ.Ն.ը եթէ չվերադառնայ այն սկզբունքներուն, որոնք նպաստեցին իր «մեծ» դառնալուն, ապա պիտի գտնուի վայրէջքի մէջ, որ Չարլի Չափլինի կարծիքով, կեանքը պիտի դարձնէ կատաղի եւ ամէն ինչ պիտի կորսուի:

Այս տխուր հեռանկարը լաւագոյնս դիմագրաւելու համար, մեզի կը մնայ վերադառնալ մեր ազգի մեծերու վերը նշուած դասերուն, զանոնք սերտել եւ գործադրութեան դնել մեր անձնական թէ հաւաքական կեանքին մէջ: Մօտ 150 տարի առաջ Ռաֆֆի կը գրէր. «Մենք չունենք ազնուականութիւն, առաջնորդներ, ղեկավարներ: Մեր ունեցածը վաճառականութիւնն էւ հոգեւորականութիւնն են: Վաճառականութիւնը աղբ է, իսկ հոգեւորականութիւնը միշտ դէմ է անհատի ազատութեանը: Նրանք ովքեր պատասխանատու են մեր անվտանգութեան համար, յանցագործ աւազակախումբ են»:

1988-ի շարժումը մեզ յուսադրեց, որ ի վերջոյ սկսած ենք անսալ Չարենցի պատգամին՝ որ մեր միակ փրկութիւնը մեր հաւաքական ուժի մէջ է: Այդ ժամանակ մենք գրեցինք.

Բռնցքուեցա՛ն ձեռքերն հայոց,
Ղարաբաղը դարձաւ Արցախ:
Ալ չի՛ քաշէ հայ մարդը ա իւ.
Միակա՛մ են սրտերն հայոց:

Բայց դժբախտաբար, յանցագործ աւազակախումբ մը եկաւ ոչնչացնելու մեր նուաճումը՝ պատճառ դառնալով արցախահայութեան տեղահանութեան իր դարաւոր հայրենիքէն:

Եթէ այսքանն ալ մեզ պիտի չսթափեցնէ մեր մէջէն գոյացնելու «արիսթոքրասի»ի որակաւոր եւ ազնուական իշխանութիւն, ապա դատապարտուած պիտի ըլլանք «քաքիսթոքրասի»ի աղէտներուն:



ՄԻՆՉ ՍՈՒՐԻԱՆ ԱՍՊԱՏԱԿԻ ՍՊԱՌՆԱԼԻՔԻ ՏԱԿ

ՀԱԼԷՊԱՀԱՅՈՒԹԻՒՆԸ ՎՃՌԱԿԱՍՕՐԸՆ ԿՐ ՏՈԿԱՅ

Պարոյր Յ. Աղպաշեան

Ահաւասիկ նոր տագնապ մը Միջին Արեւելքի մէջ, որ եթէ ամբողջովին նորութիւն չէր, բայց, անպայման մասամբ ակնկալելի ու սպասելի էր:

Տակաւին բռնագրաւեալ Պաղեստինի ու բռնադատեալ Լիբանանի բռնկող ու բռնկելի



օրակարգերը կը յամենան մնալ բարձրագոյն դիրքերու վրայ (որոնց անդրադառնալու առիթը ունեցանք ու պիտի շարունակենք անդրադառնալ), ահաւասիկ այժմ թիրախն է՝ Սուրիան, յատկապէս իր մեծագոյն քաղաք՝ Հալէպով, առաջին հերթին զայն բզքտելով, ապա, փորձելով հաշմել անոր ողջ գոյութիւնը:

Հաշուեյարդարը կը շարունակուի նոյն յարձակունակութեամբ, ծրագրապաշտութեամբ եւ ամբողջատիրութեամբ, արաբական աշխարհի

ամենէն մարտունակ, ազգայնական, արաբադրոշմ, սկզբունքամետ եւ անզիջողական երկիր մը փետրաթափելու, դիմափոխելու, արմատախլելու ու տարբադադրելու իր անգին էութենէն:

Շուրջ 12 տարիէ ի վեր, Սուրիան դարձած էր կարգ մը արաբական երկիրներու «կեր», օտար պետութիւններու «որս», նաեւ վարձկաններու ամբողջ ցանցի մը նշաւակ, որոնք, միասնաբար, կը հետապնդէին ու կը հալածէին զինք օղակել եւ ակօսել:

Կարելի չէղաւ այդ յօշոտումներով Սուրիան ծունկի բերել, ոչ ալ տապալել վարչակարգ կամ գրաւել իշխանութիւն, հակառակ անոր որ՝ մեծ վնասներ կրեց ան, նոյնիսկ ենթարկուելով մեկուսացման ու կղզիացման, բայց, կրցաւ յաղթահարել ներքին եւ արտաքին գրգռութիւններն ու միջամտութիւնները, ապացուցելով, որ ինք կը մնայ կառչած իր երկրին ու պետականութեան աներերութեան երթին, զայն նկատելով այն «փրկութեան լաստ»ը, որուն միջոցով պիտի կարենայ դարձեալ արաբական աշխարհի ու միջազգային ոլորտներուն մէջ, իր տեղը վերագրաւել եւ դերը վերադարձնել:

Լաւագոյն ապացոյցը իր այս վճռակամութեան այն էր, որ, վերջին Արաբական Իսլամական գազաթաժողովին, Սուրիոյ նախագահ Պաշշար Ասատ, մասնակցեցաւ անոր եւ երկար ժամանակ իր թափուր մնացած աթոռին վրայ բազմեցաւ, խօսք առնելով, խորհրդակցութիւններ ունենալով եւ իր երբեմնի յարգելի տեղը գրաւելով:

Անկախաբար անկէ, որ այդ գազաթաժողովը, չէղաւ այնքան գործնական եւ արդիւնաւետ, ոչ ալ Կազայի ու Լիբանանի հարցերը իրենց լուծումներով ու գործընթացներով չէղան (ու չեն) այնքան նպաստաւոր եւ օգտաբեր, բայց, գէթ, Սուրիան, իր աչքառու ներկայութեամբ, լուսարձակի տակ առնուեցաւ եւ, ոմանց յուշել տուաւ, որ ան կրնայ վերատիրանալ իր համարաբական դիրքին ու հարթակին:

Որոշապէս, այս էր պատճառը, որ լիբանանեան թղթածրարը, «հիւանդոտ ու դալուկ պահոց»ի մը մէջ զետեղելէ եւ շատերուն հաւատացնելէ ետք, թէ ամէն ինչ կ'ընթանայ հեզասահօրէն եւ դրականօրէն (), յանկարծ հայեացքները կեդրոնացան Սուրիոյ վրայ, ուրկէ կրնային բացուիլ նոր լոյսերու պատուհաններ, ինքնաբաւութեան ուղիներ եւ ինքնիշխանութեան շահեր, բաժանեալ եւ արուեստական քարտէսներ գծելու կամ ստեղծելու (որոնք, կը թուի թէ արդէն պատրաստ էին ու կը սպասէին), յարմար պահուն հնչեցնելու անոնց... ղօղանջները:



Այո՛, «սենարիոն» մշակուած էր, կը մնար ազդանշանը տալ, քանի խնդրոյ առարկայ կողմերը (Ամերիկա, Թուրքիա, Իսրայէլ եւ քովընտի բազմակողմ վարձկաններ), ներխուժէին եւ նուաճէին սուրիական տարածքներ ու քաղաքներ, իրենց սին ու փուճ լոգուններով փորձէին բնակչութիւնը կլանել իրենց «ուռկան»ներուն մէջ, այն հաւաստիքներով, թէ իրենց կատարածը լոկ ձերբագատուիլն է տիրող վարչակարգէն եւ կողմնորոշուիլ դէպի ազատման եւ ազատագրական բարձունքներ (՛), առանց ճշդելու եւ յստակացնելու, թէ այդ շարժումները ո՞ր կրնան առաջնորդել երկիրն ու ժողովուրդը:

Ի սկզբանէ յայտնի էր, որ շրջանին մէջ, յաջորդ եւ ուժեղ հարուածը կրնայ գալ Սուրիոյ գլխուն, որովհետեւ, անիկա կը նկատուէր (ու կը նկատուի) «պարարտ պատատ» մը, ուրկէ կը սկսի, կը տարածուի եւ կ'ամբողջանայ իսկական ընդդիմութիւնը ու հակառակորդութիւնը, ընդդէմ այն արինարբունները, որոնք հետամուտ են «գրպանելու» Միջին Արեւելքը, ապա, զայն ոչ միայն թուլացնելու, այլեւ ստեղծելու թշնամանքի բիրտ ու կարծր մթնոլորտ մը:

Այսօր, այդ թուխ ու ծուխ մթնոլորտը կը բոլորէ իր քանդողական շարասիւնը, այնպիսի ոլորապտոյտներով, թէ խորհրդաւոր շերտերը արդէն գործի անցած են, կը փորձեն հերկել ու կալել տարածքները, այն տպաւորութիւնը ձգելով, թէ իրենք բարի «սամարացի»ներ են, բայց, արդեօ՞ք այդպէս են եւ ո՞վ կը հաւատայ այդ զառանցանքներուն, իսկ հիմնականը՝ ո՞ր կարելի է տեսնել կամ լսել նման ձաբոտութիւնն ասեկոսէներ:

Անոնք՝ որոնք կ'ասպատակեն ժողովուրդներ, երկիրներ ու հողեր, ԳԻՏԱԿՑԱԲԱՐ եւ ՅԱՓՇՏԱԿԱԲԱՐ, կարծելով նուաճած ըլլալ զանոնք, արդեօք իրաւունք ունին իրենք զիրենք նկատելու մարդասէրներ, խաղաղասէրներ, ժողովրդասէրներ, երբ ամէն գնով յականէ-անուանէ, բացէն ի բաց, մարդ կը խժոժեն, սերունդ կը խոշատանգեն, հող կը պղծեն, անարդարութիւն կը սերմանեն:

Այս տիրող ու շարունակուող թոհուրոհին ու քառսին մէջ, հայութիւնը տագնապեցնող ու գերազանցող մեծագոյն ու գերագոյն «գերցնցում»ը Հալէպի կարգավիճակն էր, ասիկա այն ԹԹԽՄՈՐ Հալէպն է, որուն նկատմամբ անսահման սէր, գուրգուրանք ու հոգատարութիւն ունեցած է հայութիւնը, որովհետեւ՝ տարագրութեան մնացորդացը, Տէր Զօրէն Հալէպ հանգրուանած էր, հոն վերակոփուած, վերաթրծուած, վերանորոգուած ու վերականգնած էր, իր համատարած ամբողջականութեամբ, որպէս վերագարթօնք ապրած ու գոյատեւած հաւաքականութիւն:

Ասիկա այն Հալէպն է, որ հայութեան ՀԱՄԱԲԱԲԱԽՈՂ սիրտն էր, իր մտաւորականութեամբ, կրթաշէնութեամբ, եկեղեցապաշտութեամբ, մշակութակազմութեամբ, գաղափարականութեամբ եւ առհասարակ համահայկականութեամբ, որ ծնունդ տուած էր ալին բաշխեց ամուներէ ք, ընդ որուն՝ լիբանանահայութեան:

Ո՞վ ազգականութիւն ու մերձաւորութիւն, հայրենակցութիւն ու քաղաքակացիականութիւն, ընտանեկանութիւն ու խնամիականութիւն, հարազատութիւն եւ անմիջականութիւն չունէր ու չունի հալէպահայութեան հետ եւ՝ փոխադարձաբար, վերջին հաշուով, փաստ ըլլալէ չի դադարիր, որ Հալէպը միայն հալէպահայութեան օճախն ու երդիքը, թոյլքը չէր, այլ՝ ամբողջ հայութեան, երէկը՝ վկայ, այսօրը՝ առաւել եւս:

Ներկայիս, մեր գոյութեան էական յորդառատ աղբիւրներէն մէկը կը գտնուի աքցանուած, բայց, ոչ սանձուած պարիսպի մը մէջ, որ, սակայն կը մղկտացնէ, կը գերէ, կը գալարէ, կը կծկէ հայութեան հոգիները, ոչ միայն հոն զարգացող, հաւանական մագլցումներէն, այլ՝ սրտաբուխ հայագաղութի մը վիճակուելիք տխուր ճակատագիրէն:

Պէտք չէ մոռնալ, որ հալէպահայ գաղութը, իր հայապահպանումի սլաքներով, հայակերտումի հմայքներով, հայակոփումի մթերքներով, հայաթրծումի հիւսուածքներով, ամբողջական շտեմարան էր, որ հայոց նորագոյն պատմութեան մէջ դարձաւ դպրոց, հնոց,



դարբնոց ու մաշտոց, այն պայծառ հեռանկարով, որ ան լուսաւոր փարոսի դերի մը առաջնորդութեան մէջ կը գտնուէր:

Այս առիթով, արդեօք պատահականա՞ն է, որ Հալէպը կրկնակիօրէն կ'ենթարկուի տխուր ու խոցելի երկրաշարժերու, մէկը՝ երբ ամբողջովին ումբակոծուեցաւ, թալանուեցաւ, փլատակուեցաւ, փոշիացաւ, տեղահանուեցաւ, իսկ միւսը՝ այժմու անմխիթար վիճակին մատնուեցաւ, ուր մասնակի անդորրութիւն ու խաղաղութիւնը իսկ զլացուեցան անոր, գորշ ապագայի մը խաւարամտութիւնը դարձեալ ծաւալելով անոր երկնակամարին վրայ, որ երբեք լաւատեսութիւն իսկ չի ներշնչէր:

Բացայայտ է, որ նոյն դաւադիր ձեռքերը եւ նոյն ճիւղներն են, որոնք կը գործեն, արաբական այս երկիրը մասնատելով ու զայն առնելով իրենց արիւնլուայ ճանկերուն մէջ:

Մէկ կողմէն, նախկին դասալիք սուրիացի զինուորներ-բանակայիններ, իրենց ձախողած երազը կը փորձեն իրականացնել, միւս կողմէն՝ արտաքին վերէժխնդիր զինուժեր կը հետամտին Սուրիան ստրկացնել:

Երկու պարագաներուն ալ թշնամի ուժերը ՄԷԿ են, որոնց յաջողութեան համար, պատրաստ են Սուրիան ոտնակոխ ընել, մինչեւ որ անիկա տեղի տայ ու մտնէ ամերիկեան-իսրայէլեան-թրքական մթագնած հովանոցին տակ:

Մակայն, պիտի կարենա՞ն իրենց վերանորոգուած սատանայական գործողութիւններով ու բռնութիւններով հասնիլ իրենց չարագործեալ ծրագիրներուն իրականացման, երբ Սուրիան պիտի չարտօսէ, որ իր երկիրը կոտորակուի եւ արիւնահեղութիւնը շարունակուի:

Արաբականութիւնը, որ այս երկրին մէջ խորապէս ու լայնօրէն բոյն դրած է, ապահովաբար պիտի դառնայ անառիկ վեմ, ուրկէ ան պիտի մերկացնէ ու ջլատէ այն բոլոր մակաբոյծները, որոնք կը յանդգնին պղտորել եւ աղաւաղել իր գոյութիւնը:

Հետաքրքրական է, ինչո՞ւ բռնապետական ու վարձկանական թունաւոր ձեռքեր, առաջին հերթին իրենց ախորժակները սրեցին Հալէպի վրայ եւ հոնկէ սկսան իրենց քանդիչ թափանցումները փորձել տարածել:

Միթէ՞ պարզ չէ, երբ Թուրքիան կրնայ նկատուիլ անոր հեղինակը, իր նախորդ յարձակումէն ետք, վերանորոգելու իր խուժումները, երբ հայերը պարպեց իրենց ծննդավայրէն, թալանեց անոնց ինչքերը ու հարստութիւնները, տեղահանութիւն պատճառեց, այս անգամ ալ, իր միւս դաշնակիցներուն միացած, իրենց աւերները կատարելագործելու, այս անգամ ալ քրտական շրջանները կազմալուծելու դիտաւորութեամբ:

Հալէպահայութեան գոյավիճակը, գրեթէ յայտնուած է խճճուած վիճակի մը մէջ, ուր ներկայիս եթէ յարաբերական անդորրութիւն կը տիրէ, ո՞վ կ'երաշխաւորէ որ այդ ընթացքը կրնայ մնալ նոյնը կամ յաւելեալ վատթարացումներ չարձանագրուին:

Կը մնայ, որ Հալէպահայութիւնը, հակառակ իր վճռակամութեան ու տոկունութեան ճիգերուն, անկոտորում հաւատքով կառչած է իր ինքնութեան, սպասելով այն պահուն, երբ ամէն ինչ աւելի կը յստականայ ու կը պարզուի, իսկ կողմնորոշումը եւ արեւելումը կրնան նոր հորիզոններ բանալ, անշուշտ, եթէ խաւարին մէջ բազմած ուրուականները տարբեր ծուղակներ չլարեն:

(Պէլրուօ)

27/12/2024

«Մեր Դիտարկումով ու Դատումով» Շարքէն:

ԱՐԺԵԳԻՆ

«Բոլոր երջանկութիւնները,
որ մեզ անհասանելի են,
սոսկ անուրջ են»:

Ժ. Սուլարի



ԱՄՆ նոր նախագահի ընտրութիւնով ենթադրաբար կը լինեն փոփոխութիւններ աշխարհաքաղաքական միջավայրում: Երեւոյթը ոչ տեղական, այլ համաշխարհային բնոյթի է, եւ տարբեր երկրներում նրա հետեւանքները ունեն իրենց դրոշմը, ցաւօք մեր երկիրը եւս ենթակայ է նման վիճակի: Անհերքելի իրականութիւն է Թրամփի վերընտրուելը, որին իրենց մասնակցութիւնն են բերել նաեւ ԱՄՆ բնակուող մեր հայրենակիցները^[1], գուցէ նրա ընտրական խոստումներից հրապուրուելով կամ անձնական տարբեր հաշիւներից մղուած, բայց այդ չէ կարելոր, այլ որքանով նոր ընտրեալը տեր կը լինի իր խոստումներին, որ միայն դիմերեսն են եւ ի՞նչ են թաքնուած դարձերեսին՝ ապագայի առումով: Գաղտնիք չէ, որ կարելոր չէ, թէ ո՞վ է երկրի

նախագահը. այնտեղ վճռական խօսք արտասանողն են ԱՄՆ պետական անվտանգութեան հիմնարկի ղեկավարութիւնը եւ աշխատակազմը: Մամուլից յայտնի է, որ ՀՀ հետ յարաբերութիւնների ոլորտում աշխատելու համար արդէն նշանակուել է ԱՄՆ պետական անվտանգութեան հիմնարկի ղեկավարներից այն անձը, որ փորձառութիւն ունի ՀՀ հետ կապերի գործում, բայց անյայտ է, թէ նոր նախագահի առիթով ի՞նչ ուղղութիւն եւ ի՞նչ տարբերութիւն կ'ունենան այդ կապերը նախկինի համեմատ: Ենթադրելի է. թերեւս նաեւ պարտադիր, որ մեր իշխանութիւնը նոր քայլեր եւ նոր մօտեցումներ ձեռնարկի ԱՄՆ հաստատութիւնների հետ, որի հետ մէկտեղ, եթէ ներքին նոր քաղաքական մթնոլորտ^[2] չառողջանայ եւ ճիշտ դիրքի չդրուի, ապա ո՛չ Թրամպը եւ ո՛չ մի այլ օտար երկրի նախագահ ընդունակ չէ եւ չի ցանկանայ ներազգային մեր խնդիրները կարգաւորել:

Ի դէպ, թոյլատրելի է ենթադրել եւ զգուշանալ, որ Թրամփի ՀՀ-ին գուրգուրալու նպատակը ոչ թէ մեզ սիրելն ու օգնելն է, այլ պատրուակ է հաշիւներ մաքրել Ռուսիայի հետ, ծրագիր, որից ԱՄՆ չի կարողանում հրաժարուել 1945-ից ի վեր: Նա ցանկանում էր այն իրագործել հարաւային Կովկաս ներգրաւուելով, որ միջոց էր երկրորդ ճակատ ունենալու: Վրացիների քաղաքական անկայուն վիճակը պատրուակ էր նրանց համոզելու, որ անյաջող փորձ էր, քանզի աւելի իմաստուն լինելով մեր հարեւանները ընտրել էին չէզոքութիւն ԱՄՆ-ի հետ՝ յարաբերութիւնները վատթարացնելու գնով, որից յետոյ փոխարէնը արագ ընտրուեց ՀՀ եւ արագ կազմակերպեցին համատեղ ռազմական վարժութիւններ, հրաւիրելով ՊՆ-ին ՆԱՏՕ կցելով իրենց ներկայացուցչին ՀՀ պաշտպանութեան կազմում:

Բնական է, որ ՀՀ-ի հետ «բարեկամանալու» միակ նպատակը Ռուսիային հարուածելը եւ տարածքից հեռացնելը չէ, այլ նաեւ ամրապնդուել Կովկասում եւ ներմուծուելով թուրք, ռուս, պարսիկ եռակողմի գործունէութիւնը խախտելը (déstabilisation), քանզի որքան շատ բախումներ (conflict) լինեն ի սփիւռս աշխարհի ԱՄՆ-ի համար շահաւէտ է: Բացի այդ,



Իրանին մերձենալն եւ պատժելն լրացուցիչ նպատակ է, քանզի վերջինս իսլամական այն պետութիւններից է, որոնք ԱՄՆ եւ Հրէաստանը դասել են սատանաների շարքին:

Բացառուած չէ, որ Իրանի նկատմամբ պատժամիջոցները հնարաւոր է իրագործել նաեւ Ադրբեջանի տարածքից, ուր հաստատուած են հրեայ զինավարժութեան բազմաթիւ կենտրոններ: Այս ենթադրեալ կարծիքները փաստելը՝ ժամանակի կարօտ է:

Կարծում եմ դժուար է ՀՀ-ի քաղաքական, տնտեսական կամ բարոյական խնդիրների կողքին լռութեան մատնել այն ինչ կատարուում է եկեղեցու շուրջը, որ միայն Բագրատի արած խամաճիկի քայլերը չեն, որի ախտը աւելի գրգռուելով տարբեր տխմարութիւններ է բացականչում՝ յաճախ աններելի, բացի այդ դարձեալ կաթողիկոսական պատարագ մատուցուեց կիրակի 10 նոյեմբերին Էջմիածնի տաճարում Արցախից տեղահանուածների կացութեան բարելաման եւ իրենց տուն վերադարձը ապահովելու պատգամով, որի պատարագիչն էր ինքը Արցախի հոգեւոր առաջնորդը:

Ոմանք դեռ չեն հասկանում, որ արդի պայմաններում որեւէ վերադարձ նշանակում է ընդունել Ադրբեջանի քաղաքացի դառնալու պայմանը, որ անժխտելի իրականութիւն էր մինչեւ 1994 թուականի մեր յաղթականը, բայց դրութիւնը տարբեր է 44-օրեայ դժոխքից յետոյ եւ Արցախի վերադարձը՝ սոսկ անուրջ: Կայ անհասկանալի եւ անհանգստացնող մէկ դրուագ. շրջուող լուրերից պարզուում է, որ գաղթը ի գործ դնելուց առաջ Բաքուն դիմել է Ստեփանակերտին հանդիպել բանակցելու նպատակով, բայց վերջինները անյայտ պատճառներով մերժել են, թերեւս իրենք գիտեն, թէ ինչու եւ այսօր փորձում են պատարագ մատուցելով դուր բացել: Այս դրուագը չի նշանակում Ալիեւի բարեացակամութեան որեւէ քայլի կամեցողութիւն, քանի որ նա չի դադարում սպառնալ արեւմտեան երկրներին ՀՀ սպառազինելու մէջ՝ շեշտելով, որ իր զինուած ուժերը լիարժէք մարտական պատրաստութեան վիճակում են եւ. եթէ որեւէ մէկը ցանկանայ փորձել՝ իր ջախջախիչ պատասխանը կը ստանայ, միեւնոյն ժամանակ ընդգծելով, որ իրենք պատերազմի ձգտում չունեն, քանզի ստացան ի՛նչ ցանկանում էին:

Մեր պետական այրերը ամէն տեսակով մտածելու տեղ ունեն եւ յուսանք բաւարար իմաստութիւն կ'ունենան տիրող խառնաշփոթ պայմաններում այնպէս նաւարկել, որ յարաբերութիւնների հաւասարակշիռ պայմանները մնան իրենց անհրաժեշտ մակարդակին: Ա՛յդ է մեր գոյատեւելու արժեզիւնը:

11-11-24
Ռուբէն Յովակիմեան


ՏԵՍԱԴԱՇՏ

ՉԱՅՆ ԲԱԶՄԱՑ՝ ՉԱՅՆ ԱՍՏՈՒԾՈ՞Յ

Կըսուի, ըսուած է Vox populi, vox Dei, այսինքն՝ ժողովուրդի ձայնը Աստուծոյ ձայնն է: Հայերէն դարձուածքն է՝ «ձայն բազմաց՝ ձայն Աստուծոյ»:
Իրապէ՞ս:
Ինչպէ՞ս հաւատալ այդպիսի անհեթեթութեան, երբ աշխարհի ամենէն զարգացած, ամենէն հզօր երկիրը համարուող պետութեան նախագահ կրնայ ընտրուիլ գիտէք թէ ով: Ժողովուրդի ձայնո՞վ: Ո՞ր ժողովուրդի: Եւ այդ ձայնը Աստուծո՞յ ձայնն էր: Տեղին չէ՞ հարց տալ՝ ո՞ր Աստուծոյ:



Այս տողերը գրի կ'առնեն, որովհետեւ մեր մէջ քիչ չեն հանրային կարծիք ըսուածին կարեւորութիւն տուողները: Ժողովուրդի ձայնը կամ հանրային կարծիքը նոյն իմաստը ունին:



Կրնանք բազմաթիւ սահմանումներ կամ հումանիշներ տալ այդ հանրային կարծիք ըսուածին. օրինակ՝ տգիտութեան կարծիք, ուժի կարծիք, դրամի կարծիք, շուկայի կարծիք, սովորաւորութեան կարծիք եւ այլն: Ինչո՞ւ, – որովհետեւ այդ բոլորը եւ տակաւին այլ ազդակներ իրենց դերը ունին հանրային կարծիքի կազմաւորման, աւելի ճիշտ մշակման մէջ:

Արդ, որո՞նք են հանրային կարծիքին վրայ ազդեցութիւն ունեցող գլխաւոր ուժերը, ըլլայ դրական թէ բացասական առումով:

Առաջին հերթին, եւ երկա՛ր ժամանակ, եկեղեցին ու պետութիւնն էին զայն ձեւաւորողը: Սուրբ գիրքերը, – ի՛նչ կրօնէ որ բխած ըլլան, – եւ սահմանադրութիւնները, – ի՛նչ պետութեան որ պատկանած ըլլան, – անկասկած ոչ միայն նպաստած, այլեւ պարտադրած են այդ կարծիքը. պատմութիւնը լի է պարտադրանքներու, եւ աստոնց հետեւանք՝ բռնութիւններու, պատերազմներու օրինակներով: Բոնապետական վարչակարգերը՝ հին Հռոմէն մինչեւ Օսմանեան կայսրութիւն ու Խորհրդային Միութիւն եւ մինչեւ ներկայ պետութիւններէն շատեր իրենց «գորավիզ» հանրային կարծիք վայելած են ու կը վայելեն տակաւին:

Այսօր սակայն բազմացած են ազդեցութիւն բանեցողները, որոնց պարտադրանքները յաճախ ծածուկ են, անզգալի, քաղցրօրէն փոխանցուած. օրինակ, ծխախոտի պահանջքը, որ որպէս թէ անզերազանցելի վայելք մըն է, որ տարիներով, տասնամեակներով քարոզուած է արտադրիչ ընկերութիւններուն կողմէ, գեղանի կիներու նկարներով զարդարուն ազդերով, եւ հանրային կարծիքը դարձած է ի նպաստ ծխելուն՝ հակառակ առողջապահական բոլոր նախազգուշացումներուն: Աստուծոյ ձայնո՞վ է եղած այդ, թէ՛ արտադրիչներու հարստացման շահագրգռութիւններով:

Նոյնն է պարագան շուկայի բոլոր արտադրանքներուն, յատկապէս պերճանքներու պարագային, որոնք կը ստեղծեն պահանջքը չզրկուելու այդ պերճանքներէն՝ հսկայ բնակարաններէ, ծախսալից ճամբորդութիւններէ, ճոխ խնջոյքներէ ու տօնախմբութիւններէ եւ այլ շքեղ հաճոյքներէ: Եւ մարդիկ կը ստիպուին աւելի ու աւելի աշխատիլ, որպէսզի ձեռք ձգեն նիւթական միջոցները, կամ կը դիմեն ապօրինի միջոցներու, գողութեան, նոյնիսկ սպանութիւններու՝ այդ նպատակով: Vox Dei?

Այդ բոլորին հետեւանքով ալ կը նահանջեն կրթութիւնը, ընդհանուր զարգացումը, հարցերը քննական աչքով դիտելու ունակութիւնը, նոյնիսկ ինքնութեան գիտակցութիւնը: Արդիւնքը՝ հանրային կարծիքը կը հիմնուի անտեղեակութեան վրայ, տգիտութեան՝ վրայ. անձնական նպատակներու եւ նախասիրութիւններու մղումով՝ փոխանակ հաւաքական բարօրութեան հետապնդումի: Հանրային կարծիք, ի՞նչ հանրային կարծիք:

Փակագիծի մէջ կ'արժէ այստեղ յիշել, որ ԺԹ. դարու վերջաւորութեան, երբ հայ յեղափոխական շարժումը կը կազմակերպուէր, ստրկութեան մէջ դարերով ապրած հայ ժողովուրդը կընդդիմանար այդ շարժումին՝ նախընտրելով շարունակել ապրիլ ամենէն անմարդկային պայմաններու մէջ, քան թէ զէնք վերցնել ու պաշտպանել ինքզինք: Այսօր ալ նոյնը չէ՝ որեւէ երկրի մէջ, երբ ընդհանրութեան կարիքներուն համար մատ չեն ուզեր շարժել, եթէ իրենց անձնական կարիքները չափով մը գոհացում կը ստանան:

Գալով հարցախոյզներուն, որոնք որպէս թէ ժողովուրդի տեսակէտերը կը փորձեն ի մի բերել ու «հասարակաց տեսակէտ» մը մատուցել, անոնք ալ միջոց մը չեն՝ միթէ այդ տեսակէտը



ձեւաւորելու, թէկուզ փոքրամասնութեան փոքրամասնութիւնը հանդիսանան հարցախուզուողները:

Չմոռնանք. այսօր հաղորդակցութեան գլխաւոր սպասարկութիւնները, – գրաւոր, բանաւոր թէ պատկերաւոր, – սակաւաթիւ մեծ դրամատէրերու ձեռքն են, ու անոնց միջոցաւ է, որ «կը զարգանայ» հանրային կարծիքը:

Չմոռնանք տակաւին մէկ այլ պարագայ, որ առկայութիւնն է առցանց հարթակներու, – նոյնպէս մեծագոյն դրամատէրերու սեփականութիւնը, – որոնց վրայ ամեն տեսակ «կարծիք» կրնայ տարածուիլ, ամեն տեսակ սուտ՝ բարեկամի թէ թշնամիի կողմէ: Եւ մենք՝ որպէս այդ հարթակներուն հետեւողներ, պատրաստ ենք ընկալելու, «կլլելու» այդ սուտերը, անոնց համաձայն դառնալու եւ գործադրելու անոնց հրահանգները, մանաւանդ գնելու անոնց ապրանքները՝ ձեւ տալով այդ հանրային կարծիք ըսուածին:

Աւելցնեմ, որ վաղը նաեւ արուեստական բանականութիւնը իր այլազան կանոնաշարերով (algorithms) պիտի ըլլայ հայթաթողը այդ սուտ եւ իրաւին, ձեւաւորողը՝ «ժողովուրդի ձայնին», առանց իսկ մեզի հարցնելու: Ու մենք պիտի հաւատանք, թէ մեր կարծիքն է, որ կ'արտայայտուի:

Ուղեղալուացքո՞վ ստեղծուած կարծիքը:

Գուցէ ձայն բազմաց, բայց երբէ՞ք ձայնն Աստուծոյ...

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ

«Հորիզոն», տարեվերջի բացառիկ, 2024-12

ԵՐԲ ՄՇՈՒՇԸ ՓԱՐՍԻ

Յակոբ Միքայէեան

27/12/2024



Անոնք որ կը կարծեն Սուրիան արդէն դրախտի վերածուեցաւ, քիչ մը թող համբերեն, ժամանակ թող անցնի, մշուշը թող փարատի, որպէսզի իրականութիւնը երեւի: Ճիշդ է որ ճնշուած վիճակէն յանկարծ դուրս գալն ու մաքուր օդ շնչելը ամէն ճնշուած էակի երագն է, սակայն Ճիշդ է նաեւ, որ նեխած օդը մէկ անգամէն չի մաքրուիր:

Ամբողջ աշխարհը կը հետեւի Սուրիոյ յեղաշրջուած վիճակին, հեռուստակայանները

այնքան լեցուն են ընդհանրապէս դրական մեկնաբանութիւններով ու նոր իրադարձութիւններու ներկայացումով, որ քառասային չըսելու համար՝ գոնէ պղտոր մթնոլորտին պայծառացումը կարծես հեռու չէ, բայց շատ մօտ ալ չէ: Հակառակ որ գրոհայիններու ղեկավար Ճոլանին շատ հանգիստ կ'երեւի իր բոլոր ընդունելութիւններուն եւ ելոյթներուն ընթացքին ինքզինք գուսպ պահելով, նոյնիսկ ժպիտը դեմքին, սակայն Սուրիոյ անցնող տարիներուն վիճակին ծանօթ մարդիկ գիտեն, թէ այս խառնարանն ու խառնաշփոթ վիճակը կարգի բերելն ու դասաւորելը ոչ թէ ամիսներ, այլ տարիներ կը պահանջէ:

Անհամբեր մարդիկ արդէն ծայրայեղ յայտարարութիւններով հանդէս կու գան, համբերատար մարդիկ դեռ կը սպասեն իրերու պարզաբանման: Քրիստոնէաներով բնակեցուած սուրիական գիւղաքաղաքի մը հրապարակին մէջ տեղացիք խանդավառ այս



մթնոլորտէն՝ շատ գեղեցիկ տօնածառ մը կը գետեղեն. յաջորդ օր կը տեսնուի, որ ծառը կրակի տուած են: Դէպքը հպանցիկ չանցնիր, խնդիրը կը մեծնայ, տեղացի քրիստոնէաները արդարութիւն կը պահանջեն ծայրայեղ իսլամ կրօնամուկ երկրի նոր դեկավարութենէն: Ես մէկ օրինակ յիշեմ, դուք յիշածս հարիւրապատկեցէք՝ մօտաւոր պատկերացում մը ունենալու համար նոր դեկավարութեան առջեւ ծառացած ու ծառանալիք խնդիրներէն:

Արդէն հազիւ երկու շաբաթ անցած, խաղաղած ընդհանուր իրավիճակին մէջ մէկ կողմէն իսրայէլեան ռազմական օդանաւերը քարուքանդ ըրին սուրիական հարիւրաւոր ռազմակէդրոններ, գրաւեցին Կոլանի երկու երկիրներու շփման գիծի վրայ ոչ-ոքի տարածքը, որ կը հովանաւորուէր ՄԱԿ-ի դէտերուն կողմէ, ապա սկսան յառաջանալ սուրիական սահմանակից Գունայթրա քաղաքը գրաւելու: Միւս կողմէ, ամերիկեան հովանաւորութեամբ գործող քրտական «Սուրիական տեմոքրաթիք ոյժեր» ը, արդէն կռուի բռնուած է Թուրքիոյ, կամ ըստ իրենց՝ թրքամետ զինուորական կազմակերպութիւններու հետ: Թուրքիոյ հետ առճակատուիլը վտանգաւոր նկատելով, անոնք համաձայն գտնուեցան նոր կազմուելիք սուրիական ազգային բանակին մաս կազմելու:

Ասոնք գլխաւոր հարցերն են, որոնց կից կան անհաշիւ կողմնակի հարցեր: Հալէպը լաւատես է, սակայն օրեր ամբողջ ջուրէ գրկուած էր, ելեկտրականութիւնն ալ դեռ ելեկտրածին սարքերու վաճառած ամփերներուն շնորհիւ է, նոյնիսկ եթէ ժամանակաւոր կառավարութիւնը նոր սակացոյցով կը փորձէ զսպել չարաշահողներու ախորժակը: Այս վիճակին մէջ Սուրիայէն դուրս ապրող կարգ մը գրիչներ զարմանք կը յայտնեն, թէ ո՞ր են հալէպահայ գրողները, ինչո՞ւ լուռ են:

Հալէպահայերը իրենց իմաստուն քաղաքականութեան շնորհիվ երկրի իրարայաջորդ բոլոր իշխանութեանց հետ միշտ ալ լեզու գտած են ու ապահոված համայնքին բարօր վիճակը, որուն շնորհիւ մեր ազգային բոլոր կառոյցները՝ եկեղեցիները, դպրոցները, ակումբները եւ բոլոր ձեռնարկները շարունակած են սահուն գործել: Հիմա այդ կոչ ընողները այս բոլորը չեն գիտեր, թէ՞ տակաւին իրերը չհանդարտած կ'ուզեն, որ մարդիկ անտեղի յայտարարութիւններով հրապարակ իջնեն, հինը դատափետտեն ու նորը գովաբանեն: Հալէպի երեք համայնքապետերն ու գլխաւոր կազմակերպութիւնները շատ լաւ գիտեն ինչպէս շարժիլ, որ կացութեան հաւասարակշռութիւնը պահպանուի:

Նոր տարի է, լաւատեսութեամբ զինուինք, բարին մաղթենք Սուրիոյ եւ աշխարհին ալ խաղաղութիւն:

ՅԱԿՈՒ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ



ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ՓՈՒՆՋ ՍԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷ



ԱՂՕԹՔԻ ՊԷՍ

Ես սիրեցի առաւօտեան
 Երկինքը ջինջ ու կապուտակ,
 Ինչպէս մանկան գուլալ աչքեր
 Անապական, անմեղունակ,
 Եւ ցօղն վճիտ որ կը ցաթէ
 Որպէս երկնի արցունք լուսէ,
 Կ'իջնէ յուշիկ տերեւներուն,
 Թերթիկներուն ծաղկանց գունեղ,
 Նոր մաքրութեամբ մը կը լուայ
 Հոգին անոնց նուրբ ու անտես,
 Որ չխամրին, ցնծան գուարթ
 Ու գովերգեն լոյսը անմեռ...

Եւ ցօղին պէս կաթ-կաթ կու գան
 Նոր-նոր միտքեր ու յոյզեր բորբ,
 Կը համբուրեն ճակատս բաց,
 Միրտս շոյեն գգուանքով լոյս,
 Որ նորոգուիմ առտուան պէս,
 Ժանգ չնստի սրտիս, հոգւոյս,
 Լուսերգութեամբ զիս կ'ողողեն,
 Կ'օծեն զիս նոր տեսիլքներով:
 3/11/2018

.....

ՄԵՐ ԵՐԿԻՐԸ

Քու հողիդ հետ շաղախեր ենք հազարամեայ մեր երազը,
 Մեր սերերը, կարօտները, մաքառման տենդն ու տենչերը,



Քու հողիդ հետ շաղախեր ենք մեր քրտինքն ու թանկ արիւնը,
Ցեղին կանչը, ճիգը արդար, մրրիկներու դէմ պայքարը...

Ժայռերէդ բիրտ, ապառաժեայ կերտեր ենք մենք խաչքար ու վանք,
Հողմէն ահեղ, վիշապաձայն երգ ենք հիւսեր ու շարական,
Ցից լեռներէդ բարձրացուցեր աղօթք վսեմ, սրբազնաշունչ
Ու Նարեկեան խոստովանանք մեր բիր մեղաց ի քաուրթին...

Երակներուդ մէջ ենք ցօղեր մեր արիւնը կաթի՛լ-կաթի՛լ,
Որ դուն ապրիս, յարատեւես ընդ հուր, ընդ սուր մնաս կանգուն,
Աշտարակուիս Մասսեաց նման մաքուր ու վեհ լուսատեսիլ,
Դառնաս վսեմ խորհրդանիշ հայ հոգիին մաքրամաքուր...

Քանզի եթէ դաւաճանենք քու սուրբ հողիդ հազարազանձ,
Կը մնանք սոսկ մի անհոգի գորշ բազմութիւն թափառական,
Փերեզակներ ու փռշի ազգ ցրուած չորս կողմն լայն աշխարհին,
Կ'անէանանք, ի չիք դառնանք, կ'անհետանանք անդիմագիծ:
3/1/2019

.....

ՏԱՂՍ

Երկնէն ցօղ իջաւ բառս համբուրեց,
Աստղերու մրմունջն բերաւ հնչիւնիս,
Խորհուրդով օժեց եւ լուսազարդեց,
Մոգական փայլ մը տուաւ պարզ տողիս...

Լուսաթել տողիս հետ թելածեցի
Երկնին մէջ լագուր, հոգիներէն ներս,
Ցոլքեր քաղեցի անոնց անհունէն,
Նոր ճաճանչներով տաղս հիւսեցի...

Տաղս նեկտարն էր սեր-ծաղիկներուն,
Քաղուած շիթ առ շիթ անոնց սիրտերէն,
Արցունքէն վճիտ, հառաչանքներէն,
Մանուած լոյսովը սիրոյս ճառագուն...

Տա՛ղ երկնապարգել եւ երազահել,
Հոգիներէն նես կաթ-կաթ դուն ցաթէ
Մէր, յոյս ու հաւատք, լոյսի ճաճանչներ,
Օրհնութիւն տեղա՛ մանանա որպէս...
5/12/2016

.....

ԲԱՌԵՐՍ

Հատի՛կ-հատի՛կ ձեզ հաւաքեմ
Մտքիս, սրտիս տաք քուրայէն,
Շունչս փչեմ որ կեանք առնէք,



Դառնաք յոյսի արշալոյսներ...

Մէկի՛կ-մէկի՛կ եւ ձեզ փնջեմ
Հայրենական անդաստանէն,
Ողբի, որբի սուրբ հողերէն,
Ձեզ ընծայեմ կեանք հըրաշէկ...

Կաթի՛ լ-կաթի՛ լ ձեզ փրցընեմ
Ծանրածանր լռութենէս,
Հեքս խառնեմ որ ամոքէք
Բիւր ցաւերը տառապահեւ...

Ձեզ քաղեմ իմ արտասուքէն,
Ճեղքուած քարի արանքներէն,
Յոյսի, լոյսի ծիածան որպէս,
Կեանքի նոր ծիլ, զարթօնք որպէս...

Ձեզ ընծայեմ գորովս տաք,
Գուրգուրանքս, սէրս անափ,
Արմատ նետէք, ծաղիկ բանաք,
Դառնաք շքեղ, վառ անդաստան:
16/12/2024

.....

ԱՂՕԹՔ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ
Շնորհակալ եմ, Տէ՛ր,
Ամէն մէկ պահին գոր պարգեւեցիր,
Լուսաբացերուն իմ վարդահեղեղ,
Իրիկուններուն մեղմիկ, քնքշահեզ
Ու գիշերներուն խոկումներով լի:

Շնորհակալ եմ, Տէ՛ր,
Բիւր բիւր խոհերուն եւ բորբ յոյզերուն,
Որ այցելեցին քուն թէ արթմնի,
Վառեցին կայծեր մտքի ու սրտի,
Քուրաս դարձուցին կրակ բռնկուն:

Շնորհակալ եմ, Տէ՛ր,
Որ կրցայ մատչիլ Քու Լոյսին անեզր,
Վառելու մոմս Քու ճաճանչներէդ,
Խաւարս ցըրել, մէզս փարատել
Ու Քեզ օրհներգել գիշեր ու ցերեկ:

Շնորհակալ եմ, Տէ՛ր,
Տրուպիս պարգեւած բիւր շնորհներուդ,
Կաւս հողեղէն հոգուով օժտելու,
Որ ես կարենամ ոչ միայն հացիւ,



Այլ նաեւ Բանիւ ապրիմ, տոչորիմ:

Շնորհակալ եմ, Տէ՛ր,
Որ թելեր տուիր որ խոյանամ վեր,
Ճաշակեմ համը երկնի անհունին
Եւ քիմքս օծեմ բառերով վսեմ
Որպէս սուրբ աղօթքն իմ երախտիքի:

Շնորհակալ եմ Քու անհուն Փառքիդ,
Որուն ծնկեցի հաւատքով մը ջինջ,
Որ դարձաւ ինձի բոյժ ու սպեղանի,
Յուշեց ինձ բառեր խորհուրդով խորին:

Գիտեմ բառերս անգօր են, տկար,
Բայց անոնք բիւին ակունքէն սրտիս,
Դուն սրտիս նայիր, ո՛վ Տէր գթառատ,
Զանոնք ընդունիր բարեհաճութեամբ:
30/12/2024

.....

ՕՐՀՆԷ, ՏԷՐ ԻՄ

Օրհնէ, Տէ՛ր իմ, բերքս խոնարհ,
Լոյս բարութեամբ է ան օծուած,
Ընդունէ զայն որպէս աղօթք
Միրտէս բխած լուսագորով...

Դուն ես բարեաց պարգեւատու,
Դուն ես ստեղծիչ տիեզերքին,
Բիր-բիր մտաց հըրաշածին,
Բիր-բիր խոկմանց աստուածատուր...

Պայծառացուր միտքս, հոգիս
Ի սպաս Լոյսիդ, Բանի ստեղծիչ
Եւ հեռացուր բաժակն լեղի
Բիր փորձութեանց, Գթած Հայր իմ...

Թէ մոլորիմ իմ ճամբայէս,
Վերադարձուր կէանքիս հունին,
Որ կը տանի դէպի Լոյսը,
Դէպի բարին, սիրալոյսը...

Մի՛ թողուր, Տէ՛ր, զիս առանձին
Կեանքի բագում թակարդներուն,
Հսկէ վըրաս գիշեր ու տիւ,
Չսայթաքիմ ես շուարուն...



Թէ սխալիմ, Դուն ուղղէ զիս
Լոյսովդ բորբ եւ ահարկու,
Զգաստ պահէ սիրտս, հոգիս
Փորձանքներուն մէջ բիրաւոր...

Եւ արժանի ըրէ նուաստս
Որ գործերով բարի, արդար
Բարեբանեմ Քեզ, Տէր Աստուած
Եւ օրհներգեմ Լոյսդ անմահ:
7/1/2024

ԳԻՐԻ ԵՒ ԳԻՐՔԻ ՍԻՐԱՀԱՐԸ՝ ՅՈՎՍԷՓ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ

ԱՆԻ ԹՈՐԱՆՏԵԱՆ

Յովսէփին որոշումն է եւ այդ որոշումը չունի ետդարձի ճամբայ. ան որոշած է նուիրուիլ հայ գիրին ու գիրքին...:



Հալէպ ծնած ու հասակ առած, որպէս բանասեր-գրականագետ շրջանաւարտ եղած Երեւանի Պետական համալսարանէն, տասնամեակներէ ի վեր Ամերիկա հաստատուած Յովսէփը ոչ միայն չէ շեղած իր որդեգրած ուղիէն, այլ տարիներու թաւալումին հետ պողոտայ դարձուցած է այդ ուղին, հաստատապէս վճռելով գիր-գրականութեան ասպարէզին մէջ իր ընդունակութիւններուն վրայ գումարել նաեւ հրատարակիչի շնորհակալ դերը, այս անգամ հետեւելով իրմէ 20 դար առաջ ճամբայ ելած գիտութեան եւ արուեստներու հովանաւոր մեկենաս Գայոս Կիլնիոսին, եւ որպէս խոհակից ունենալով համակրելի կինը՝ Գարոյը:

Նալպանտեան ամուլը հիմնած է «Յովսէփի եւ Գարոյի Նալպանտեան մատենաշար»ը՝ 2005ին, կեանքի իրաւունք տալով աւելի քան ինը տասնեակ երկերու, ինչպէս նաեւ սատար կանգնելով գրական արժէքաւոր ստեղծագործութիւններու ծնունդին:

Համալրել հայ գիրը լոյսին բերող հովանաւորներուն թիւը, երբ յայտնապէս անսահման չեն նիւթական կարելիութիւնները, միայն զոհողութեան եւ նուիրումի արդիւնք կրնայ ըլլալ: Զուր



չէ, որ Յ.Նալպանտեանին, ի թիւս տարբեր գնահատագիրներու եւ շքանշաններու, շնորհուած է նաեւ Սփիւռքի նախարարութեան «Մայրենիի դեսպան» պարգեւը:

Կեանքի մէջ իւրաքանչիւր անհատ իր ուրոյն ուղին կ'ընտրէ, եւ երբ այդ ճամբան կը հարթէ հաւատարմօրէն ու նուիրումով, արդիւնքը անխուսափելիօրէն կը գոհացնէ ոչ միայն զինք, այլեւ իր անմիջական շրջապատը:

Հաւատարիմ իր ընտրած ուղիին՝ Յովսէփը միշտ ջանաց նոր իմաստով ու գաղափարներով հարստացնել զայն: Արդիւնքին մէջ, ան հեղինակ է աւելի քան 34 գիրքի, որոնք ոչ միայն գրուած, այլեւ հրատարակուած ու սփռուած են՝ իւրօրինակ կապ ու կամուրջ ստեղծելով իր ու իր համախոհներուն, ինչպէս նաեւ Սփիւռքի ու հայրենիքի միջեւ:

Տարին անգամ մը, երբեմն աւելի, կ'այցելէ Հայաստան՝ ամրապնդելով կապը հայրենի հողին, հայրենաբնակ մտաւորականներուն, գրական նորութիւններուն հետ: Աննկարագրելի նուիրումով շրջայցեր կը կատարէ երկրին մարզերն ու շրջանները՝ հանդիպումներ կազմակերպելով ուսանողներու, դպրոցականներու, գրադարաններու աշխատակիցներու, ուսուցիչներու, դասախօսներու հետ, բոլորին բաշխելով իր գիրքերէն եւ մանուկի մը պարզութեամբ անոնց հետ բաժնեկցելով իր ուրախութիւնը:

Այս ամէնը թարմ լիցք կը հաղորդեն Յովսէփին եւ ան վերանորոգ ուժով ու հաստատակամօրէն կը շարունակէ իր սիրելի աշխատանքը:

Բազմազան են Յովսէփին հետաքրքրութիւնները եւ ան իր գրիչին համար չի խուսափիր ընտրել այնպիսի նիւթեր, որոնք, պարզ տրամաբանութեամբ, կը թուի թէ հեռու են իրմէ: Օրինակ՝ «Միջազգային Դասական Երաժշտութեան Համառօտ Պատմութիւն», հրատարակուած Երեւան, 2022ին, 67 երաժշտահաններու կեանքին եւ գործունէութեան մասին, նաեւ վերջին 66 էջերը կը կազմեն 6-20րդ դարերու դասական երաժշտութեան ժամանակագրութիւնը: Օգտակար հատոր մը, որ կրնայ երաժշտական կատարողական արուեստի հետեւորդ աշակերտի մը սեղանի գիրքը ըլլալ:

Ուրիշ զարմանալի հատոր մը, դարձեալ հրատարակուած Երեւան, 2022ին՝ «Կերակուրներու Համառօտ Պատմութիւն»ն է, որուն բուն նպատակն է, տարբեր հեղինակներու եւ խոհանոցներու ուսումնասիրութիւնը ընելէ զատ, ուստեստեղէնը միջոցի վերածել եւ շեշտը դնել աւանդոյթներու, Արեւմտեան Հայաստանի եւ Կիլիկիոյ տարբեր շրջաններուն յատուկ կերակրատեսակներու, հայկական անուանումներու եւ հայ հեղինակներէ մէջբերումներու վրայ:



Իր հրապարակագրական եռահատորին մէջ Յովսէփ Նալպանտեան ընդգրկած է բազմաբնոյթ նիւթեր՝ «Տգիտութիւնը Մեծագոյն Չարիք», «Հայ Գիրքը, Կարդալը Եւ Մենք», «Լեզուներ Եւ Բառեր», «Մեր Անընդունելի «Հայկական» Մականունները», ընդարձակ այլ նիւթ մը՝ «Հայկական Ամէնօրեայ Դպրոցներու Վիճակը Սփիւռքի Տարածքին», «Արդի Հայ Գիրքը Ամերիկայի Մէջ», մտահոգութիւն արտայայտող էջեր՝ համահայկական հիմնադրամ մը ունենալու հրամայականի շուրջ, նաեւ ազգային այլ լուրջ խնդիրներու մասին:

Թուարկումը, առանց չափազանցութեան, կրնայ էջերու վրայ տարածուիլ, սակայն ժլատ մէջբերումներն անգամ ցոյց կու տան հեղինակին անկեղծ մտահոգութիւնը, ազգային խնդիրներուն լուծում գտնելու իր ազնիւ ճիգը, եւ ամենէն կարելորը՝ «յանձնուիլ» բայը իր բառարանին մէջ չընդունելու վճռակամութիւնը...:

Յաւելնք, որ «Յովսէփ եւ Գարոլին Նալպանտեան» անունը կրող երեք գործող գրադարան կայ Հայաստանի մէջ: Ան նուիրած է մօտ 17 հազար հատոր գիրք:

Ահա գործունէութիւն մը, որ համակ նուիրում է, եւ նուիրում, որ օրինակելի է:

ԿՂԶԻՒՅԻ ԿՂԶԻՒՄԵՋ

ԱՐԱՄ ԱՃԵՄԵԱՆ



Հելիոպոլսոյ Նուպարեան ազգային վարժարանը ասարտելէս ետք, Գայիանէ դասընկերուհիիս հայրը՝ Սահակ տէր Շաքարեան քահանան, որս խորհուրդ տուաւ զիս ուղարկել Կիպրոս՝ Մելգոնեան եղբայրներու հիմնած գիշերօթիկ հաստատութեան մէջ շարունակելու հայեցի երկրորդական ուսումն: Տէր հայրը նոյնիսկ անձամբ խորամուխ եղաւ, որ առանց ամենադոյզն բացառութեան հետս տանիմ Կիպրոսէն պատուիրուած բոլոր զգեստները: Ուղարկուած ցանկէն կը յիշեմ հետեւեալը.-

- երկվեցեակ մը գոյգ գուլպաներ,
- երկվեցեակ մը ներքնաշապիկ (մենք այն ատեն ֆանելլա կըսէինք),

- երկվեցեակ մը շապրնկեր (այսինքն՝ վարտիկ),
- կէս երկվեցեակ ճերմակ շապիկներ,
- մութ գոյնի պաշտօնական տարագ եւ փողկապ,
- գոյգ մը ֆութպոլի կօշիկներ,
- գոյգ մը սուր գամերով վազքի կօշիկներ (spikes),
- կարճ տաբատ (basketball եւ volleyball խաղալու համար), «էսփատրին», «պոռնոս», overall եւայլն:

Վերը նշուած կարգ մը մարզական պիտոյքներու մասին գաղափար անգամ չունէի՝ մանաւանդ որ մարմնամարզով չէի զբաղէր: Ճիշդ է, այդ ամառ սկսեի էի յաճախել



Հելիոպոլսոյ ՀՄԸՄ-Նուպար ակումբի նորաշէն մարզադաշտը բանակումի համար հոն գիշերելու բաց երկինքի տակ եւ մասնակցելու արիներու եւ արենոյշներու խարոյկահանդէսին: Կարծես ազատ ժամանցի բոլորովին նոր բնագաւառ մը յայտնաբերէի: Մելգոնեան Կրթական Հաստատութիւն հասնելուս պէս՝ մեծ ոգեւորութեամբ հազայ մարզական կարճ տաբատս, կապեցի վազքի նոր կօշիկներս եւ սկսայ միայնակ վազել ֆութպոլի դաշտին շուրջ: Հազիւ հասած էի երրորդ շրջանը բոլորել, երբ հաստատութեան սկաուտապետը՝ Պր.Կիրեղեան, ընդմիջեց վազքս եւ դէմքին թթուած արտայատութիւն մը տալով՝ բարկացած հարցուց,

—Ի՛նչ կընես:

—Չե՛ս տեսներ, որ կը վազեմ,— հարցումով պատասխանեցի հարցումին, առանց որեւէ յետին նպատակի:

—Որ այդպէս է, այլե՛ւ ոտքդ սկաուտական ճամբարը չդնես,- սպառնալով սաստեց ան:

— Լա՛ւ, չեմ դներ,- ըսի, եւ շարունակեցի ընդհատուած վազքս՝ ճամբան մտածելով ինչո՞ւ համար ասանկ ըսաւ: Աւելի ուշ տեղեկացայ, թէ նոյն օրը սկաուտական ժողով տեղի ունեցած էր, որուն չէի ներկայացած: Ի՛նչ իմանայի, թէ հոն պէտք է գտնուէի: Ոչ մէկը զիս տեղեակ չէր պահած:

Մեր դասարանին մէջ քանի մը անձեր կային որոնք աչքի կիյնային իրենց յատկութեամբ: Լեւոն Լիպարիտեանը դպրոցին ամենէն երկարահասակն էր եւ մեր դասարանի պատասխանատուն: Ետեւը կը նստեր մեզի հսկելու համար: Քովը կը նստեր Անդրանիկ Քէօշկերեանը, որուն չես գիտեր ինչու «օդերեւոյթ» կը կանչէին: Թերեւս իր խումար աչքերուն համար: Հոգելոյս Կարպիս Գալըպճեանը դասարանին ամենաբիրտ բռնակալն էր: Ան միամիտ տղոց վրայ կը յարձակէր առանց պատճառի, դաժան կերպով կը ծեծէր եւ կը ծաղրէր: Ան սովորութիւն ունէր ետեւէն մատիկ նետելու: Բոլորը կը զգուշանային ձեռքը իյնալէ: Բայց այդ բացասական յատկանիշներու կողքին, ան ունէր նաեւ բացառիկ ձիրքեր: Գեղագրութեան մէջ ոչ մէկը կրնար հետը մրցիլ. ան դպրոցին չորս սափրիչներէն ամենավարպետն էր: Բայց կը սիրէր տղոց իր ետեւէն վազցնել՝ մազերնին չկտրելու համար: Իմ մազերս առանց այլեւայլի անմիջապէս կը կտրէր՝ պայմանաւ որ մարզական պիտոյքներս եւ «օվրօլ»-ս ուրիշին չխոստանայի:

Այստեղ շատ երկար պիտի ըլլար անդրադառնալ բոլոր դասընկերներուս մասին: Միայն նշեմ այսքանը. իմ ամենամտերիմ ընկերներս էին՝ Լիբանանէն եկած Յովհաննէս Մինասեանը, Յարութիւն Ճերէնեանը եւ Նազարէթ Սիւթճեանը: Դասերէն ետք «Ժան»-ին հետ կը պտըտէի մարզադաշտին շուրջ՝ իր ափաշափ transistorէն ունկնդրելու մեր սիրած արաբական երգերը (ինքը ամենաշատ Ֆարիտ Աթրաշ կը սիրէր, իսկ ես՝ Ապտէլ-Հալիմ): «Ճերէնը» ֆրանսերէն լեզուին լաւ կը տիրապետէր եւ ներկայութեանս գոց կարտասանէր Լամարթինի բանաստեղծութիւնները: Գալով «Միւթ»-ին՝ ան ալ կը սիրէր սկիզբէն մինչեւ վերջ հետս երգել Նակաթ էլ-Սադիրայի بحبه و قصادي Երգը՝ մերժուած գաղտնի սիրոյ մասին: Վահէն արաբական ռիթմերը կը սիրէր թմբկահարել սնամէջ, արձագանգ հանող որեւէ մակերեսի վրայ, ըլլա՛յ հագուստներու պահարանը, կամ գրասեղանի դարակիին կափարիչը:

Ես բնատրութեամբ միշտ արդարամիտ եղած եմ դասընկերներուս նկատմամբ: Անարդարութիւն կոչուածը երբեք չեմ հանդուրժած: Ոմանց, փոխանակ իրենց անուններով կանչելու, կարգ մը տղաք կը գործածէին նուաստացուցիչ ածականներ: Բարձրագոյն դասարանցիներէն Յակոբ Մաղրբեանը մականուններ կախելու մէջ անգերագանցելի էր: Ան աչքի ինկող անապաւէն ու անպաշտպան տղոց կը դարձնէր իր սրամտութեան թիրախը: Բոլորիս առջեւ իր ձեռքը ինկողին ծաղր ու ծանակի կենթարկէր՝ ձեւացնելով թէ պարզապէս կատակասէր էր: Այդ առումով ես գերզգայուն էի ենթականերուն հանդէպ: Քանի մը անգամ ալ փորձեց վրաս պիտակներ փակցնել, սակայն իրմէ՛ գատ գործածող չեղաւ այդ անուանումները: Միայն Կարպիսը կը գործածէր այդ ածականները, մանաւանդ երբոր



խոշտանգէր իր հերթական գոհին: Կարգ մը աշակերտներ հաճոյք կը ստանային դիտելով ծեծ ուտողները: Պատկերացո՛ւր ինչ կըլլայ հոգեկան վիճակդ, երբ չարախնդութեամբ քեզ յորջորջեն «Ոչխա՛ր», «Ճնճղո՛ւկ», «Ճո՛ւճ», «Օղերեւո՛յթ», «Ղաւո՛ւն», «Պոմպէո՛ւս» կամ «Բզէ՛զ»: Շատ տհաճ էր այդ երեւոյթը, որ տարածուած էր գիշերօթիկին մէջ: Պիտակդ ստանալուդ պէս այլեւս պէտք է մոռնայիր անունդ եւ համակերպէիր ստրուկի կարգավիճակիդ:

Ես զերծ մնացի ուրիշը ծաղրելէ՝ հակառակ որ դէմքիս խորհրդաւոր ժպիտը երբեմն տեղիք կուտար թիրիմացութեան: Մեր դասարանի ամենակարճ աղջիկը, Թագուհին, որ ժպիտս լաւ չէր հասկցած, օր մը զիս այպանելով ըսաւ՝ «Դուն ալ կարճահասակներուն վրայ կը խնդաս»: Անշուշտ պիտի նախընտրէի դէմքիս տալ անելի լուրջ արտայայտութիւն: Սակայն ինձի կը պակսէր դերասանական այդ տաղանդը: Իրաւ որ մեզմէ իւրաքանչիւրը եզակի էր իր տեսակին մէջ:

Gian Carlo Menotti երգահանին Amahl and the Night Visitors մանկական օփերայի դերասանները՝ Պր.Սեպուհ Աբգարեանի գեղարուեստական ղեկավարմամբ: (Դժբախտաբար նկարը կը պակսի հոս): Ես ստանձնած էի երեք մոզերէն մէկուն մնջախաղը:

ԼԵԶՈՒԱԿԱՆ ՀՆՆՈՒՔՆԵՐ



Ժողովածուն կը մէկտեղէ ականարկներու փունջ մը, ուր հեղինակը, իբրեւ ուսուցիչ, կը պատմէ ու կը մտորէ արեւմտահայերէնի պահպանման ու զարգացման խնդիրներուն եւ սփիւռքահայ դպրոցի մասին: Այստեղ դէմքերը, դէպքերը եւ վայրերը իրական են, մտահոգութիւնները՝ համազգային:

Ահաւասիկ թիւ 6-ը:

6.- Բարեկենդանը

Դպրոցական ունեցող ամեն ծնողք կը նկատէ անշուշտ, որ ամեն կէսօր, դպրոցէն վերադառնալուն, զուակը նորութիւն մը կը բերէ՝ արտայայտութիւն մը, վարմունք մը, ճաշակ մը, համոզում մը, տիպար մը: Ու իմ իլէգա, որ նոր-նոր մանկապարտէզ կ'երթայ, կէսօր մը ինձի ի՛նչ բերէ հանիք:

- Գիտէ՞ս, - կ'ըսէ,- Սուփըրմանը Հայկ Նահապետին կը յաղթէ:

Ա՛յս էր պակաս:

- Չէ՛, տղա՛ս, - կ'ըսեմ,- Հայկ Նահապետը անպարտելի է, դուն գիտես, Տորք Անգեղը, Արամ Նահապետը, Առիւծ Միւրը, Սասունցի Դաւիթը...

- Չէ՛, - կը պատասխանէ,- Սուփըրմանը, Սփայտըր-մանը, Պաթմանը եւ Նինճաները կը յարձակին անոնց վրայ եւ կը յաղթեն, հա՛, կը յաղթեն... Դուն չես գիտեր:

- Իսկ ո՞վ ըսաւ, որ կը յաղթեն, - կը հարցնեմ:

- Ճորճիկը, Նժդեհը, Սահակը...

- Բայց չէ՛ որ դուն Տորք Անգեղը տեսած ես, - կ'ըսեմ,- եւ գիտես, թէ որքա՛ն քաջ է ան:



Այդպէս կ'ըսեմ, որովհետեւ կը պնդէր, թէ ինք տեսեր է Տորք Անգեղը հսկայ ժայռի մը վրայ առիծ մը քանդակելու պահուն: Ինծի այդ ժայռն ալ ցոյց տուած է գիւղին մէջ, մեր տան մօտիկ տեղ մը:

Մանկական երեւակայութիւնը հրաշագործ է:

- Այո՛, այո՛, - կ'ըսէ,- բայց Մփայտըրմանը քաջ է, հա՛ ...

Այս գրոյցի պահուն, տէ՛, հայր ես, ամբողջ էութիւնդ տակնուվրայ կ'ըլլայ: Կարծես կը խանդես կամ կը նուաստանաս, որովհետեւ ինչ որ տուեր ես՝ ան կը մերժէ ահա եւ ինք իրը կը գտնէ քեզմէ անկախ, ամեն օր քիչ մը աւելի նուագ քուկդ կ'ըլլայ կարծես, ամեն ճկոյթ մը մեծնալուն փարսախներով կը հեռանայ քեզմէ, կը դառնայ աշխարհի՛ն գաւակը:

Միւս կողմէ բնական օրէնք կը համարես, որ կեանքը փոխուի, ու փոխուի՝ շուկայական թելադրութիւններով. հիմա կ'ըսենք՝ համաշխարհայնացումի ամենակոյլ ախորժակներով: Այդպէս է, որ կը փոխուի տարազը, կը փոխուի խոհանոցը, կը փոխուին ըմբռումներն ու հաւատալիքները, լեզո՛ւն կը փոխուի:

Սակայն կը մխիթարես ինքզինքդ, որ տղուս այդ նոր հերոսները պիտի մեռնին, որովհետեւ շուկան նոր հերոսներու պատկերով ապրանք պիտի տեղայ վաղը:

Բարեկենդանը կը մօտենայ: Մանկապարտէզներուն մէջ Բարեկենդան պիտի գայ: Ծնողներէն կը խնդրուի, որ այսինչ օրը մանուկները ծպտուած բերեն դպրոց: Երեկոյ մը տղուն հետ կ'իջնենք շուկայ, մտմտալով թէ ի՛նչ ծպտում յարմար պիտի ըլլայ անոր համար: Կը փորձենք մտնել մանկական իրեր ու խաղալիքներ վաճառող բոլոր խանութները: Հայ մայրեր, հայրեր, մեծ քոյրեր բերնէ բերան կը վխտան խանութներուն մէջ: Մանուկներ անշուշտ: Եւ խանութներուն մէջ դէզերով պահանջուած ապրանք: Խնդրե՛մ, էստի՛ համեցէք, Մուփըրման, Մփայտըրման, Պաթման, Նինճաներ...

Կը մտածեմ, որ քաղաքիս այս կողմերու վաճառականները Յովի. Թումանեանի պատմած Բարեկենդանէն ի՛նչ պակաս են, որ այսպէս մեր հոգը տանելով՝ մեր Բարեկենդանն ալ կը տանին: Օ՛, սա ամենակարող նորաձեւութիւնը: Միթէ նոյնը չէ՞" այն՝ որ մեր Սուրբ Սարգիսէն մինչեւ Տառնտագ (Տեառնընդառագ) Վալանթայն կը բուրէ ներկայիս:

Ու կը մտածեմ, որ մենք, համօրէն, ճիգ չենք խնայեր մեր մանուկները՝ ճորճիկը, Նժդեհը, Սահակը, հրապուրելու մեր գրականութեան, բանասիրութեան եւ պատմութեան հերոսներով, բայց շուկայի համը աւելի թովիչ կը դառնայ: Իսկ մեր օգնութեան տիկնանցները միթէ՞ չեն տեսներ այս շուկայական Բարեկենդանը, որ այդ հերոսները տարագաւորելով հրամցնեն մանկապարտէզներուն եւ անոր շահոյթով նպաստ մըն ալ տնտեսէն իրենց ծրագիրներուն:

Ու դեռ բան մը աւելի:

Եւ այդ «աւելին»՝ բովանդակութիւնն է, որուն մենք կու տանք «հայեցի դաստիարակութիւն» անունը:

... Ու պզտիկը խանութ խանութ կը քաշքշենք, իբր աւելի լաւ բան մը առնելու համար, երբ տղան ոտքը կը զարնէ գետին ու կ'ըսէ.

- Ես Մփայտըրմանը կ'ուզեմ:

Վե՛րջ:

ՅԱԿՈՒԲ ԶՈՒԱՔԵԱՆ



ՕՐԵՐԸ ՓՈԽՈՒՄԾ ԵՆ, ՏՂԱՄ

Լիզա Բանճարճեան Թելվիզեան

ՏԱՐԲԵՐԱԿ21

7 ՅՈՒՆՈՒԱՐ, 2025

— Մա՛ւ, ո՞վ է այդ կինը, որ մեզի հետ խօսեցաւ:

— Մա՛ւ, այդ մարդը ո՞վ է...

Յանկարծ վրդովմունքի ալիք մը կը դեզերի ներսիդիդ: Հարցուփորձի հետաքրքրաշարժ առիթ մը կը ստեղծուի զաւակիդ համար: Ան կ'ուզէ զիտնալ, որոշ անձի մը ո՞վ ըլլալը, առանց տեղեակ ըլլալու, թէ այն նոյն անձը իր «քիչ մը հեռու» արինակիցներէն մէկն է:



Մտածումներու շարան մը կը տողանցէ մտքիդ մէջ. հարց կուտաս, թէ ի՞նչ պատճառով հարազատներ սկսած են հեռանալ իրարմէ եւ քաշուիլ իրենց պատեաններուն մէջ: «Օրերը այդպէս պարտադրեցին»-ը համոզի՞չ պատճառաբանութիւն մըն է արդեօք: Երեք տարի առաջ, տղուս դպրոցին առջեւ, ինքնաշարժիս մէջ նստած, հայերէն երաժշտութիւն մը կ'ունկնդրէի եւ կը սպասէի

աշակերտներուն արձակման ժամուն: Քանի մը անվերջանալի վայրկեաններ մնացած էր զանգը հնչելու, երբ յանկարծ լայն ժպիտով տարեց կին մը ինծի մօտեցաւ:

— Լիզա, *եսվրում*, լա՛ւ ես. միշտ կու գաս այստեղ տղուդ առնելու, օր մըն ալ մեզի ելի՛ր սուրճ մը խմէ:

«Անահիտ քոյրիկ»-ն էր, մօրս երկրորդ զարմուհին: Ան տղուս յաճախած դպրոցին դիմացը գտնուող շէնքին մէջ կը բնակէր: Անահիտին ընտանիքէն մաս մը գաղթած էր, մաս մըն ալ անդիի աշխարհը մեկնած, իսկ ինքը որպէս «բեկոր» մը մնացած էր իր մեծ ընտանիքէն:

— Անշո՛ւշտ, Անահիտ քոյրիկ, շատ կը փափաքիմ, մօտ օրէն անպայման կը հանդիպիմ: Հարազատի մը հետ հանդիպումը անցեալի յուշեր վերակենդանացուց անոր մէջ, եւ հին ու քաղցր օրերու անուրջներուն յանձնուելով՝ կարծես վերանորոգուեցաւ: Գոհունակութեան ժպիտ մը ուրուագծուեցաւ. դէմքին վրայ, ուր խորունկ ակօսերը, տարիներու հոսքին հետ, իրենք զիրենք պարտադրած էին արդէն:

— Որքա՛ն աստենէ զիրար չենք տեսած...

Ու փաթթուեցաւ ինծի. թրջուած աչքերը սկսած էին ուրախութենէն պայծառանալ ու փայլփլիլ:

Նոյն վայրկեանին աշակերտերը սկսան արձակուիլ դպրոցի մայր մուտքէն: Քիչ ետք նշմարեցի տղաս, որ դէպի մեզի կը մօտենար:

— Տղա՛ս, Անահիտ քոյրիկն է, Ազնիւ մեծօրդ երկրորդ զարմուհին:

Հարցում եւ ժպիտ միաւորող խառն արտայայտութիւն մը զձագրուեցաւ տղուս դէմքին վրայ: Ապա ըսի:

— Տղաս է, Գեղամը:

Անահիտը անմիջապէս փաթթուեցաւ տղուս. կարծես կ'ուզէր կարօտը առնել իր հարազատներէն, որոնք երկար աստենէ «աչքէ հեռու» մնացած էին: Ապա դառնալով տղուս ըսաւ:

— Ես եւ մեծմամադ միշտ իրարու կ'այցելէինք, քրոջ մը պէս էինք. հիմա օրերը փոխուած են տղա՛ս...

Հրաժեշտ տալէ ետք Անահիտին, ինքնաշարժին մէջ, դէպի տուն վերադարձին՝ տղաս հարց տուաւ, թէ ի՞նչպէս ինքն ու Անահիտը բնաւ իրարու չէին հանդիպած:



Ի՞նչ պատասխանէի...

Պահ մը մտածելէ ետք ըսի:

— Ինքը տարեց է այլեւս. երիտասարդները պէտք է որ իրեն այցելեն: Ազգականական կապերը պէտք է միշտ աշխոյժ պահել, որպէսզի տարիներու ընթացքին «օտարներ» չդառնանք իրարու:

Բոլորս ալ կեանքի արագընթաց հոսանքին մէջ կը սուրանք: Կեանքի տարբեր ծալքերուն մէջ ծուարած՝ կը փորձենք «բնական» կեանք մը ապրիլ, առանց նկատի առնելու շատ մը «նուրբ» իրողութիւններ: Մեր գաւակները առիթը չեն ունեւած իրենց ընդարձակուած ընտանիքներուն հետ յարաբերութեան մէջ մտնելու: Անմիջական արինակիցներու հետն է, որ կը շփուին միայն: Նոյնիսկ եթէ օր մը մէկ-երկու ազգականի պատահամամբ հանդիպին, շատ հաւանաբար իրարու չճանչնան: Հակառակ անոր որ ներկայիս հաղորդակցութեան այլեւայլ միջոցներ գոյութիւն ունին հարազատներու հետ կապ պահելու համար, սակայն այլեւայլ պատճառաբանութիւններ ալ գոյութիւն ունին...

Երբ ընտանիքի մը տարեցները կը մեկնին այս աշխարհէն, երիտասարդները իրենց արագահոս եւ բազմազբաղ առօրեային «անձնատուր» եղած՝ ժամանակ չեն գտներ յարաբերութիւններու: Տարիներու ընթացքին, սեղմ հանգոյցները կը թոյլնան:

Պատկանելիութեան զգացումը եւ ազգականներու հետ միասին ըլլալու հաճոյքը ինքնաբերաբար կը նսեմանան: Հարազատներու հետ հաւաքուիլը, մտերմական կապերը, տօնական կամ այլ առիթներով այցելութիւնները կը չքանան: Ի՞նչ է պատճառը... մեր հեւ ի հեւ ապրելակէ բալը, անտարբերութիւնը, եսասիրութիւնը, ընկերային ցանցէ ըր, թէ օրերը փոխուած են, տղա ս...

Լիզա Բանճարճեան Թելվիզեան

ԱԿՆԹԱՐԹՆԵՐ



ՈԳԻՆ բարձր պահելը ամէնէն մեծ յաղթանակն է, գոր կարելի է տանիլ ընդդէմ կեանքի հազարանուն դժուարութիւններուն, մարդկային նենգութիւններուն, մարդկային փոքրոգութիւններուն, ճակատագրի հարուածներուն...

Ամբողջ մարդկային պատմութիւնը գուցէ պատմութիւնն է, վերջ ի վերջոյ, մարդկային ոգիի անպարտելիութեան ընդդէմ հազարամեակներու ամէնէն դաժան ու դժիւեմ պայմաններուն եւ պարագաներուն...

.....

Ես-ի գոռոգութիւնը սխալ հասկցուած արժանապատուութիւն է... Առաջինը շատ անգամ քաղքենիացած փուճ բարքերով կը սնանի, կը բքի, կը հպարտանայ ի ցոյց իր նեղ ես-ին, մինչ երկրորդը մարդ էակի բուն արժանաւորութիւնը կը հաստատէ՝ հաւատարիմ մնալով զայն բնութագրող բարոյական, հոգեմտաւոր արժէքներուն եւ կը գերադասէ իր նեղ ես-ի



ցանկութիւնները զոհաբերել յանուն իր մարդկային բարձր արժանաւորութեան, ճշմարիտ արժանապատուութեան:

.....

Թէկուզ ամպերու ետին, թէկուզ պահ մը մթագնած, բայց ԼՈՅՍԸ միշտ կայ՝ անոնց համար, որ կրնան զայն տեսնել...Բայց կը բաւէ՞ն աչքերը, կը բաւէ՞ արդեօք արտաքին տեսողութիւնը՝ զայն տեսնելու, զայն զգալու համար: Ներքնատեսութիւնը կամ սիրտը թէ ներքին գիտակցութիւնը արդեօ՞ք էական չէ՝ ԼՈՅՍԸ զգալու, լոյսը ըմբռնելու, լոյսը ըմբռնչիւնելու համար մանաւանդ...: Իսկ լոյսով լեցուիլը կամ լիանալը յատուկ է, կը խորհիմ, բարի եւ վեհ հոգիներուն, որոնք կեանքի ամէնէն խաւարամած պահերուն նոյնիսկ, գիտեն լոյսին ձգտիլ, անով յուսադրուիլ, անով արբենալ: Առանց լոյսի, չի կրնար կեանք գոյութիւն ունենալ: Նմանապէս, լոյսը կը գերիշխէ ամէն բարի, գեղեցիկ ու վսեմ արարքներու մէջ...«Եւ ես կ'երթամ դէպի աղբիւրը լոյսին», պիտի գոչէր Դանիէլ Վարուժան, ատիկա դարձնելով կեանքի գերագոյն նպատակ ու իմաստ:

.....

Լռութիւնը խորունկ է, ան հոգիները կը պեղէ, նոր խորացումներու կ'ուղղորդէ անհատը, ինքնաճանաչման կայծեր կ'արձակէ, տիեզերական անսահման տարածքներ կ'ընդգրկէ...Քաջասիրտները միայն կրնան դիմանալ անոր անդնդային խորութեան, անոր տիեզերական մենութեան զգացումին:

.....

Շատ քիչեր կրնան դիմանալ փառքի, դրամի, պաշտօնի ԳԱՅԹԱԿՂՈՒԹԵԱՆ, լսել միայն իրենց ՄՐՏԻ ձայնը, հաւատարիմ մնալ իրենց ԽՂՃՄՏԱՆՔԻՆ...Վերջին բառը այնքան խորիմաստ է, քանզի անիկա կը բաղկանայ «խիղճ» եւ «միտք» բառ-արմատներէն: Իսկ եթէ մարդկային մտքին միանայ խիղճը եւ երկուքը միասնաբար ուղղորդեն մեր կեանքը, յայնժամ մարդ էակը չի զիջիր իր ԱՐԺԱՆԱԻՈՐՈՒԹԵՆԷՆ, չի դառնար ՄՏՐՈՒԿԸ յոռի կիրքերու, շահամոլութեան կամ այլ մոլութիւններուն...ԿՇՌԱԴԱՏՈՂ ՄԻՏՔ ԵՒ ԽՂՃԻ ՉԱՅՆ...Արդեօք այլ լեզուներու մէջ կա՞յ երկու հասկացութիւնները միացնող, այնքա՛ն խօսուն ԲԱՌ մը՝ ԽՂՃՄՏԱՆՔ...Սա չի խօսի՞ր արդեօք նաեւ հայկական բնիկ, ազգային հոգեբանութեան մասին, եթէ աղաւաղուած չըլլայ ան:

.....

Որքա՛ն շատ մարդիկ ճանչցած են՝ աշխարհի տարբեր քառուղիներու վրայ՝ հայ թէ օտար: Զիս հմայած է ո՛չ մարդուն ձեռքբերած հարստութիւնը, ո՛չ անոր նուաճած բարձր դիրքը թէ պաշտօնը, ո՛չ ալ անոր ապրած շքեղ ու փարթամ կեանքը: Զիս հմայած են էապէս անոր նկարագիրը, ինքնատիպ անհատականութիւնը, հարուստ ներաշխարհը, հոգիի եւ մտքի որակը եւ ամէնէն շատ անոր անկեղծութիւնը, անհաշուենկատ անմիջականութիւնը: Ասոնք են որ փնտռած են իւրաքանչիւրին մէջ, ասոնք են որ սիրած են, ասոնցմով է որ ոգեղէն կապ ու կամուրջ ստեղծուած է մեր միջեւ...Մնացեալը՝ ինձի համար սին ու փուճ ըլլալով, անհետ կորած է մտքէս ու հոգիէս:



.....

Մեր ամբողջ պատմութեան ընթացքին, մենք մեզմէ հեռացուցեր ենք մեր լաւագոյն ուժերը՝ միտքի, քաղաքականութեան, ռազմագիտութեան, տնտեսագիտութեան, գիտութեան... Եւ բոլոր բնագաւառներէն ներս, չենք հանդուրժած զանոնք, չենք գնահատած զանոնք, բարոյալքեր ենք զանոնք՝ այս կամ այն կերպով... Եւ յետոյ մնացեր ենք «ընդ աւերակաց» եւ ընդ միջակութեանց՝ թագաւոր, իշխան, հոգեւոր թէ աշխարհիկ ջոջականութիւն:

.....

Մեր քաղաքակիրթ դարը որքա՛ն է կորսնցուցած ԳԵՂԵՑԿՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԶԳԱՅՆՈՒԹԻՒՆԸ... Իսկ գեղեցկութիւնը կ'արտայայտուի ամէն բանի մէջ՝ ճարտարապետութեան, վարք ու բարքի, լեզուի, երգ ու պարի, խօսք ու բառի եւ անշուշտ արուեստի մէջ...: Ճապադութիւնը, անշնորհքութիւնը, լեզուի աղճատումը, խորհրդագուրկ արուեստը դարձեր են մեր ժամանակները յատկանշող տարրերը...: Գեղեցկութեան նման այլանդակումը ուղղակիօրէն կ'անդրադառնայ մարդ էակի բարոյական հասկացութեան վրայ եւ՝ փոխադարձաբար... ԳԵՂԵՑԿՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՎԵՐԱԳՏՆԵԼ: Սա կրնայ ըլլալ մեր ժամանակներու գերագոյն մարտահրաւերներէն մին:

.....

Ծերանալով մարդիկ կը մանկանան, կը վերադառնան իրենց հարազատ էութեան, կը վերագտնեն իրենց հոգին, որ կը թուէր ժանգոտած ըլլալ առօրեայ հեւք ու վազքի տաղտուկէն, ընկերութեան պարտադրած ձեւականութիւններէն, սին բարքերէն: Կ'ըմբռնեն որ ա՛յն ինչ կը մնայ ժամանակէն վեր՝ մարդկային սիրտն է, սէրը, փոխյարաբերութեանց անկեղծութիւնը, ջերմութիւնը: Եւ դարձեալ մանկան նման կը կառչին մարդէն, կը դառնան անկեղծ, սիրալիր իրենց խօսք ու զրոյցին մէջ... Մարդ էակը իմաստուն կը ծնի, իմաստուն ալ կը մեռնի, իսկ կեանքի ընթացքը՝ իր ոլորապտոյտին մէջ, հոգին կը հեռացնէ մարդ էակէն շատ յաճախ:

.....

Աշխարհը կառավարող ոյժի կեդրոնները միջոցներու մէջ խտրութիւն չեն դնէր՝ հասնելու համար իրենց նպատակին... Տեղ մը պատերազմ կը հրահրեն, այլ տեղ մը՝ տնտեսական տագնապ կը ստեղծեն, ուրիշ տեղ մը՝ ներքաղաքացիական կռիւներ կը բռնկեցնեն: Նպատակը մէկն է՝ աշխարհի տնտեսա-քաղաքական-ռազմական ոյժերը կերդրոնացնել իրենց ձեռքին եւ ըստ այնմ ձեռնավարել երկիրներն ու ժողովուրդները: Եւ ի՞նչ փոյթ, եթէ այդ նպատակին հասնելու ճամբուն վրայ, անմեղ կեանքեր տրորուին, երկիրներ ըլլան քարուքանդ, մարդկային ճակատագիրներ խեղուին... ԱՆՏԱՌԻ ԴԱԺԱՆ ՕՐԷՆՔՆ Է ՈՐ ԿԸ ԳԵՐԱԿԱՅԷ, միայն միջոցները կը դառնան առաւել կատարելագործուած, առաւել նրբացած ու բրտացած միաժամանակ:

.....

ՀԱՆԱՊԱԶՕՐԵԱՅ ՀԱՅԻ ՆՄԱՆ, մեզի պէտք է այսօր ՈԳԻԻ, ԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՆ ՅԵՂԱՓՈՒՅՈՒԹԻՒՆ: Մեր ոգին կարծէք ծանր քունի մէջ է, ժամանակի բեռնն տակ կքած, անտարբեր դարձած, յուսախաբ: Մեր ոգին տակաւին նիւթապաշտ եւ օգտապաշտ աշխարհի



Խա՛ւ-խա՛ւ ժանգ կապած ծանր շերտին տակ է, ինքն իրմէ կարծէք խորթացած: Ազատութեան անունով խօսող, բայց էապէս մարդկային հոգին ստրկացնող, սպառողական քաղաքակրթութեան շահախնդիր ու շահամոլ մոլուցքին է տակաւ անձնատուր եւ դեռ օտարամոլութեան, համաշխարհայնացման հայակուլ հոսանքին դէմ է կանգնած շուարուն ու մոլոր: Հայ հոգին ու ոգին, հայ գիտակցութիւնը էական կարիքը ունին հայ բնիկ մշակոյթին, հայ գիր ու գրականութենէն, հայ հոգեւոր-բարոյական արժէքներէն ներարկուող կենսայորդ ԱԻԻՇԻՆ, ամրանալու, բարձրանալու, խոյանալու համար, աշտարակուելու, ՅԵՂԱՓՈԽՈՒԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

Երան Գույումճեան

ՔԱՌԵԱԿՆԵՐ



Երջանկութիւնդ կառուցե՛
Կամքի՛ դ վրայ եւ ոգիի՛ դ,
Անոնց կրնաս վերահսկել
Ու տե՛ր դառնալ ճակատագրիդ...

.....

Իտիզդ մի՛ ծախեր՝ ի՛նչ գին ալ որ տան,
Ան քեզ ուղեցոյց մըն է հոգեթանկ,
Աստուծոյ ձայնը որ միշտ պիտ' հնչէ
Ու քեզ ետ բերէ սայթաքումներէդ:

.....



Աշխատանքն է ինքնամոռաց
Երջանկութեան հրաշք բանալին,
Զոր կը փնտռենք սին վայելքին
Եւ կը մնանք պատրանաթափ...

.....

Մանրութներէն վեր բարձրացիր
Որ կարենաս ազատ շնչել,
Հայեացքդ վառ հորիզոնին,
Արշալոյսին վարդահեղեղ...

.....

Ներքին ցեցն է մեզ միշտ խոցեր
Դուրսի բի՛ւր-բի՛ւր դաւերուն դէմ,
Մեր ամբոթիւնն է քայքայեր
Դարերն ի վար, դարերն ի վեր:

.....

Թուրքը՝ տխմար, բայց միաբան
Կրցաւ միշտ ալ հօրանալ,
Հայը՝ խելօք, բայց եսապաշտ
Պատեանին մէջ կձկուեցաւ:

.....

Մեր ԵՍ-ն էր միշտ խանգարողը,
Հատուածն էր միշտ տիրականը,
ԱԶԳ-ՊԵՏՈՒԹԻՒՆ չեղանք բնաւ,
ՆՊԱՏԱԿՈՎ միասնական:

.....

Երկիւղս երբ թօթափեցի
Դրամի, դիրքի, բարեկամի,
Դարձայ ազատ, թեւեր առի,
Միտքս ճախրեց վեր անհունին:

.....

Մի մոռնար ձեռքը գթառատ,
Որ քեզ թեւ ու թիկունք եղաւ,
Երբ միս-մինակ, ցաւը սրտիդ՝
Մղկտայիր լուռ, առանձին:

.....

Մի՛ հաւատար պարապ մարդոց,
Որոնք ոչի՛նչ, ոչի՛նչ ըրին,
Փարատելու ամպերը գորշ



Եւ երեւցան պայծառ օրին:

.....

Դիտէ, դատէ միշտ ինքնուրոյն,
Տեսածիդ լոկ արժէք մը տուր,
Հիմա մարդիկ տարբեր խօսին,
Յետոյ երթան իրենց գործին:

.....

Ապաւինէ սոսկ ուժերուդ,
Եւ ամբացի՛ր ու ամբացո՛ւր,
Անոնց յենած կրնաս շրջել
Նոյնիսկ անիւն բախտիդ նսեմ:

.....

Այսօր կը յաղթես, վաղը՝ պարտուիս,
Հիմա վերեն ես, վաղը՝ ո՛վ գիտէ,
Ակնթարթին մէջ ճակատագիր է,
Շուռ կու գայ գլխուդ, սթափ մնացիր:

Երան Գույումճեան